



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
ԵՒՐԱՄԻՈՒԹԻՒՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ՈՐ ՆՈՒԱԶԵՅՆԻ ԿԱԽՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ, ՊԱՀՊԱՆԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ. ՌՈՊԵՐՏ ՂԵՒՈՆԴԵԱՆ	5
2/7/2026	5
ԿԻՊՐԱՀԱՅ	7
ՊԱՆԾԱԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ 100-ԱՄԵԱԿԸ	7
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	10
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՏԱՆ ՄԷՁ՝ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ	10
Ո՞Վ Է ՄՏԱԽՈՐԱԿԱՆԸ	15
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԳՏԵ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ	19
ԱՐԴԱՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՇԻՆԻՉ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ	19
ՄԵԾ ԵՐԱԶԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	23
ՍՓԻՒՌՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ. ՄՐՅԱԿԻՅՆԵՐ, ԹԷ՞ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	27
ՏԵՍԱԿԷՏ	29
ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԾԱՌԱՆԱՆ,	29
ԻՄԿ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ՝ ԿԸ ԽԱՐԽԱԾԻՆ	29
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ՝ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԵՍԼԱԿԱՆ	32
ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓԻՒՌՔ. ԶԳԱՑԱԿԱՆ ԿԱՊԷՆ ԴԷՊԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ	35
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՊԱՔՈՒԷՆ ԴԻՏՈՒԱԾ	39
ԱԶԳԸ ԿԸ ԿՈՐԾԱՆԵՆ ՈՉ ԹԷ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ, ԱՅԼ ՄԵՓԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐԸ	42
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	45
ՓՈՒՆՁ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ	45
Լ Ռ ՈՒ Թ Ի Ն	50
ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ՝ ԴԺՈՒԱՐԱԳՈՅՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ	51
ԽԱԲԿԱՆՔՆ ՈՒ ԿԵՂԾԻՔԸ	54
ԵԿՈՒՐ, ԳԱԻԱԹ ՄԸ ՍՈՒՐՃ ԽՄԵՆՔ	57
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	60
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	60

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 62

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Ազգի մասին շատ կը խօսինք, կը քննարկենք, միտքեր կը փոխանակենք, առանց ճշգրտօրէն սահմանելու զայն: Եւ այնպէս կը թուի որ ան անսահմանելի, անտարազելի եզրոյթ-հասկացութիւն է: Ազգի մասին մտորումները աշխուժացան յատկապէս ՀՀ վարչապետի «Իրական Հայաստան»ի տեսութենէն կամ գաղափարախօսութենէն ետք,

ուր հայրենիքն ու ազգը կարծես սեղմուեցան Հայաստանի Հանրապետութեան պարունակին մէջ: Հարցադրումներ եղան այնուհետեւ եւ արդարօրէն թէ ո՞ր կը գտնուէր մասնաւորաբար սփիւռքի կամ սփիւռքներու հայութիւնը, որ թուաքանակով թերեւս եռակին է Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան թուաքանակին: Արդեօ՞ք այդ հայութիւնը, ամբողջութեամբ վերցուած, դուրս կը մնայ ԱԶԳէն:

Ժամանակակից աշխարհաքաղաքական եւ պետական տրամաբանութեան ընկալումներուն մէջ, ճիշդ է որ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կամ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ իրաւաքաղաքական այն կառոյցն է, որուն պատասխանատուները այդ պետութեան մէջ ապրող քաղաքացիներն են գերազանցօրէն: Անոնք են որ կ'ընտրեն երկրին իշխանութիւնը, հարկեր կը ներմուծեն, կը զինուորագրուին անոր պաշտպանութեան բանակին, ենթակայ են երկրին օրէնքներուն, կը վերահսկեն իշխանութեան գործունէութիւնը...Շարունակելով այս տրամաբանութիւնը, Հայաստանի Հանրապետութեան ճակատագիրը կը վերաբերի միայն այնտեղ ապրող քաղաքացիներուն: Անիկա պատասխանատուութիւնը չէ եւ պէտք չէ ըլլայ արտասահմանի մէջ ապրող հայութեան հատուածներուն, կամ Սփիւռքին: Սփիւռքը հետեւաբար պէտք չէ միջամուխ ըլլայ ՀՀ պետութեան գործերուն: Սա է չոր տրամաբանութիւնը ՀՀ իշխանութեանց եւ ոչ միայն:

Այս խօսույթը կը տարածուի Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական հարթակներէն, աւելի ճիշդ՝ պետական քարոզչամեքենայով քիչ մը ամենուր:

Բայց ԱԶԳԸ շատ աւելին է քան պետութիւնը կամ պետականութիւնը: Անոր բաղադրիչը եթէ միայն ՀՀ քաղաքացիներն են, ի՞նչ պիտի ըլլայ դերակատարութիւնը սփիւռքի կամ սփիւռքներու հայութեան, աշխարհացրիւ այն համայնքներու հայութեան, որ նոյն այդ հայութեան մեծամասնութիւնն է, թուական առումով: Աւելին. Սփիւռքը հայկական



քաղաքակրթական բազմաազգաբամեայ ժառանգութեան մէկ կարեւոր մասն է, համաշխարհային համահայկական ցանցային կազմակերպութիւն ըլլալէն անդին:

Յստակ է որ Հայաստանի պետութիւնը չունի, չունեցաւ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ կամ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ օրակարգ եւ չի վարեր ՀԱՄԱԶԳԱՅԻՆ քաղաքականութիւն: Հայաստանի վերանկախացումէն ի վեր, Հայաստանի Հանրապետութիւնը երբեք իր մտահոգութեանց առանցքը չդարձուց հայ ազգի վերապրումի գերխնդիրը: Հայապահպանութեան եւ հայակերտումի կարեւորագոյն եւ հրատապ խնդիրները չկազմեցին երբեք անոր օրակարգը: Չփորձեց երբեք Հայաստանն ու Սփիւռքը միաւորող ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ եւ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐ կամ ՏԵՍԼԱԿԱՆ մը ստեղծել, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ, որուն շուրջ կարելի ըլլար լեզուական, կրթամշակութային, լոպպիիստական կամ քարոզչական եւ այլ նպատակաւազ աշխատանք տանիլ պետական մակարդակով: Մոռացութեան տրուեցաւ այն կարեւոր հանգամանքը թէ Հայաստանի Հանրապետութիւնը մեր պատմական հայրենիքի մի մասն է սրտաչափ եւ սրտի չափ թանկ: Անիկա լոկ ֆիզիքական հողատարածք չէ, այլ գերազանցօրէն ՈԳԵՂԷՆ ՏԱՐԱԾԹ է, որուն ներկան ու ապագան կը պայմանաւորէ համայն հայութեան յարատեւումը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Եւ այսպէս, ցարդ Հայաստանի Հանրապետութեան վարիչները Սփիւռքէն ակնկալեցին գերազանցօրէն նիւթական միջոցներ, ներդրումներ... ամբողջովին անտեսելով Սփիւռքի գաղափարները, մտածողութիւնը, գիտելիքը, մասնագիտական ներոյժը, փորձառութիւնը, հոգեմտաւոր դաշտը, անոր տազնապներն ու մղձաւանջը ինչ կը վերաբերի անոր հայ մնալու, հայօրէն յարատեւելու խնդրին, անոր հողային Դատին, Պահանջատիրութեան, անոր կազմակերպչական հարցերուն, անոր վաղուան ու գալիքին...Վկայ՝ Հայաստան-Սփիւռք վեց Խորհրդածոյցները, որոնց Հռչակագիրները յաջորդաբար զիրար կրկնեցին քիչ տարբերութեամբ եւ մնացին ձայն բարբառոյ յանապատի...: Այդ Խորհրդածոյցները դարձան կարծէք թատերական ներկայացումներ, ծիսակատարումներով եւ ցուցադրական հռետորաբանութեամբ, ընդունելութիւններով, բազմազան ելոյթներով, որոնք մատը չդրին մեր արիւնող վերքին վրայ, իսկ եթէ դրին շատ քիչերու կողմէ՝ անտեսուեցան ամբողջովին:

Այս տխուր մտայնութիւնը այս կամ այն կերպով կը շարունակուի մինչեւ հիմա, երբ Սփիւռքը, տարագիր Արեւմտահայութեան շառաւիղը նկատուող աւանդական Սփիւռքը յատկապէս, լաւագոյն պարագային, կը նկատուի որպէս մեր Հանրապետութեան համար ներդրումներ ապահովող, անոր զբօսաշրջութիւնը զարգացնող տեսակ մը աջակից, որ երբեք պէտք չէ յաւակնի իր ըսելիքը ունենալ այն գերխնդիրներուն մասին, որոնք կը վերաբերին ազգային-պետական օրակարգին, ազգային-պետական ներկային ու ապագային:

Այս մօտեցումը կը քաջալերուի մասնաւորաբար մեր թշնամիներուն թէ այսպէս կոչուած բարեկամներուն կողմէ, որոնց համար ձեռնտու է ունենալ՝ առանց Սփիւռքի Հայաստան...ջլատուած ու պառակտուած հայութիւն, մեկուսացած Հայաստանի Հանրապետութիւն, որուն ճակատագրին հետ կարելի է խաղալ շատ անելի դիրքութեամբ, քան երբ Հայաստան-Սփիւռք հզօրացած հայութիւնն է կանգնած իրենց դիմաց:



Ներկայիս, երբ աշխարհաքաղաքական յարափոփոխ իրավիճակները կը պահանջեն բոլոր մեր ոյժերու գերագոյն լարումը, ՍՓԻԻՌ-ՀԱՅԱՍՏԱՆ միացեալ ոյժերու կազմակերպուած, արդիւնաբեր կենսունակութիւնը կը դառնայ յոյժ կարեւոր ԱԶԳԻ ու մեր ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ յարատեւման համար:

Ինչ խօսք, սփիւռքը պէտք է վերակազմակերպուի: Անոր կարելիութիւնները պէտք է բազմապատկուին օգտագործելով յատկապէս ցանցային լայն հնարաւորութիւնները: Նմանապէս, Սփիւռքը պէտք է դուրս գայ իր նեղ-կուսակցական շահերէն ու նկատառումներէն, զինուի գերազանցօրէն ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻՈՎ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՄԲ: Իսկ Հայաստանի պետականութիւնը, որ ունի պետական բոլոր միջոցները՝ դիւանագիտական, պաշտպանական, ենթակառոցներու համակարգ, տնտեսական պիւտճէ թէ այլ միջոցներ, պարտի ձեռք երկարել սփիւռքին կամ սփիւռքներուն, հզօրացնելու համար ՀԱՅՈՒԹԻՒՆՆ ու ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱԶԳՆ ու ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Այլ խօսքով, ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌ համագործակցութիւնը պէտք է ստանայ նոր որակ ու մակարդակ, նոր իմաստ ու բովանդակութիւն, քանզի անոնք իրարմով են զօրաւոր:

Կ'ապրին ու կը յառաջդիմեն այն ազգերն ու երկիրները որոնք գիտեն նպատակասլաց կերպով ինքնակազմակերպուիլ եւ արդիւնաւորել իրենց կարելիութիւնները եւ միացեալ ներոյժը: Ճգնաժամային եւ բարդագոյն այս ժամանակաշրջանին եւ նոր աշխարհակարգի ձեւաւորման այս հանգրուանին ի մասնաւորի, ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌ հաւաքական ոյժը՝ քաղաքակրթական, տնտեսական, գիտական, ժողովրդագրական, քարոզչական եւ այլ ոլորտներէն ներս, աւելի քան հրամայական է մեր Հանրապետութեան երթին եւ հայկականութեան յարատեւման համար:

Իրաւացիօրէն ըսուած է. «Ազգեր չեն մեռնիր, այլ ինքնասպան կ'ըլլան»: Մեր հզօր կենսունակութիւնն ու հզօրացումը գերազանցօրէն կախեալ է այն ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵՆԷՆ, զոր պարտինք ստեղծել՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌ, եւ զայն կեանքի կոչել ու արդիւնաւորել համապատասխան ծրագրաւորումով եւ միասնական տքնաջան աշխատանքով յանուն ՀԶՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԶՕՐ ԱԶԳԻ ԿԵՐՏՈՒՄԻՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԵՒՐԱՄԻՈՒԹԻՒՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ՈՐ ՆՈՒԱԶԵՑՆԻ ԿԱԽՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ, ՊԱՀՊԱՆԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ. ՌՈՊԵՐՏ ՂԵԻՈՆԴԵԱՆ

2/7/2026

«Մեդիալարի» հարցերին պատասխանում է քաղաքագետ Ռոբերտ Ղեւոնդեանը

– Պարո՛ն Ղեւոնդեան, աւարտուեց Եւրոպական յանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի այցը Հայաստան, ինչպէ՞ս կը գնահատէք այն, ի՞նչ մեպիջներ (ուղերձներ) փոխանցեց Լայենը Հայաստանի իշխանութեանը:



– Կարելի է ասել, որ այցելութիւնը բաւական երկար ժամանակ կատարուած բարդ աշխատանքի արդիւնքների ներկայացման փուլ էր, այսինքն՝ ձեռք բերուած համաձայնութիւնները ձեւաւորուել էին ամիսների ընթացքում՝ տարբեր բանակցութիւնների ժամանակ: Այս այցի ժամանակ կողմերը փաստացի ամրագրեցին այն վերջնական արդիւնքներն ու պայմանաւորութիւնները, որոնց ուղղութեամբ պէտք է շարժուեն:

Շատ կարեւոր է Եւրամիութեան կողմից տնտեսական աջակցութեան առաջարկները, փաստացի, Փաշինեանը եւս ընդգծեց, որ Հայաստանը միակ երկիրն է, որը Եւրամիութեան անդամ չէ, Եւրամիութեան հետ չունի ազատ առեւտրի համաձայնագիր, բայց այս ռեժիմով կարող է առեւտուր անել Եւրամիութեան հետ, ինչեւ էականօրէն բարձրացնում է Հայաստանի կշիռը ոչ միայն Եւրամիութեան համար, այլեւ ընդհանրապէս միջազգային յարաբերութիւններում:



– Տնտեսական այդ աջակցութիւնը, որի մասին ասում էք, ոմանց կարծիքով հողի վրայ այդքան էլ իրատեսական չէ, դուք նկատո՞ւմ էք իրական քայլեր, որ անում է Եւրամիութիւնն իր շուկան Հայաստանի տնտեսութեան համար բացելու ուղղութեամբ:

– Որոշ ուղղութիւններով աշխատանքներ արդէն կան, գիտենք, որ հայկական գիւղմերք արդէն արտահանում է եւրոպական որոշ երկրներ, թէեւ նշեմ, որ շատ հետաքրքիր զարգացումներ տեղի ունեցան վերջին մէկուկէս ամսում. Ռուսաստանի կողմից տնտեսական սահմանափակումների իբրեւ հետեւանք՝ բացուեցին այնպիսի շուկաներ, որոնք նախկինում, հաւանաբար Հայաստանի տնտեսվարողների թերի աշխատանքի պատճառով, յայտնաբերուած չէին Հայաստանի համար:

Մասնաւորապէս նշեմ, որ ելակը, որը պէտք է արտահանուէր Ռուսաստան, փաստացի նոյն քանակութեամբ արտահանուել է հիմնականում Սաուդիան Արաբիա, Արաբական Միացեալ Էմիրութիւններ: Այսինքն՝ պարզուեց, որ կան շուկաներ, որոնք հետաքրքրուած են Հայաստանի արտադրանքով, բայց քանի որ ռուսական շուկան, կարելի է ասել, ամբողջութեամբ կլանում էր այդ ապրանքները, տնտեսվարողներն էլ այլ շուկաներ փնտռելու կարիք չունէին:

Իհարկէ ոչ բոլոր ապրանքների դէպքում արտահանումը եղաւ ամբողջովին, օրինակ՝ ծաղիկների դէպքում, բայց դա էլ նորմալ է, որովհետեւ ծաղկի շուկայի դիվերսիֆիկացումը բաւականին բարդ է: Աշխատանքի մեծ տեղ դեռ կայ, բայց նոյն Եւրամիութիւնն կարող է օգտակար լինել, բայց նաեւ ակնյայտ է, որ կան կամք, հետաքրքրութիւն, առաջին հերթին՝ քաղաքական նկատառումներով, դա ակնյայտ է:

-Պարո՛ն Ղեւոնդեան, ձեր նշած քաղաքական նկատառումներով Եւրամիութեան աջակցութիւնը Հայաստանին որոշ շրջանակներում մտահոգութիւն է առաջացնում: Կայ տեսակէտ, որ ԵՄ-ն այս կերպ Հայաստանին դարձնում է Ռուսաստանի դէմ հակազդեցութեան գործիք: Դուք այս մօտեցման մէջ ռիսկեր տեսնո՞ւմ էք:

– Ես չեմ պատկերացնում, թէ Հայաստանն ինչպէս կարող է զէնք լինել Ռուսաստանի դէմ: Եւրամիութիւնը պատժամիջոցների տակ չէ, որ Ռուսաստանից, օրինակ, մենք ապրանքներ արտահանենք Եւրամիութիւն, ինչին դէմ կը լինի Ռուսաստանը, նման իրավիճակ չկայ, ընդհակառակը՝ Ռուսաստանն է պատժամիջոցների տակ, ու ինքը կարող է Հայաստանին զէնք օգտագործել Եւրամիութեան դէմ:



Եթէ խօսքը քաղաքական տիրոյթի մասին է, ապա այստեղ եւս չեմ պատկերացնում, թէ Հայաստանն ի՞նչ կարող է անել Ռուսաստանի դէմ. գետնի վրայ ճակատ բացել Ռուսաստանի դէմ չի կարող, չկայ Հայաստանի շուրջ կոնֆլիկտ, որին կողմ լինի Ռուսաստանը, ու Հայաստանը այդ կոնֆլիկտը չի կարող կիրառել Ռուսաստանի դէմ, այսինքն՝ հնարաւոր չէ Հայաստանը զենք դարձնել Ռուսաստանի դէմ:

Այլ հարց է, որ Ռուսաստանը ցանկանում է Հայաստանը պահել իրենից կախուածութեան մէջ, իսկ Հայաստանը չի ցանկանում դա, ու Եւրամիութիւնն օժանդակում է Հայաստանին, որ նուազեցնի կախուածութիւնը Ռուսաստանից, պահպանի ինքնիշխանութիւնը: Նման մտքեր արտայայտողների մօտ, թէ՛ Ռուսաստանում, թէ՛ Հայաստանում, ես չեմ կարծում, թէ կայ առողջ տրամաբանութիւն, որ այդ թեմայով բանավէճի բռնուենք:

Քրիստինէ Աղաբեկեան

MediaLab.am

ԿԻՊՐԱՀԱՅ

ՊԱՆԾԱԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ 100-ԱՄԵԱԿԸ



Մելգոնեան կրթական հաստատութեան 100րդ տարեդարձը տօնելու համար՝ հարիւրէ աւելի մելգոնեանցիներ փութացած էին Նիկոսիա (Կիպրոս): Չարմանք առթող երեւոյթ է դպրոցին փակումէն 20 տարի ետք դեռ տեսնել նախկին սաներու անխափ կապուածութիւնը, նուիրումն ու խանդաղատանքը իրենց կրթական հաստատութեան հանդէպ: Շատերու


համար դպրոցը դարձած է իրենց ինքնութեան կերտման հիմնաքարը, պատանեկութեան ամենայիշատակելի ժամանակաշրջանը: Թէեւ անոնք Մելգոնեան Կրթական Հաստատութիւն գալով՝ իբրեւ գիշերօթիկ աշակերտ, հեռացած են իրենց ծնողներէն, սակայն կարծեք այդ բաժանումը վերածուած է օրհնութեան:



զարմանալիորեն մեծ է իրարու հետ ամուսնացած եւ ընտանիք կազմած մելգոնեանցի զոյգերուն թիւը:

Այս պարունակին մէջ երկու յատկանիշ եւս կարեւոր է յիշել. առաջինը՝ նախկին սաներու իրարու հանդէպ տածած եղբայրական զգացումն է:

Մելգոնեանցիները մեծ ընտանիք մը կը կազմեն, իրարու կը վերաբերին քոյրեղբոր նման՝ այն աստիճան, որ ոչ մելգոնեանցիները զիրենք ձեռով մը տարբեր, նոյնիսկ օտարական կը զգան անոնց միջավայրին մէջ: Երկրորդ՝



Հարիւրամեակի տօնակատարութիւնները լաւագոյն առիթն էին անդրադառնալու Մելգոնեան եղբայրներու

տեսլապաշտ նախաձեռնութեան. անոնք

Արեւմտահայաստանէն տարագիր ու հայրենագուրկ հայութեան կրթական կարիքներու հոգածութիւնը համարած էին կարեւորագոյն առաքելութիւն՝ իրենց ամբողջ հարստութիւնը կտակելով այդ գերագոյն նպատակին: Վայրի ընտրութիւնը եւս ռազմավարական նշանակութիւն ունէր: Հարկաւոր էր նպատակայարմար ու ապահով վայր մը, որ առաւելագոյն չափով հասանելի ըլլար տարագիր հայութեան: Ո՛չ Միջին Արեւելքը, ո՛չ Եւրոպան, ո՛չ Լիբանանն ու Սուրիան, ո՛չ ալ Յունաստանը, ուր տարագիր ու որբ հայերու մեծ համախմբումներ կային: Հաստատութեան կայքին համար Կիպրոսի ընտրութիւնը

շատ խելամիտ էր. կողի մը, որ մօտիկ էր հայկական գաղթավայրերուն: Այս ընտրութիւնը ժամանակի ընթացքին ցոյց տուաւ իր առաւելութիւնը եւ հետզհետէ դարձաւ աւելի ու աւելի բարենպաստ: Բացի 1974ի թրքական յարձակումէն, որ պատճառ դարձաւ կողգիի բաժանումին՝ ստեղծելով քաղաքական ու ընկերային տագնապներ եւ բազմաթիւ կիպրահայեր մղելով արտագաղթի,



Կիպրոսը մինչեւ այսօր կը մնայ Միջին Արեւելքի քաղաքականապէս միակ կայուն ու բարգաւաճ երկիրը, որ միաժամանակ Եւրոպական Միութեան անդամ է: Իսկ հայ համայնքին համար՝ անիկա ամէնէն բարենպաստ երկիրն է. միակ պետութիւնն է, որ արեւմտահայերէնը ճանչցած է իբրեւ փոքրամասնութեան լեզու՝ ապահովելով պետական հոգածութիւն: Այսպէս, Կիպրոսի կառավարութիւնը ամբողջութեամբ կը հոգայ կղզիի շուրջ 3000 հաշուող հայ համայնքի բոլոր կրթական ծախսերը՝ Նարեկ վարժարաններու ուսուցիչներու վարձատրութիւնը, աշակերտներուն գիրքերու անվճար բաշխումը, դպրոցներու շինարարական ու բարենորոգման ծախսերը, ինչպէս նաեւ եկեղեցւոյ պաշտօնէութեան վարձատրութիւնը:

Մելգոնեան եղբայրները իրենց կտակով հիմքը դրին սփիւռքի կարեւորագոյն հաստատութիւններէն մէկուն: Մեծ եղեռնէն ետք սփիւռքը ունեցած է բազմաթիւ նշանաւոր կրթական հաստատութիւններ, ինչպէս՝ Մխիթարեան վարժարանները, ապա ճեմարանները, աւելի ուշ՝ Հայկազեան համալսարանը, սակայն Մելգոնեան եղբայրներուն կառոյցը կը հանդիսանայ առաջին սփիւռքեան համազգային կրթական հաստատութիւնը:

Անհրաժեշտ է երախտագիտութեամբ յիշել ՀԲԸՄի սկզբնական շրջանի ղեկավարութեան կարեւոր դերը, որ իբրեւ Մելգոնեան եղբայրներու կտակակատար՝ յաջողեցաւ իրականացնել անոնց տեսլականն ու գերազանցել սպասումները: Իբրեւ որբանոց հիմնուած հաստատութիւնը վերածուեցաւ կրթական որակեալ կեդրոնի, սփիւռքի առաջին նոր կրթեալ սերունդը հասցնող կրթարանի, որուն սաները ապագային հանրային ու տնտեսական հաստատութիւններու մէջ ղեկավար դիրքեր պիտի գրաւէին:

Մակայն, պատմութիւնը կրնայ նոյն երախտագիտութեամբ չիշել նոյն հաստատութեան ներկայի դեկավարութիւնը, որ հակառակ հիմնադիրներու կամքին ու տեսականին, 2005ին որոշեց փակել դպրոցը՝ կալուածը վաճառելու նպատակով, ի գործ դնելով ոչինքնաբաւ հաստատութիւնները փակելու իր շուկայապաշտական նոր վարդապետութիւնը: Որոշում մը, որուն մինչեւ օրս դեմ կ'արտայայտուին նախկին սաներն ու հանրային կարծիքը: Մակայն, քանի դեռ դպրոցին կալուածը չէ վաճառուած, վերջին խօսքը տակաւին ըսուած չէ եւ որեւէ շրջադարձ կրնայ պատահիլ:

ԺԻՐԱՅՐ ԶՈՒԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

1/7/2026

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՏԱՆ ՄԷՋ՝ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ

ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

Դռկտոր Ընկերալեզուարանութեան



Յառաջարան

Գիտէիք, թէ երկրագունդի 7000-է աւելի լեզուներու հսկայ ովկիանոսին մէջ մեր արեւմտահայերէնը կը փայլի իբրեւ հնագոյն ու ազնուական գանձ մը, որուն տէր կանգնիլը մեր մեծագոյն հպարտութիւնն է:

Մայրենին իւրաքանչիւր ազգի գոյութեան ամէնէն խորունկ հիմնաքարն է, իսկ

տունը՝ այդ հիմնաքարը կերտող առաջին ու անփոխարինելի դարբնոցը: Այսօր սփիւռքեան համաշխարհային իրականութեան մէջ մեր առջեւ կը պարգուի հրաշալի կարելիութիւն մը. ընտանիքները սիրով ու գիտակցութեամբ կը հրաւիրուին աւելի աշխուժօրէն արմատաւորելու տան մէջ մայրենին խօսելու կենսատու աւանդութիւնը: Այս մտերմիկ միջավայրն է, որ մանուկը կը կապէ իր արմատներուն եւ կ'ապահովէ հարուստ մշակոյթներու պայծառ ու անխախտ ապագան: Աշխարհի բոլոր գիտակից ժողովուրդներուն նման, որոնք կը գուրգուրան իրենց լեզուական ժառանգութեան վրայ, մենք եւս ունինք նոյն նախանձախնդրութիւնը:

Մեր նախորդ յօդուածը քննեց հայկական ընտանեկան յարկերուն տակ արեւմտահայերէնի միջսերնդային փոխանցման ներկայ ընթացքն ու անոր դրդապատճառները: Այս յօդուածին մէջ, փոխանակ կեդրոնանալու հայ ծնողներու տան մէջ հայերէն չխօսելու բացասական հետեւանքներուն վրայ, պիտի կեդրոնանանք տան մէջ հայերէն խօսելու դրական



կողմերուն վրայ եւ ապա ներկայացնենք արեւմտահայերէն խօսելու ռազմավարութիւնը գործադրելու միջոցներ:

Ընտանեկան Կապերու եւ Արժէքներու Զարգացումը

Երբ տան մէջ կը խօսուի արեւմտահայերէն, ընտանիքին մէջ կը ստեղծուի սերունդները միացնող կենդանի կամուրջ մը, որ իրարու կը կապէ անցեալը, ներկան եւ ապագան: Այս հաղորդակցութեան շնորհիւ՝ թոռնիկները կրնան անմիջականօրէն հաղորդակցիլ իրենց մեծ հայրերուն ու մեծ մայրերուն հետ՝ ընկալելով մեր բանաւոր պատմութեան, նրբերանգներուն եւ մշակութային իմաստութեան հսկայական շտեմարանը:

Լեզուն միայն տեղեկութիւն փոխանցելու միջոց չէ, այլ՝ զգացումներ արտայայտելու աշխարհ: Հայերէնի յատուկ քնքշանքի բառերը, ինչպէս՝ «հոգիս» կամ «ձագուկս», եւ մեծ հայրերու ու մեծ մայրերու օրհնանքները ընտանեկան յարաբերութիւններուն կու տան իւրայատուկ հարազատութիւն եւ բնական ջերմութիւն:

Տան մէջ հարազատ լեզուով խօսիլը նաեւ կը բարձրացնէ ծնողական հեղինակութիւնն ու փոխադարձ յարգանքը: Երբ ընտանիքը կը հաղորդակցի իր հարազատ միջավայրին մէջ, լեզուն կը դառնայ միացնող տարր, որ մանուկները կը պահէ ընտանեկան լուրջ խօսակցութիւններուն եւ անցեալի յուշերուն մասնակից: Այս ձեւով հայերէնը կը դառնայ բաց եւ վստահելի մթնոլորտ ստեղծելու գրաւականը:

Մեր լեզուն իրեն հետ կը բերէ բարոյական եւ ընկերային բարձր արժէքներ: Արեւմտահայերէնը ունի ընտանիքի, յարգանքի եւ հաւաքական պատասխանատւութեան յատուկ ընկալումներ, որոնք կը նպաստեն, որ մանուկը մեծնայ հաւասարակշռուած արժեհամակարգով: Լեզուի ճամբով ընտանեկան օրհնութիւնները՝ Ս. Ծնունդ, Ս. Զատիկ, եւ յիշատակի օրեր, կը ստանան իրենց իսկական խորհուրդը՝ դառնալով ապրող ու ոգեշնչող տօնակատարութիւններ:

Զուակներուն Հոգեբանական Անդորրը եւ Ինքնութեան Ծաղկումը

Մանուկին համար հայերէնին տիրապետելը ժառանգուած ինքնութեան ամրապնդումն է: Լեզուն պարզապէս հաղորդակցութեան գործիք մը չէ, այլ՝ մշակոյթի եւ ինքնայատուկ աշխարհահայեացքի ճանաչողական քարտէսը: Այս քարտէսով օժտուած հայ երիտասարդը կը մեծնայ ինքնութեան յստակ գիտակցութեամբ՝ ունենալով զայն ապրելու եւ արտայայտելու ներքին հարուստ բանալին:

Տան մէջ լեզուի քաջալերանքը մանուկին ենթագիտակցութեան մէջ կը սերմանէ սեփական ինքնութեան հանդէպ հպարտութեան եւ արժեւորման զգացում: Երբ ծնողները նախապատուութիւնը կու տան հայերէնին, մանուկը կը հասկնայ, որ մայրենին բարձր արժէք ունի եւ յաջողութեան լաւագոյն երաշխիքներէն մէկն է: Անոնք կը դառնան իրենց պատկանած մշակոյթի կերտողն ու կրողը՝ քալելով ինքնավստահութեամբ:

Երբ այս երիտասարդները կը գտնուին հայկական միջավայրի մէջ, անոնք իրենք զիրենք լիարժէք հայ կը զգան: Լեզուի տիրապետումը անոնց կու տայ վստահութիւն՝ ազատօրէն մասնակցելու համայնքային կեանքին եւ հայկական հաւաքներուն, միշտ սիրով ու ջերմութեամբ ընդունուելով շրջապատին կողմէ: Ասիկա կը ստեղծէ ներքին խաղաղութիւն, որուն շնորհիւ անոնք հպարտութեամբ կը կապուին իրենց արմատներուն:



Տարիքի բերումով, երբ երիտասարդը կը սկսի արժեւորել իր արմատները, անոր մէջ կը ծնի երախտագիտութեան խոր զգացում իր ծնողներուն հանդէպ, որոնք կամրջեցին դարաւոր շղթան: Ան կը զգայ, որ հարազատօրէն շարունակողն է իր նախնիներու յիշատակին: Այսպիսի անհատներ կրնան ամբողջութեամբ նոյնանալ թէ՛ հայութեան եւ թէ՛ տեղական մշակոյթին հետ՝ դառնալով երկու աշխարհներու հարստութիւնը վայելող օրինակելի քաղաքացիներ: Անոնք կ'ունենան կատարեալ պատկանելիութեան զգացում, ինչ որ հոգեբանական մեծ ապահովութիւն կը ջամբէ իրենց կեանքին:

Լեզուական Կենսունակութեան Տնտեսական եւ Գործնական Առաւելութիւնները Սփիւռքի Մէջ

Այսօրուան համաշխարհայնացած շուկային մէջ բազմալեզուութիւնը մեծ հարստութիւն է: Արեւմտահայերէնին տիրապետող երիտասարդը ունի յաւելեալ լեզուական հմտութիւն, որ լայն դուռ կրնայ բանալ միջազգային յարաբերութիւններու, թարգմանական, դիւանագիտական եւ առեւտրական մարզերէ ներս: Լեզուներու տիրապետող հայ երիտասարդը կը դառնայ բազմակողմանի զարգացած անհատ՝ պահելով իր աշխատանքային իւրայատկութիւնն ու բարձր արժէքը:

Սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող հսկայական հաստատութիւնները՝ հայկական դպրոցներ, հրատարակչատուններ, թերթեր, մշակութային կեդրոններ ու միութիւններ, կը ծաղկին, երբ նոր սերունդը կը խօսի հայերէն: Ասիկա կ'ապահովէ՝ մեր կառոյցներուն կենսունակութիւնը, դպրոցներու աշխուժութիւնը, գիրքերու ու թերթերու տարածումը եւ միութիւններու բազմամարդութիւնը: Այս ձեւով կ'արժեւորուին հայկական միլիոնաւոր կալուածներն ու հիմնադրամները՝ ծառայելով իրենց բուն նպատակին:

Հայկական սփիւռքը աշխարհասփիւռ գործօն ցանց մըն է: Արեւմտահայերէնը այն հարազատ բանալին է, որ իրարու կը կապէ Պէյրութի, Լոս Անճելըսի, Փարիզի կամ Տուպայի հայ գործարարները: Լեզուին տիրապետող հայ երիտասարդը լիարժէքօրէն կ'օգտուի այս համաշխարհային ցանցէն՝ ընդլայնելով իր սեփական գործը եւ վայելելով հզօր համայնքային թիկունք մը:

Լեզուի կենդանի պահպանման շնորհիւ, հայկական կազմակերպութիւնները՝ բարեգործական, քաղաքական եւ մշակութային, միշտ կ'ունենան պատրաստուած, երկլեզու եւ տաղանդաւոր ղեկավարներ, տնօրէններ ու խմբագիրներ: Ընդունակ երիտասարդները, տիրապետելով մայրենիին, յառաջապահ դիրքեր կը գրաւեն ազգային գործերէ ներս՝ ապահովելով մեր համայնքներու մակարդակի շարունակական բարձրացումն ու վերելքը:

Երկլեզուութեան Առաւելութիւնները

Երկլեզուութիւնը պարզապէս երկու բառարան ունենալ չէ ուղեղին մէջ, այլ՝ երկու տարբեր աշխարհընկալումներու տիրապետել: Երբ երեխան տան մէջ կը մեծնայ արեւմտահայերէնով, իսկ դուրսը՝ տեղական լեզուով, անոր հոգեկան եւ մտային աշխարհը կ'օժտուի իւրայատուկ առաւելութիւններով:

Երկլեզու երեխաները ունին աւելի զարգացած մտային ճկունութիւն եւ գործադիր համակարգ: Անոնք դիւրութեամբ կը կեդրոնացնեն իրենց ուշադրութիւնը՝ զատելով կարեւոր տեղեկութիւնը պարզ աղմուկէն, եւ ունին բարդ խնդիրներ լուծելու բարձր կարողութիւն: Գիտականօրէն փաստուած է, որ մանկութենէն երկու կամ աւելի լեզուներով մեծցողներու ուղեղը աւելի ճկուն կ'ըլլայ, ինչ որ կը դիւրացնէ նաեւ օտար լեզուներու արագ



ստրվիլը: Տան մէջ հայերէնը կենդանի պահելով՝ ծնողները իրենց զաւակներուն կը պարգեւեն բնական մտային մարզանք մը, որ մեծապէս կը նպաստէ անոնց դպրոցական ու համալսարանական յաջողութիւններուն:

Լեզու մը ստրվիլը նաեւ զգացումներ արտայայտելու նոր ձեւերու տիրապետել է: Արեւմտահայերէնը ունի քնքշանքի, յարգանքի եւ ընտանեկան սիրոյ այնպիսի նրբերանգներ, որոնք իւրայատուկ են: Երկլեզու երեխան կրնայ իր զգացական աշխարհը ձեւաւորել աւելի հարուստ գոյներով՝ դառնալով հոգեպէս աւելի հաւասարակշռուած: Այսպիսի երեխաներ կանուխէն կը հասկնան, որ բառերը խորհրդանշներ են, ինչ որ անոնց կու տայ վերացական մտածողութեան մեծ առաւելութիւն՝ նպաստելով թուաբանութեան, գիտութեան եւ ստեղծագործական մարզերու մէջ:

Երկու լեզուի եւ մշակոյթի մէջ մեծցող մանուկները աւելի դիւրին կրնան իրենց անձերը դնել ուրիշին տեղը: Անոնք կանուխէն կը հասկնան, որ մարդիկ աշխարհին կրնան նայիլ տարբեր տեսանկիւններէ, ինչ որ զիրենք կը դարձնէ աւելի բաց, հանդուրժող եւ ընկերային:

Գիտնալէ ետք տան մէջ հայերէն խօսելու այս բոլոր դրական կողմերը, եկէ՛ք, այժմ միասին նայինք դէպի յառաջ եւ ընդգծենք մեր յառաջընթացի գործնական ուղիները:

Տնային Վերակենդանացման Ռազմավարութիւններ

- Ընկերալեզուաբանական ամենէն զօրեղ կառոյցը «Տան մէջ մայրենի լեզու» ռազմավարութիւնն է: Այս մօտեցումը տունը կը վերածէ լեզուական ապաստանի, ուր հայերէնը կէանքի բնական ու հարազատ միջոցն է:
- Ընկերալեզուաբանութիւնը ցոյց կու տայ, որ մանուկները գործնական են եւ բնականաբար կը հակին դէպի նուազագոյն ճիգի ճամբան: Հետեւաբար տունը որպէս լեզուական ապաստան պահելու համար լաւագոյն լուծումը ծնողական սիրալիր հաստատակամութիւնն է՝ տան պատերէն ներս միշտ նախապատուութիւնը տալով հայերէնին: Ասիկա կը ստեղծէ հարազատ ու միասնական լեզուական միջավայր մը:
- «Խոհանոցային հայերէնի» սահմանափակ պատկերէն անդին անցնելու համար ընտանիքը կրնայ սիրով ընդլայնել լեզուական մակարդակը: Ասիկա կարելի է իրագործել տան մէջ արեւմտահայերէնով հետաքրքրական նիւթեր, գիտութիւն, պատմութիւններ կամ զգացումներ քննարկելով: Երբ մանուկը բառ մը կը պակսեցնէ, ծնողը կրնայ զայն մատուցել որպէս գեղեցիկ «նուէր» եւ ոչ թէ որպէս սրբագրութիւն՝ պահպանելով զաւակին դրական հոգեվիճակը: Ասիկա կ'ամրապնդէ մանուկին լեզուական ինքնավստահութիւնը:
- Ծնողներու միջեւ արեւմտահայերէն խօսելու սովորութիւնը վերակենդանացնելու լաւագոյն ձեւերէն մէկը տան մէջ յատուկ «լեզուական գօտիներ» հաստատելն է: Օրինակ՝ խոհանոցը կամ հիւրասենեակը կրնան նկատուիլ միայն հայերէնի յատկացուած տարածքներ, ուր հայերէն խօսիլը միշտ կը քաջալերուի:
- Ծնողներ կրնան որդեգրել «15 վայրկեանի կանոնը»՝ պայմանաւորուելով տուն վերադառնալէ ետք առաջին քառորդ ժամը խօսիլ բացառապէս մայրենիով, որպէսզի լեզուական անցումը աւելի բնական ըլլայ:



- Առօրեայ հաղորդակցութեան թուային դաշտը փոխելը եւս մեծապէս կ'օգնէ. հեռախօսային կարճ հաղորդագրութիւնները հայերէն տառերով գրելը կամ ձայնագրելը կրնայ վերածուիլ մնայուն եւ ազդու սովորութեան (կարելոր է ուղղագրական սխալները սիրով սրբագրել կամ երբեք չի սրբագրել, բայց միշտ քաջալերել զուակը):
- Զուակներուն հետ հայերէն խօսելու ամենէն տարածուած ու յաջող դրութիւններէն մէկը «Մէկ ծնող, մէկ լեզու» ռազմավարութիւնն է, ուր անելի սահուն հայերէն խօսող ծնողը մանուկին հետ միայն մայրենիով կը հաղորդակցի, իսկ միւսը՝ տեղական լեզուով:
- Կարելոր է նաեւ լեզուն կապել օրուան կանոնաւոր սովորութիւններուն հետ. օրինակ՝ լոգանքի ժամը, նախաճաշը կամ քնանալէ առաջ հեքիաթ կարդալու պահը կրնան ըլլալ միայն հայերէնով:
- Փոքրիկներու պարագային, «կեանքը պատմելու» ձեւը հրաշքներ կրնայ գործել, ուր ծնողը իր ամէն մէկ շարժումը կամ ըրած գործը բարձրաձայն կը նկարագրէ պարզ բայերով ու նախադասութիւններով, ինչ որ կրնայ հարստացնել մանուկին բառամթերքը:
- Լեզուն պարտականութեան չվերածելու համար կարելի է զայն ներառել հաճելի ժամանցի եւ խաղերու մէջ: Ինքնաշարժով ճամբորդութիւններուն կամ տան խաղերու ընթացքին կարելի է միշտ մանկական արեւմտահայերէն երգեր կամ ձայնագիր պատմուածքներ մտիկ ընել, ինչ որ երեխային ականջը կը վարժեցնէ ճիշդ հնչիւններուն:
- Ծանօթ ու աւանդական խաղերը, ինչպէս՝ «Կը տեսնեմ բան մը...», (I Spy) կամ «Միմոնը ըսաւ...» (Simon Says), կամ այբուբենի խաղը, ուր իւրաքանչիւր տառով կը կազմուի բառ մը, օրինակ՝ «Ա» տառով. «Անունս Անի է, Արուեստագէտ եմ եւ կ'ապրիմ Ալպանիա»: Այսպէս, խաղալով ու խնդալով հայերէնով, լեզուն բնականօրէն կը մտնէ առօրեային մէջ, եւ մանուկները առիթ կ'ունենան ուրախ մթնոլորտի մէջ նոր բառեր սորվելու:
- «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան աջակցութեամբ ստեղծուած <https://www.zndoog.com/> կայքը հիանալի աղբիւր է ծնողներուն համար: Այնտեղ զետեղուած են գիրքեր, տեսերիզներ, խաղեր եւ բազմաթիւ գործիքներ՝ մանուկներու լեզուական զարգացման համար: Յատկանշական ծրագիրներէն են «Պատառիկներ»՝ մանկական ձայներիզներու շարք մը, լեցուն ուրախ խաղերով, շուտասելուկներով եւ երգերով, եւ «Ձեռք ձեռքի» մանկապարտէզի համապարփակ ծրագիր, որ երգի եւ աւանդական գիտելիքներու ընդմէջէն կը զարգացնէ երեխային լեզուական կարողութիւնները:
- «Բարեւ արեւ»
<https://www.youtube.com/@parevarev>; <https://www.facebook.com/parev.arev>; <https://abrilbooks.com/publisher/parev-arev/> հեղինակ եւ պատկերազարդող՝ Անահիտ Մարգրիսեան, նախաձեռնութիւնը հրաշալի միջոց մըն է արեւմտահայերէնը հաճելի ու ստեղծագործ ձեւով տան մէջ կենդանի պահելու: Գեղեցիկ պատկերազարդուած



գիրքերու եւ գծանկարային (animated) տեսահոլովակներու միջոցով, անիկա լեզուի ուսուցումը կը վերածէ ընտանեկան, համագործակցային եւ հրապուրիչ խաղի մը:

Ամենօրեայ փոքր քայլերով եւ ուրախ մթնոլորտով կրնանք հայերէնը դարձնել մեր տուններուն ամենէն բնական ու սիրելի շունչը: Ի վերջոյ, տան մէջ արեւմտահայերէն խօսիլը միայն լեզու պահպանել չէ, այլ՝ մեր զաւակներուն նուիրել հարուստ ինքնութիւն եւ ապահով ապագայ կերտելու լաւագոյն հիմքերը:

Պահպանումէն դէպի Կենսունակութիւն՝ Նոր Ուխտ մը Մփիւռքի Համար

Ընկերալեզուաբանական տուեալները կը պարզեն սթափեցնող իրականութիւն մը, սակայն արեւմտահայերէնի պատմութիւնը անխուսափելի կորուստի մասին չէ, այլ՝ գործելու խորունկ կարելիութեան:

Արդի հայ գոյգին համար տան մէջ մայրենիով խօսելու որոշումը մշակութային դիմադրութեան արարք է եւ տեսլականով լեցուն նուէր մը՝ յաջորդ սերունդին: Որդեգրելով «Տան մէջ միայն արեւմտահայերէն» կառոյցը՝ ընտանիքները իրենց կենցաղային տարածքը կը վերածեն լեզուական ապաստանի, որ կը հակադրուի համաշխարհայնացած ձուլման ճնշումներուն: Այս նոր ուխտին մէջ հայ տունը կը վերադառնայ իր իսկական դերին՝ ըլլալու հայեցի մտածողութեան առաջին աղբիւրը:

Ծնողներու դժուարութիւններն ու վախերը յաղթահարելի են գործնական ու հաստատակամ քայլերով: Պատրաստենք սերունդ մը, որ հպարտ է իր արմատներով, հարուստ է իր մտքով, եւ երաշխաւորենք, որ մեր զաւակները ոչ թէ միայն յիշեն իրենց ինքնութիւնը, այլեւ ապրին զայն իրենց արտասանած իւրաքանչիւր բառով:

Նիկոսիա, Յունիս 2026

Ո՞Վ Է ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ



ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԷԼԵԱՆ

31/5/2026

Այսօր, երբ տեղեկութիւնները աննախադէպ արագութեամբ կը տարածուին, իսկ իմաստալից ու խորքային մտածողութիւնը հետզհետէ կը նահանջէ, «մտաւորական» հասկացողութիւնը աւելի քան երբեք դարձած է մշուշոտ եզր մը: Ընկերային ցանցերու, լայնօրէն տարածուած համոզումներու եւ հանրային մնայուն լուսարձակներու դարաշրջանին, անհրաժեշտ դարձած է վերադառնալ հիմնական հարցումի մը. ո՞վ է իսկական մտաւորականը, եւ ի՞նչ պատասխանատւութիւն ունի ան ընկերութեան եւ համայնքին հանդէպ:



Հայ իրականութեան մէջ, այս հարցը առանձնայատուկ կարեւորութիւն ունի, որովհետեւ մեր պատմութեան ընթացքին մտաւորականը միայն գրող, ուսուցիչ կամ մտածող չէ եղած, այլ շատ անգամ յեղափոխական գործիչ ու նաեւ՝ ազգային յիշողութեան, լեզուի եւ մշակոյթի պահապան: Յատկապէս սփիւռքի պայմաններուն մէջ, հայ մտաւորականութիւնը փորձած է պահպանել մեր ինքնութիւնը, ստեղծել գաղափարական տարածք եւ դիմադրել այլասերումին: Այս պատճառով ալ, այսօր, երբ հանրային կեանքը աւելի արագ, աղմկոտ եւ մակերեսային դարձած է, մտաւորականի դերին մասին մտածելը պարզ տեսական հարց մը չէ, այլ նաեւ գոյութենական անհրաժեշտութիւն մը:

Մտաւորականը պարզապէս ուսանած ու զարգացած մարդը չէ: Ան միայն գիրքեր կարդացողը, համալսարանական աստիճան ունեցողը կամ բարդ բառերով խօսողը չէ: Իրական մտաւորականը այն մարդն է, որ կը փորձէ հասկնալ իր ժամանակը, հարցականի տակ առնել ընդունուած ճշմարտութիւնները եւ բարոյական պատասխանատուութիւն զգալ ընկերութեան ու համայնքին հանդէպ:

Մտաւորականը շատ անգամ անհանգիստ մարդ մըն է: Ան չի բաւարարուիր պատրաստ պատասխաններով: Կը կասկածի, կը քննէ, կը համադրէ, կը մտածէ: Անոր գործը միայն տեղեկութիւն փոխանցելը չէ, այլ նաեւ մտածելու ձեւ ստեղծելը: Այս պատճառով ալ մտաւորականութիւնը ո՛չ պաշտօն է եւ ո՛չ ալ պարզ ասպարէզ: Անիկա հոգեկան վիճակ մըն է, հասարակական դիրքորոշում մը եւ որոշ իմաստով՝ առաքելութիւն:

Պատմութեան ընթացքին մտաւորականները տարբեր դերեր ունեցած են: Ոմանք եղած են իշխանութեան կողքին (որքան շատ են այսօր աշխարհի տարածքին), ուրիշներ՝ իշխանութեան քննադատներ ու անոր դէմ պայքարողներ (երթալով կը պակսին): Ոմանք ժողովուրդները առաջնորդած են դէպի աւելի ազատ մտածողութիւն, ուրիշներ՝ գաղափարախօսութիւններու ծառայած (նաեւ փանջունիներ): Այս պատճառով, կարծէք «մտաւորական» բառը ինքնին բարոյական երաշխիք մը չէ: Զարգացած մարդը կրնայ նաեւ վտանգաւոր ըլլալ, եթէ իր գիտելիքը ծառայեցնէ փրփականտի եւ բռնութեան:

Մեր կարծիքով, իսկական մտաւորականին հիմնական յատկանիշներէն մէկը քննական մտածողութիւնն ու ներքին անկախութիւնն է: Ան կուրօրէն չի հաւատար ընդունուած գաղափարներուն, չի հանդուրժեր փրփականտան (պետական թէ կուսակցական) կամ պատրաստի կաղապարները: Ան հարցականի տակ կ'առնէ նոյնիսկ այն «ճշմարտութիւնները», որոնք հասարակութեան մեծամասնութեան համար անքննելի կը նկատուին: Անոր միտքը պէտք է ազատ մնայ քաղաքական, կրօնական, տնտեսական կամ ամբոխային ճնշումներէ (մանաւանդ ամբոխային):

Մտաւորականութիւնը նաեւ բարոյական պատասխանատուութիւն է: Ֆրանսացի փիլիսոփայ Ժան-Փոլ Սարթր իր *A plea for intellectuals (Plaidoyer pour les intellectuels*, «Պաշտպանութիւն մտաւորականներուն», 1972) աշխատութեան մէջ մտաւորականը կը նկարագրէ որպէս այն մարդը, որ կը «միջամտէ այն բաներուն, որոնք իրեն չեն վերաբերիր»: Այսինքն՝ ան չի սահմանափակուիր իր մասնագիտական ոլորտով, այլ կը զգայ պարտաւորութիւնը արձագանգելու անարդարութեան, բռնութեան եւ հանրային կեանքի խնդիրներուն: Նմանօրինակ միտք մը կը գտնենք նաեւ Էտուարտ Սայիտի գործերուն մէջ: Իր *Representations of the Intellectual* («Մտաւորականին ներկայացումները», 1994) դասախօսութիւններուն մէջ, ան կը շեշտէ, որ մտաւորականին հիմնական դերերէն մէկը

«Ճշմարտութիւնը իշխանութեան դիմաց խօսիլն» է (speaking truth to power): Իր «Արեւելաբանութիւն» (*) (Orientalism, 1978) գործին մէջ, Մայիտ ցոյց կու տայ, թէ գիտելիքն ու իշխանութիւնը ինչպէս սերտօրէն կապուած են իրարու, եւ թէ ինչպէս «գիտական» կամ «առարկայական» ներկայացումներ յաճախ կը ծառայեն քաղաքական ու մշակութային տիրակալութեան: Այս վերլուծութենէն կը բխի նաեւ մտաւորականին պատասխանատուութիւնը՝ քննութեան ենթարկելու տիրող պատկերացումները եւ հարցականի տակ առնելու ընդունուած «Ճշմարտութիւնները»: Այս պատասխանատուութիւնը կը վերաբերի ոչ միայն քաղաքական իշխանութեան, այլ նաեւ կրօնական, տնտեսական, մշակութային եւ նոյնիսկ ամբոյսային մտածողութեան ճնշումներուն:



Իսկական մտաւորականը նաեւ իր գիտելիքը չի պահէր փակ շրջանակներու կամ «փղոսկրեայ աշտարակներու» մէջ: Ան կամուրջ մը կը հանդիսանայ գաղափարներու եւ ընկերութեան միջեւ: Անոր նպատակը մարդիկը մտածելու մղելն է եւ ոչ թէ պարզապէս տեղեկութիւն սպառելը: Այս իմաստով, մտաւորականը ընկերութեան արթուն խիղճն է: Անոր արժեքը կը չափուի ոչ թէ իր կարդացած գիրքերուն թիւով, այլ՝ իր սկզբունքներուն հանդէպ ունեցած հաւատարմութեամբ եւ դժուար պահերուն դիրքորոշում որդեգրելու կարողութեամբ:

Հայ իրականութեան մէջ, մտաւորականը նաեւ գոյատեւման նպաստող դեր ունի:

Մփիւռքի, լեզուի, յիշողութեան եւ ինքնութեան պայմաններուն մէջ, հայ մտաւորականը միայն գրող կամ մտածող չէ, այլ նաեւ մշակոյթի պահապան մը: Ան գրականութիւն, դպրոց, մամուլ եւ գաղափարական տարածք ստեղծելով կը փորձէ պահպանել հաւաքական յիշողութիւնը եւ ազգային ինքնութիւնը: Անոր հայրենասիրութիւնը, իր առողջ ձեւին մէջ, կուրացնող չէ, այլ՝ սրբագրող եւ կառուցողական: Ան ցաւ կը զգայ թէ՛ իր հայրենիքի խնդիրներուն, եւ թէ՛ համամարդկային ողբերգութիւններուն համար:

Բայց այսօր մտաւորականի դերը զգալիօրէն փոխուած է: Ընկերային ցանցերու, արագ տեղեկութեան եւ աղմկալի օրերու այս դարաշրջանին, խորքային մտածողութիւնը սկսած է նահանջել: Մարդիկ աւելի արագ կարծիքներ կը սպառեն, քան գաղափարներ կը զարգացնեն: Այս պատճառով ալ, շատեր սկսած են «լուսարձակի տակ գտնուիլ» շփոթել մտաւորականութեան հետ: Բայց ամէն հանրային դէմք մտաւորական չէ: Մտաւորականը յաճախ ան է, որ պատրաստ է առանձին մնալու՝ յանուն ճշմարտութեան կամ բարոյական դիրքորոշումի:

Այս ամբողջ իրականութիւնը նոր փուլ մը թեւակոխած է արուեստական իմացականութեան (ԱԻ-ի) զարգացումով: Նախապէս, գիտելիքի արտադրութիւնը դանդաղ ընթացք մըն էր՝ հիմնուած տարիներու ուսումնասիրութեան, յիշողութեան եւ փորձառութեան վրայ: Բայց այսօր ChatGPT-ի եւ Gemini-ի նման լեզուական մոտելներ եւ այլ



համակարգերը արդէն կրնան յօդուածներ գրել, գիրքեր ամփոփել, թարգմանել, վերլուծել եւ գաղափարներ առաջարկել: Այս փոփոխութիւնը բնականաբար նոր հարցեր կը յառաջացնէ. մտաւորական արտադրութիւնը արդեօք շուտով ամբողջովին մարդուն եւ մեքենային համագործակցութեամբ պիտի պայմանաւորուի :

Շատերու համար այս մէկը մտահոգիչ հեռանկար է: Անոնք կը վախնան, թէ արուեստական իմացականութիւնը աւելի մակերեսային պիտի դարձնէ մտածողութիւնը եւ պիտի ստեղծէ արագ, բայց հոգիէ եւ խորքէ զուրկ գրութիւններ: Այս վախը ամբողջովին անհիմն չէ: Արդէն այսօր համացանցը ողողուած է մեքենական լեզուով արտադրուած բովանդակութիւններով: Բայց խնդիրը աւելի բարդ է: Պատմութեան ընթացքին, արհեստագիտական ամէն նոր միջոց փոխած է մտային աշխատանքի ձեւը: Տպագրութիւնը փոխած է յիշողութեան մշակոյթը, համակարգիչը՝ գրելու եղանակը, իսկ համացանցը՝ տեղեկութեան հասանելիութիւնը: Արուեստական իմացականութիւնը թերեւս այս շղթային հզօրագոյն հանգրուանն է:

ChatGPT-ի նման համակարգերը հետաքրքրական են այն պատճառով, որ անոնք միայն տեղեկութիւն չեն պահեր, այլ նաեւ լեզուական եւ գաղափարական կապեր կը ստեղծեն: Անոնք կրնան տարբեր աղբիւրներ իրարու մօտեցնել, արագացնել հետազօտութիւնը եւ երբեմն մարդուն ստիպել վերատեսութեան ենթարկելու սեփական մտածողութիւնը: Այս իմաստով, արուեստական իմացականութիւնը կրնայ գործակից մը դառնալ մտաւորականին:

Բայց հոս կը գտնուի հիմնական սահմանը: Արուեստական իմացականութիւնը տակաւին չի կրնար ունենալ մարդկային փորձառութիւն, վիշտ, յանգանքի զգացում, կորուստի կամ մահուան գիտակցութիւն: Մեքենան կրնայ գրել պատերազմի մասին, բայց չէ ապրած պատերազմը: Կրնայ խօսիլ սիրոյ մասին, բայց չէ սիրած: Կրնայ մեկնաբանել աքսորը, բայց չէ զգացած տեղահանութեան եւ ջարդի հոգեբանական ցնցումը:

Հետեւաբար, հիմնական հարցը այն չէ, թէ արուեստական իմացականութիւնը պիտի փոխարինէ՞ մտաւորականը: Աւելի կարեւոր է այն, թէ արդեօք մարդը պիտի կարենա՞յ պահպանել ինքնուրոյն մտածելու, կասկածելու եւ ներքին պայքար ապրելու կարողութիւնը, երբ մեքենան սկսի իրեն հետ մտածել, կա՞մ պիտի դառնայ անոր գերին եւ կամաց-կամաց ընդունի անոր մեքենական տրամաբանութիւնը:

Որովհետեւ մտաւորական ըլլալ չի նշանակեր միայն տեղեկութիւն արտադրել: Մտաւորականութիւնը խիղճ է, պատասխանատւութիւն է եւ երբեմն ալ՝ իր ժամանակի նորմերը կասկածի տակ դնելու խիզախութիւն:

Վ.Թէնպէլեան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԳՏՆԷ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԱՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՇԻՆԻՉ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Արդեօք ոեւէ մէկը կասկած ունէ՞ր, որ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները պիտի անցնին հանդարտաբարոյ, կայուն ու կարգապահական մթնոլորտի մը մէջ, նկատի ունենալով որ, առ այդ, կացութիւնը երբեք լաւատեսութիւն չէր ներշնչեր, մանաւանդ՝ ի լուր այն խանգարիչ տարրերուն, որոնք իրենց ժխտական, կարծրամէտ եւ անկարգապահ արարքներով ծանօթ էին եւ անպատկառօրէն կը վերաբերէին իրենց հակառակորդներուն ու մրցակիցներուն հետ:

Չենք կրնար հաւատալ ու հաստատել, որ ամէն ինչ հեզասահ ընթացաւ, առանց թոհուրոհի կամ մաքուր եւ արդար կարգավիճակներու իրականացումով:

Մակայն, պրկուածութիւնն ու լարուածութիւնը, ջղաձգութիւնը ու դիւրագրգռութիւնը, գրեթէ բոլորին մօտ ակնյայտ էին, ի մասնաւորի ընդդիմադիրներու շարքին, որոնք, մէկ կողմէն՝ վրէժխնդրութեամբ ու ռիսկալութեամբ լեցուած էին իշխանութեան դէմ, միւս կողմէն՝ դրդուած ու հրահրուած էին իրենց շարժումները կազմակերպողներու կողմէ:

Այդուհանդերձ, ո՞վ կը կասկածէր, որ յետ ընտրութիւնը, երբ արդիւնքները հետզհետէ յայտնի սկսէին դառնալ, «պոթթկում»ները լսելի պիտի չդառնային, յատկապէս՝ այն անկիւններէն, ուր պարտութիւնը զգալի էր կամ զգետնուողը յայտնի, հետեւաբար, յարձակողականութիւնը պատրաստ էր դիմացիներուն ճգմելու, խօսքով թէ այլապէս:

Իշխանութիւնը, իր զանազան թելերով, կարելիութիւններով ու միջոցներով, հրապարակները, գիւղերն ու քաղաքները ողողած էր, իր քարոզչական մեքենաներով ու լծակներով, առանց վարանելու ու գոռալու, որ յաղթանակը իր «գրպան»ն է, շուտով զայն վայելելու եւ աւետիսը տալու ու բաշխելու համայն հայութեան եւ աշխարհին:



Ընդդիմութիւնը ե՛ւս, իր վարչամեքենաները լարած էր եւ ամբողջ իր համակարգով, երթերով ու խճանկարային մասնակցութիւններով, կ'ուզէր իր գոյութիւնը բացայայտել ու ցուցադրել, փորձելով ինքզինք համոզել, թէ ինքն է մրցանակակիրը եւ իշխանութեան փոփոխութեան մնացած են ժամեր, ներքնապէս, սակայն, ապրելով մտահոգութիւնը, կորսնցնելու ամէն ինչ որ իր երազն է ու հետապնդած ճակատագիրը:

Այնքանով որ կարելի եղաւ հետեւիլ ընտրապայքարին, ելոյթները, հարցազրոյցները, կոչերը, յայտարարութիւնները, ոչինչով բարենշային էին, քաղաքավարական ու ժողովրդավարական առումներով, քանի անոնց մեծ մասը կը փայլէր փոխադարձ վիրաւորանքներով, անուանումներով, կոպտութիւններով, իսկ պոռչտութիւնները, աղմկարարութիւնները, անպատշաճութիւններն եւ անզսպուածութիւնները հասցնելով իրենց անբաղձալիութեանց գազաթնակէտին, խոտոր համեմատուելով քաղաքակրթեալ, հաղորդական ու տպաւորիչ երեսներուն, ի դէմս, այլ պետութիւններու մէջ կատարուած «նախանձելի» երեւոյթներուն հետ:

Ի տարբերութիւն ժողովրդային այս վանողական տեսարաններուն ու բղաւոցներուն, լրագրողներուն զրոյցները անցորդներուն ու քաղաքացիներուն հետ, շատ աւելի լուրջ ու կիրթ էր, անկեղծ եւ ազնիւ, համոզիչ ու պերճախօս արտայայտելով իրենց թեր ու դէմ այն միտքերը, գաղափարները կամ տեսակէտները, որոնք հիմնուած են իրենց տրամաբանութեան ու դատողութեան վրայ:

Յուցանշային էին այն կտրուկ ու դիպուկ արտայայտութիւնները, որոնց բնակիչներուն մեծամասնութիւնը կ'առաջադրէր Նիկոլ Փաշինեանի վարչապետութիւնը, ըստ իրենց, նկատի ունենալով անոր կառուցողական, խաղաղապաշտական ու բարեկարգչական ծրագիրներու իրականացումն ու դրսեւորումը:

Այս բոլոր ի՞նչ կը նշանակեն, կ'ակնարկեն կամ կը հետապնդեն, բացի այն իրողութենէն, որ հայաստանցիները կամ հայաստանաբնակները, հակառակ իրենց կրած ցաւերուն ու զրկանքներուն, վիշտերուն ու տառապանքներուն, կորուստներուն եւ անիրաւութիւններուն, իրենց դժգոհութիւններուն ու դժկամակութիւններուն, կը նախընտրեն մնալ դէպի ապագայն նայող առաջադրութիւններուն ու հայեցողութիւններուն վրայ, առանց մոռնալու իրենց հարազատներուն ու հոգեզաւակներուն նահատակութիւնը, ոչ ալ՝ զիջելու իրենց հողային ու տարածքային սեփականութիւններէն, բայց, միաժամանակ, գերադասելով եւ նախընտրելով իրենց հայրենիքին գերիշխանութեան եւ անկախութեան շինիչ տարբերակները:

Անկասկած, այս ընտրանքները իրենց համար, անփոխարինելի սրբութիւններ են անվիճելի կռուաններ, բայց, հայրենիքին գոյութիւնը, հզօրութիւնը, գերակայութիւնը եւ անժխտելիութիւնը, չեն կրնար վերածուիլ «աժան աճուրդիական» սակագիներու ու մուրհակներու, որոնց կենսունակութեան եւ յարատեւութեան համար, կարելի չէ ընկրկիլ կամ նահանջել, որեւէ արգելքի կամ պատնէշի դիմաց, ուրկէ ալ ան բուսնի կամ աճի, որովհետեւ ան է միակ ճամբան, որ կրնայ հայրենիքը պահել իր ամբողջականութեան, ճկունութեան եւ էութեան վէմին վրայ, աներեր եւ անցնցող խարիսխներով:



Խորհրդարանական ընտրութիւններու 7 Յունիս 2026ի վերջնական (նոյնիսկ անմիջական) արդիւնքները տակաւին չամբողջացած, արդէն, ահաւոր ու խժալուր գոռոցները, իրենց զանազան ու բազմաբնոյթ արձագանգներով, ժխտրային իրարանցում ստեղծած էին, յատկապէս՝ ընդդիմադիրներու կողմէ, որոնք իշխանութիւնը կ'ամբաստանէին ու կը դատապարտէին անարդարութիւններու ու կեղծապատիրութիւններու հազար ու մէկ «մեղք»երով, առանց որեւէ շօշափելի ու գործնական ապացոյցներու:

Մինչ այդ, իշխանութիւնը կ'ոգեկոչէր ու կ'ողջունէր իր ԼԻԻՐԱԻ յաղթանակը ցոյց տալով, իր առաջնահերթութեան վարկանիշներով եւ իր առաւելութեանց ցցուն տուեալներով:

Իրականութիւն մը, որ որեւէ ձեւով եւ եղանակով, կարելի չէր շրջանցել կամ ուրանալ, այնքան ատեն, որ պատկերը յստակ է իր բովանդակ պարփակութեամբ եւ ամբողջական տնօրինութեամբ:

Այստեղէն եւ այս հանգրուանէն, արդէն «ծնունդ» կ'առնէր մեր մտավախութիւնը (որուն մասին լուսարձակած էի, մեր վերջին գրութիւններէն մէկուն մէջ), թէ՛ Հայաստանը ինքզինք պիտի գտնէ նոր ու վտանգաւոր մարտահրաւեր(ներ)ի մը առջեւ, երբ իշխանութիւնը, ԱՆԵՐԿԲԱՅ յաղթանակի յաջողութիւն կ'ոգեկոչէն, իսկ ընդդիմութիւնը՝ ԱՆՀԵՐՔԵԼԻ ձախողութիւն:

Պիտի չանդրադառնամ, ոչ ալ հետեւիմ կամ մեկնաբանեմ իշխանութեան տարած յառաջընթացին ու գրաւած դիրքաւորումին վրայ, բայց, չեմ կրնար անտարբերութեամբ անցնիլ կամ անտեսել այն վերիվայրումները, որոնց ենթարկուեցաւ եւ անոնց «բոց»երուն մէջ ինքզինք այրեց եւ այրեցուց «ընդդիմութիւն» կոչուած հոսանքը, իր աճապարարութեամբ, անձոռնիութեամբ ու խաղբութեամբ, իր համակիրները եւ հետեւորդները առաջնորդելով ու մղելով, դէպի քարքարոտ ճանապարհներ:

Ինչո՞ւ այս հրատապ ընդգծումը ու անխուսափելի հաստատումը, պարզապէս անոր համար, որ՝ դո՛ւք, ընդդիմութիւն, երբեք չկրցաք ԻՍԿԱԿԱՆ ընդդիմութեան տարագով եւ ոգիով հանդէս գալ, ոչ երէկ, ոչ ալ՝ այս ընտրութիւններուն, այլ՝ կառչեցաք, փտած ու նեխած, այլասերած եւ անհաշտ հարուածներուն հետ, որոնցմէ (առաջինը եւ ոչ վերջինը) կը կոչուէր Ռոպերթ Քոչարեան, (ան)մարդ մը, (չ)նախագահ մը, (չ)կերպար մը եւ (չ)արարած մը, որ՝ նախ իրաւունք չունէր, ո՛չ Արցախի (որուն՝ դաւաճանեց), ո՛չ ալ Հայաստանի նախագահ հռչակուելու (որուն դաւադրեց) եւ այսօր, առանց խպնելու, ինքզինք կը յաւակնի յայտարարելու Հայաստանի (չ)վարչապետական թեկնածու:

Կա՞յ աւելի ստորնացուցիչ, վարկաբեկիչ ու նուաստացուցիչ որակում, երբ «Ռոպ»ը, իր հագուստով ու մերկութեամբ կը ցցուի բոլորին առջեւ, իբրեւ ՄԱՐԴԱԿԵՐՊ մը, երբ մարդիկ, ՀԱՅԵ՛Ր, մաքրագործած է, իր (չ)նախագահական դիմագիծով, այլանդակային արտաքինով, սգիտային հայալեզուով, բարբարոսային վարուելակերպով, տակաւին յաւակնելով Հայաստանի եւ Արցախի (՝) պաշտպան կանգնիլ:



Այսպիսի ահաւոր հայասպան մը, ոճրագործ մը, հայադէմ մը, հայաբեկոր մը, ինչպէ՞ս կրնայ Հայաստանին (ալ ո՛ր մնաց Արցախին), օգտակար դառնալ, երբ ժամանակները ցոյց տուին, ան, եւ իր նմանները, ինչպիսի՜ ապերախսներ, ճիւղներ եւ անմարդկայիներ եղան:



Յետ ընտրական շրջանը սկսած ըլլալով, թէկուզ քուէներու վերհաշուարկներով, հոն ուր պատճառներ կան եւ անհրաժեշտ է արդար գտումներ, առիթը օգտագործելով, ներելի՞ է երկիրը ապակայունացնել, յատկապէս Քոչարեանի նման արկածախնդիրով մը, որ կը սպառնայ իշխանութենէն վրէժ (՞) լուծել, իշխանափոխութիւն մուրալ, իր կաշառակերային միջոցներով, ինչպէս ընտրական ստուգատեսի պարագային, իր կառքին լծելով պատեհապաշտ հետեւորդներ, նոյն իր ապօրինագանցութիւնները շարունակելու յամառութեամբ:

Մարդիկ, որքա՜ն հաւկոյր եւ անուղղայ պէտք է ըլլան, դիմելու նման աճաբարարութիւններու, ամբոխավարութեան եւ ոտնձգութեան, երբ աշխարհի մեծամեծ պետութիւնները եւ ուրիշներ, միջազգային չափանիշներով ողջունած ու շնորհաւորած են իշխանութեան յաջողութիւնները:

Վերջին հաշուով, մինչեւ ե՞րբ պիտի շարունակուին թունաւորումները, ժահրոտութիւնները ժողովուրդին ու հայրենիքին նկատմամբ, արինոտ նկարագիրներու ձեռամբ, որոնց նկատմամբ այլեւս պէտք է կիրարկուի խստագոյն եւ արագ պատժամիջոցներ, առաջին հերթին անոր դէմ, որուն կեանքը պատուած է սեւագոյն էջերով:

Խորհրդարանը կամ Ազգային Ժողովը, միակ տեղն է, ուր խնդրոյ առարկայ հարցերը կը քննարկուին ու կը լուծուին (կամ ոչ), հեռու փողոցային խապոտ եւ անհաճոյ վարժանքներէն, որոնք ցարդ ոչինչ բերին հայրենիքին, բացի խայտաբղետ պատուհասներէն:

Իշխանութիւնը, գլխաւորութեամբ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, պէտք է այլեւս խուսափի կրքոտ ու ջղոտ յայտարարութիւններէ ու սպառնալիքներէ, այնքան ատեն որ՝ ատոնց ՓԱՓԿԱՆԿԱՏ տարբերակները աւելի հանրօգուտ ու պիտանի են,, քանի ոչ երկիրը, ոչ ալ ժողովուրդը կրնան այլեւս հանդուրժել որեւէ անիմաստ ու բուռն մազցումներու կրկնութիւնները:


Ասոնք են հնարքներն ու մաղթանքները, որոնք կայունութիւն, բարեբերութիւն ու խաղաղամէտութիւն կրնան պարգեւել բոլորին, եթէ կողմերը, ուղղակի թէ անուղղակի մասնակիցները, լուրջ են, անկեղծ եւ իրապաշտ:

(Պէյրութ)

ՄԵԾ ԵՐԱԶԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6/7/2026

ԳԷՈՐԳ ՊԵՏԻՎԵԱՆ



Աշխարհը արդէն տեղեակ է, թէ այս տարի (2026), Ամերիկայի Միացեալ Նահանգները կը դառնայ 250 տարեկան: Թուական մը, որ բոլորի մտքին առջեւ կը քանայ մտածումի նոր ակօսներ:

Այս հսկայ, հզօր եւ հարուստ երկիրը, բաղդատմամբ եւրոպական եւ ասիական շատ ու շատ երկիրներու, որոնք ունեցած էին պատմական հարուստ անցեալ, կը նկատուէր իբրեւ «նոր» եւ կը կոչուէր նաեւ «Նոր Աշխարհ»: Ամերիկա՝ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ:

Արդ, կ'ուզեմ յիշեցնել, թէ անձնապէս պատմաբան մը չեմ, եւ ո՛չ ալ հեքիաթ պատմող: Աւելին՝ նոյնիսկ քաղաքականութեամբ զբաղուող մըն ալ չեմ: Այլ պարզապէս աշխարհի պատմութեան համեստ հետեւող մը, որ այս յոբելենական թուականին առթիւ կը փորձէ քանի մը կէտեր ընթերցողին ուշադրութեան յանձնել:

Թուական մը,- ըսի, պէտք էր նաեւ անպայման աւելցնէի, մեր կողմէ գնահատանքի տուրք հասկացողութիւնն ալ: Որովհետեւ թուականներու յիշատակումներէն աւելին, էական են մեր ընկալումներն ու մեր գնահատանքի չափերը:

250 տարի.- յոբելենական թուական համարուած է: Ուստի, այս մասին նշումը, նաեւ վերարժեւորում կ'ենթադրէ: Ու բոլորին նման, ինծի համար ալ լաւ առիթ մըն է թղթատելու 250 տարեկան այս երկրի ծնունդի պատմութիւնը ու իմ կարծիքով լոյսին բերել անոր գլխաւոր եւ էական ու հետաքրքրական կէտերը:

Եւ ահա...

– 1776, Յուլիս 4ին հռչակուած, մեծ եւ համատարած յեղափոխութենէ մը ծնունդ առած անկախութիւնը, նաեւ կոչուած է «մեծ երազի մը իրականացումը»:

– Ինչպէ՞ս յաջողեցաւ այս «յեղափոխութիւնը»: Ինչպէ՞ս այս երկրի հիմնադիրները, այլ խօսքով՝ նախահայրերը, համակարգեցին իրենց ջանքերը, հազարաւոր մղոններ տարածութիւն ունեցող 13 գաղութներու միջեւ, երբ նոյնիսկ Պոսթընէն մինչեւ Չարլսթըն,



նամակ մը հասցնելու համար, պէտք էր ձիով երկու շաբաթ ճամբորդել, իսկ այլ միջոցներով՝ ամիսներ:

– Բայց... հակառակ այս մեծ դժուարութիւններուն, հազարաւոր գաղտնի նամակներ, լուրեր, հրահանգներ եւ ծրագիրներ, գիշեր-ցերեկ, ձիերով կամ անձնական կառքերով ճամբորդելով, փոխանակուած էին գաղութներու յեղափոխականներուն միջեւ:

– Նամակներուն եւ արձակուած հրահանգներուն եւ անոնց իրագործումներուն փոխանակումները, եկեղեցիներուն, սրճարաններուն, պարերուն եւ հրապարակներուն մէջ, ձիւներու եւ ցեխերու մէջ արիւնէն ծնած ազգ մը, փոխեց աշխարհը, նաեւ փոխեց ազատութեան մասին մարդուն ունեցած պատկերացումները, եւ այսօր, իր երկիրը դարձուց առաջատար ու նոյնիսկ աշխարհը առաջնորդող:

– Շնորհիւ Սամուէլ Ատամսի կողմէ ստեղծուած նամակատարական կոմիտէներուն, հարիւրաւոր հանդիպումներ ծրագրուած եւ իրականացած էին:

– Գաղութներէն ներս, յեղափոխութեան կեդրոնական համակարգիչներն էին օրուան գրողները, մտաւորականները, մտածողները, հոգեւորականներն ու դասատուները:

– Բոլոր գրողներն ու հոգեւոր եւ քաղաքական գործիչները, հոգի դրած էին իրենց բառերուն մէջ եւ իրենց յատուկ ոճով ու խանդավառութեամբ ժողովուրդը առաջնորդած զենքին եւ անկախութեան տիրանալու գաղափարին:

– Ամենէն էականը այս բոլորին մէջ, մեծերու՝ «նախահայրեր» կոչուելիք անձերուն, իրարու հանդէպ ունեցած վստահութիւնն էր, եւ բոլորին մօտ՝ «յեղափոխական» այս հսկայ ծրագրին ու անոր հորին հանդէպ վառ պահուած ոգին:

– Անկախութեան հիմնադիր նախահայրերուն կատարած ամենամեծ աշխատանքը, ո՛չ միայն անկախութեան հռչակումն էր, եւ ո՛չ ալ մարտադաշտերուն տարուած յաղթանակները, այլ՝ «յեղափոխականներուն» գաղտնի ու զարմանալիօրէն աշխոյժ, եւ իրարու հետ հաղորդակցելու հրաշալի ու օրինակելի կարողականութիւնը: Բոլորին մօտ, առանց տատամսելու, եւ մեծ համոզումով, մէկ հաւատք, մէկ նպատակ, եւ մէկ երազանք ունենալն էր: Ժամը հասած էր ստեղծելու նոր երկիր մը, եւ այս ձեւով ծնունդ տալու նոր ազգի մը վճռական ներկայութեան:



– Օրուան յիշարժան «հերոսներէն» եւ նոյնքան ալ պատմական մեծ դէմքերէն էին. Ճորճ Ուաշինկթըն, Բենիամին Ֆրանքլին, Ճան Հանքաք, Սամուէլ Ատամս , Ճան Ատամս, Թովմաս Ճեֆըրսըն, Փաթրիք Հէյն եւ շատ շատեր:

– Յիշենք նաեւ, որ բոլոր աշխատանքները յանկարծ ծնունդ չ'առին, այլ երկարատեւ տառապանքի, ճնշումի, բռնակալի շահագործումներու հետքերուն պատճառով ծնունդ առին:

– Այլ խօսքով, այս ազդակներն էին, որոնք ժողովուրդը դրդեցին ապստամբելու, եւ իր հողերուն ազատութեան տիրանալու:

– Մինչեւ մոլեգին մարտերու մղումը, 1776ի ամռան էր որ որոշում առնուեցաւ «անկախութիւն», կամ՝ «կախադան» լոզունգը...

– Ապա, մայր ցամաքամասի Քոնկրետը, Ֆիլատելֆիոյ մէջ գումարուեցաւ, վերջնական որոշում տալու համար: Ռիչըրտ Հանրի կոչուած մեծ յեղափոխականը, իր հեղինակած հռչակագրին սեւագրութիւնը յանձնած էր 33 տարեկան երիտասարդ իրաւաբան՝ Թոմաս Ճեֆըրսընին: Ան ալ իր կարգին, 17 օր ինքզինք իր սենեակէն ներս արգելափակելով, սրբագրելով, նոր բառեր եւ տողեր աւելցնելէ, մտածումները նորոգելէ, յաւելումներ եւ ճշդումներ ալ կատարելէ, եւ պատմական այս հռչակագիրը վերջնականապէս պատրաստելէ ետք, զայն յանձնած էր օրուան Քոնկրետին:

– Ու վերջապէս, Յուլիս 4, 1776ին, Քոնկրետը վաւերացուց հռչակագիրը, եւ ահա վերջնականապէս հռչակուեցաւ գաղութներու անկախութիւնը:

– Մինչ, վճռական մարտերը մոլեգին կը շարունակուէին, հռչակագիր-փաստաթուղթը նախ Ֆիլատելֆիոյ մեծ հրապարակին վրայ կարդացուեցաւ բարձրաձայն: Օրին եւ նոյն ժամուն, եկեղեցիներու զանգերը հնչեցին, ինչպէս նաեւ՝ թնդանօթները գոռացին, նոյնիսկ Մեծն Բրիտանիոյ թագաւոր՝ Գէորգ Գ.ի արձանը քար ու քանդ ըրին:

– Բոլորը լաւատեղեակ էին, որ փաստաթուղթի ստորագրութիւնը երազանք պիտի ըլլար, եթէ պատերազմի դաշտին վրայ պարտութիւն կրէին:

– Կա՛մ ազատութիւն. կամ՝ կախադան: Այս էր օրուան գլխաւոր նշանաբան-լոզունգը: Ներշնչող հոգեկան իրականութիւն:



– Երբ Մեծն Բրիտանիան ընդունեց իր պարտութիւնը, աշխարհը կարծես գլխիվար դարձած ըլլար:

– Ահա այս պատմական Հռչակագրի ամփոփ ծնունդը:

Արդ... հո՛ւ է մեծութիւնը ժողովուրդի մը ե՛ւ կամքին, ե՛ւ անոր կապուած կորովին: Այստե՛ղ է նաեւ առաքելութիւնն ու յանձնառութիւնը: Ոգեւորիչ: Հպարտութիւն առթող:

Գիտենք որ անկախութիւնը մարդու լիարժէք դրսեւորման բնական իրաւունքն է:

Ասիկա չհինցող, չմաշող, եւ ամէն անգամ կրկնուող ապրում մըն է:

Կրնայ ըլլալ, որ այս բոլորը շատերուն համար լոկ գաղափարներ թուին, պարզապէս անձնական մտորումներ, սակայն, հակառակ այս բոլորին կը հաւատամ, որ որեւէ գործունէութիւն կը սկսի գաղափարով, որուն պէտք է յաջորդէ գործնական աշխատանքը:

Ու յարատեւութիւնն է, որ պիտի պայմանաւորէ նպատակին յաջողութիւնը: Չմոռնանք, անկախութիւնը կ'ենթադրէ իւրաքանչիւր մարդու իրաւունքներու պահպանում: Ու երկրի մը անկախութիւնը մեծ աշխատանքի շնորհիւ պայմանաւորուած է եւ ձեռք կը ձգուի թէ՛ արեւան գինով, եւ թէ այդ երկրի մարդկային որակի զարգացման եւ կատարելագործման ցանկութեամբ:

Անկախութիւնն ու ազատութիւնը կը սկսի հոգիի եւ մտքի անկախութենէն եւ ազատութենէն:

Է՛հ, վերջապէս անկախութիւնն է, որ կ'արթնցնէ ժողովուրդի մը ոգին:

Անշուշտ այս «բոլորին» ծանօթ ենք, նաեւ էք...: Իսկ գալով մեզի:

Համեստօրէն ըսենք, որ մենք ալ նոյն ճամբայէն անցած ենք: Վկայ մեր պատմութիւնը: Մենք ալ աշխարհի բոլոր յեղափոխական շարժումներու նման, այդ «ակէն» ջուր խմած ենք: Հայ հողի անկախութեան համար արիւն թափած: Որովհետեւ մեզի համար ալ մեր երկրի անկախութիւնը, սակարկելի հասկացողութիւն մը չէր: Երբեք: Ու մեզ ապրեցնողն ու խրախուսողը՝ մեր գոյութեան հաւատքն էր:

Իմ կարծիքով՝ հայ ժողովրդի ամենամեծ տօնը իր հայրենիքի անկախութեան օրն է: Դարեր շարունակ բազմաթիւ սերունդներ երազած էին իրականացած տեսնել Հայաստանի անկախ պետականութիւնը: Հայկ Նահապետի օրէն ի վեր, անկախութիւն բառը նստած մնացած էր



մեր սրտերուն վրայ: Անոր համար, իբրեւ նուիրական նպատակ եւ գաղափար, դարերով կապուած եւ արթուն մնացած էինք այդ երազին:

Ցաւ ի սիրտ, այսօր բազմաթիւ երեւոյթներ կը խամրեցնեն մեր հայրենի երկրի անկախութեան արժէքը: Այս ուրիշ հարց է...:

Արդ, 1776ի Յուլիս 4ով սկսող անկախութեանդ 250 ամեակը ՇՆՈՐՀԱԻՈՐ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

bedig43@aol.com

ՍՓԻՒՌԷ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ. ՄՐՅԱԿԻՑՆԵՐ, ԹԷ՞ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԷԼԵԱՆ

25/6/2026



Հայ ժողովուրդի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ ունի երեւոյթ մը, որ քիչ ժողովուրդներու պարագային կը հանդիպինք: Մենք ունինք պետութիւն, բայց նաեւ ունինք աշխարհով մէկ տարածուած համայնքներ, որոնք ոչ միայն մշակութային կամ տնտեսական դեր կը խաղան, այլեւ յաճախ ազգային հարցերու շուրջ կ'արտայայտուին

նո՛յն հետաքրքրութեամբ եւ պատասխանատւութեան զգացումով, ինչպէ՛ս Հայաստանի մէջ ապրող քաղաքացիները:

Թէեւ այս իրականութիւնը ծնունդ առած է պատմական ողբերգութենէ, բայց տասնամեակներու ընթացքին դարձած է ազգային գոյատեւման կարեւոր յենասիւններէն մէկը: Սփիւռքը պահպանած է լեզուն, մշակոյթը, կրթական հաստատութիւնները եւ ազգային ինքնութիւնը այն ժամանակաշրջաններուն, երբ հայկական անկախ պետութիւն գոյութիւն չունէր:

Սակայն Հայաստանի վերանկախացումէն ետք, հարցում մը ինքզինք կը պարտադրէ. ի՞նչ պէտք է ըլլայ սփիւռքի եւ Հայաստանի Հանրապետութեան յարաբերութեան բնոյթը: Այս հարցին պատասխանելու համար նախ պէտք է ընդունիլ պարզ իրողութիւն մը: Պետութիւնը եւ ազգը նոյն բաները չեն: Ազգը աւելի լայն հասկացողութիւն է, իսկ պետութիւնը՝ իրաւական եւ քաղաքական կառոյց: Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային



ճանաչում ունեցող ինքնիշխան պետութիւն է, որուն քաղաքացիներն են, ի վերջոյ, պատասխանատու իրենց իշխանութիւններուն ընտրութեան, վերահսկողութեան եւ փոփոխութեան:

Այս պատճառով ալ դժուար է վիճարկել այն սկզբունքը, որ սփիւռքը, որքան ալ հայրենասէր կամ նուիրուած ըլլայ, չի կրնար եւ պէտք չէ ուղղակի կերպով միջամտէ Հայաստանի ներքին քաղաքական հարցերուն: Շատեր կը կարծեն, թէ պետութիւնը համայն հայութեան պատկանող զգացական սեփականութիւն մըն է, ուր իւրաքանչիւրը կրնայ հեռակայ կարգով թելադրել, ներագդել կամ նոյնիսկ միջամտիլ ըլլալ ներքին հարցերուն՝ ըստ սեփական պատկերացումներուն: Պետութեան ներքին որոշումները պէտք է ընդունուին այն քաղաքացիներուն կողմէ, որոնք ամէն օր կ'ապրին այդ որոշումներուն հետեւանքները: Բայց սխալ պիտի ըլլար այս եզրակացութիւնը մեկնաբանել որպէս սփիւռքի դերին նուազեցումը: Ընդհակառակը:

Ամենէն յաջող պետութիւնները չեն ծաղկիր ու զարգանար միայն իրենց ներքին կարողականութեամբ եւ ուժով: Անոնք կը յենին նաեւ արտաքին կապերու, գիտելիքի, փորձառութեան եւ միջազգային ազդեցութեան վրայ: Իսկ հոս է, որ սփիւռքը կրնայ դառնալ Հայաստանի մեծագոյն ռազմավարական առաւելութիւններէն մէկը:

Աշխարհի տարբեր երկիրներու մէջ հայ մասնագէտներ կը ղեկավարեն ընկերութիւններ, համալսարանական կեդրոններ, *սթարթափներ*, գիտահետազօտական հաստատութիւններ եւ նորարարական ծրագիրներ: Անոնք կուտակած են գիտելիք եւ փորձառութիւն, որոնց արժէքը երբեմն շատ աւելի մեծ է, քան նիւթական օժանդակութիւնը: Տասնամեակներ շարունակ «սփիւռքի օժանդակութիւն» արտայայտութիւնը հիմնականօրէն կապուած էր նուիրատուութիւններու կամ բարեգործական նախաձեռնութիւններու: Շատեր կը կարծեն, թէ Սփիւռքի դերը սահմանափակուած է քանի մը պարզ, խորհրդանշական քայլերով. դրամահաւաք մը կազմակերպել, բարեգործական ծրագիր մը հովանաւորել կամ ընկերային ցանցերուն մէջ հայրենասիրական կոչեր տարածել: Այս բոլորը արժէքաւոր են, բայց անոնք միայն առաջին քայլերն են հազար մղոնին: Այսօր, 21-րդ դարը տարբեր մտածողութիւն եւ տարբեր մօտեցումներ կը պահանջէ:

Հայաստանի կարիքը միայն դրամով չի սահմանափակուիր: Այսօր, Հայաստանի Հանրապետութիւնը ունի կարիքը արդիականացման, տնտեսական ճկունութեան, գիտելիքի, նորարարութեան, կառավարման փորձառութեան, միջազգային ցանցերու եւ մասնագիտական կարողութիւններու: Ահա թէ ինչո՞ւ Սփիւռքի ամենէն արդիւնաւէտ դերը թերեւս ոչ թէ քաղաքական աղմուկի ստեղծումն է, այլ գիտելիքի, փորձառութեան եւ արհեստագիտական հմտութիւններու անդադար փոխանցումը դէպի հայրենիք:

Աշխարհաքաղաքական մրցակցութեան ներկայ պայմաններուն մէջ, փոքր պետութիւններու հզօրութիւնը ոչ միայն կը չափուի բանակով կամ տնտեսութեամբ, այլ նաեւ իրենց «փափուկ ուժով» (այս առիթով կ'արժէ վերընթերցել դոկտ. Հրաչ Զիլինկիրեանի [«Հայկական «փափուկ ուժը» սփիւռքի մէջ»](https://tinyurl.com/48a3xh97) խորագրեալ յօդուածը հետեւեալ կապով <https://tinyurl.com/48a3xh97>):

Այս հասկացողութիւնը կը վերաբերի այն կարողութեան, որով պետութիւն մը կամ հաւաքականութիւն մը կրնայ ազդեցութիւն ունենալ ուրիշներու վրայ՝ մշակոյթի, կրթութեան, գիտութեան, նորարարութեան եւ հեղինակութեան միջոցով: Սփիւռքը, իր



հանրային ու քաղաքական կապերով, կոչուած է ըլլալու Հայաստանի պետական շահերու *լուսկիսթական* լծակը օտար ափերու վրայ:

Այս առումով, հայ ժողովուրդը եզակի առաւելութիւն ունի: Հայաստանի Հանրապետութիւնը ունի այն, ինչ սփիւռքը չունի՝ պետականութիւն: Իսկ սփիւռքը ունի այն, ինչ Հայաստանը ամբողջութեամբ չունի՝ համաշխարհային տարածում, բազմազան փորձառութիւն եւ ազդեցութեան բազմաթիւ լծակներ ու կեդրոններ: Երբ այս երկու իրականութիւնները համագործակցին, անոնք կը լրացնեն զիրար: Երբ անոնք կը մրցին կամ կը փորձեն փոխարինել զիրար, կը յառաջանան լարուածութիւններ եւ հիասթափութիւններ: Հետեւաբար հարցը այն չէ, թէ սփիւռքը պէտք է լռէ՞, թէ՞ խօսի: Հարցը այն է, թէ ո՞ր ոլորտին մէջ կրնայ ան ամենէն մեծ արժէքը ստեղծել:

Թերեւս ժամանակն է, որ սփիւռքի եւ Հայաստանի յարաբերութիւնները վերասահմանուին ոչ թէ որպէս քաղաքական խնամակալութիւն կամ անվերջ ցանկ մը փոխադարձ ակնկալութիւններու, այլ որպէս ռազմավարական գործընկերութիւն:

Մէկը կը կառավարէ պետութիւնը: Միւսը կը բազմապատկէ անոր կարողութիւնները:

Եւ երբ այդ երկու դերերը յստակ ըլլան, Հայաստանն ու սփիւռքը կրնան աւելի հզօր դառնալ միասին, քան երբեւէ առանձին-առանձին: Երբ սփիւռքի գիտնականը, տնտեսագէտը կամ կառավարման մասնագէտը իր տաղանդն ու փորձագիտութիւնը կը դնէ հայրենի պետական համակարգի տրամադրութեան տակ՝ առանց քաղաքական նախապայմաններու, այդ պարագային համագործակցութիւնը կը դառնայ գործնական իրականութիւն:

Որովհետեւ ի վերջոյ, հայրենիքի պահպանութիւնը միայն զայն հեռուէն սիրելու կամ անոր ներքին հարցերուն շուրջ վիճելու մասին չէ. անիկա մեր արժէքներուն, պետականութիւնը որպէս բացարձակ հիմք ընդունելու կամքին եւ զայն գիտելիքով ու փափով ուժով զրահաւորելու պատասխանատուութեան մասին է:

ՏԵՍԱԿԷՏ

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԾԱՌԱՆԱՆ,

ԻՄԿ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ՝ ԿԸ ԽԱՐԽԱՓԻՆ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու ստուգատեսը, եթէ սկսաւ 7 Յունիս 2026էն ամիսներ առաջ, գործադրուեցաւ 7 Յունիսի ամբողջ տեւողութեամբ ընթացքին, որպէս աւարտած հաշուարկում, սակայն, մինչեւ օրս, անոր շուրջ կան բոլորն էլ ահաւոր աղմկարարութիւններ, իրենց դրական եւ ի մասնաւորի ժխտական քառոսով:

Թէ՛ ի՞նչ կը հետապնդուի այս զարգացող ու բորբոքող կացութեան, պէտք է հարց տալ, այլեւ զարմանալ, երբ իշխանութիւնները կ'անտեսեն ընդդիմութեան կողմէ հնչած խժալուր ձայները, զանոնք նկատելով զուր շրթնամարզանքներ, մինչ պետական համակարգի ներկայացուցիչները, զանոնք կը նկատեն կատարեալ խայտառակութիւն, անիմաստ յանկերգութիւններ եւ ապարդիւն ճիգեր:

Նախընտրական պատրաստութեան շրջանին, ընդդիմադիր մունետիկները, ինչո՞ւ չկրցան համախմբուիլ ու միանալ, այլ մնացին լրիւ մերկապարանոց դիրքերու վրայ:

Միթէ պարզ չէ՞, որ նման թափափածութեամբ եւ ապակեդրոնացումով, անոնք չէին կրնար ապահովել յաղթական խաղաքարտեր, նոյնիսկ մօտենալ իշխանական ցուցակներուն դէմ մրցակցութեան:



Աւելին. միթէ՞ տեսանելի ու թափանցիկ չէր, որ երեք գլխաւոր ընդդիմադիր ուժերը («Ուժեղ Հայաստան»ը, «Հայաստան Դաշինք»ը ու «Բարգաւաճ Հայաստան»ը), արդէն իրենք իրար միջեւ սուր ու թունդ մրցակիցներ էին, տեսանելի կամ անտեսանելի կարգերով, բայց, միշտ թափանցիկ ու զգալի սպրդումներով ու պատկերներով:

Կը բաւէ, որ հրապուրական ու գրաւչական աղբիւրները, նիւթական անսպառ ծորակներով, արդէն ողողած էին

հրապարակները, մէկուն՝ օլիկարգային, միւսին՝ թալանչիական, երրորդին ալ՝ մաֆիական եկամուտներով, գրաւելու, բռնանալու, գնելու կամ պարտադրելու քաղաքացիներուն ազատ իրաւունքներու քուէաթերթիկները «պատանդ»ելով եւ, ամենէն կարելորն ու

նուաստացուցիչը, անոնց քաղաքացիական արժանապատուութիւնը ոտնակոխելով:

Ինչ խօսք որ՝ բոլոր քաղաքացիները չեն, որ իրենց արժանապատուութիւնները «ծախու» հանած էին, ենթարկուելու ճնշամիջոցներու կամ անձնատուր ըլլալու կեղծ խոստումներու եւ կամ՝ տեղի չտալու բռնութիւններու փորձերուն, որովհետեւ, երբեք չպակսեցան կամ բացակայեցան ազնիւ ու պարկեշտ, յանձնառու ու պատուական հայորդիներ, որոնք չմասնակցեցան ամօթալի հակաօրինակութիւններուն, ոչ ալ յանձնուեցան ոգիով ու նկարագիրով վարակուած «աճորդ»իական ստորնացուցիչ եղանակներուն:

Արդեօք ընտրակաշառքներու անպատասխանատուները, ազգագուրկ դէմքերը, հայրենապիղծ տարրերը, իրենք, այսպէս թէ այնպէս թունաւորուած ըլլալով իրենց վաստակած (՞) ու «սրսկուած» (՞)... հարստութիւններէն, ինչպէ՞ս պիտի բացատրեն եւ արդարացնեն իրենց «փալնքոտ» ապականող արարքները, երբ իրականութիւնները բացայայտուին կամ ճշմարտութիւնները երեւան գան:

Մակայն, շատեր հարց կու տան, մօտակայ թէ հեռաւոր դիտորդներ, ընդդիմութեան (չ) դեկավարներու հետեւորդները կամ համակիրները, ինչո՞ւ, մեծ մասը անգիտակից կամ անտեղեակ են, որ իրենք ո՞ւր կը գտնուին, ո՞ր հորիզոնականին վրայ կը սաւառնին, թէ՞ ամէն ինչ ձգուած է արկածա խնդրութեան վրայ կամ լքուած է պատահականութեան:

Ուրիշներ ալ կը մտածեն, նոյնիսկ կը բարձրաձայնեն, թերեւս՝ իրաւացիօրէ՛ն, ի դէմս ընդդիմութեան, իշխանութիւնները չունի՞ն որեւէ թերացում ու կաղացում, զարտադրութիւններ ու կեղծիքներ:

Կը միտինք հաւատալու, որ՝ այս կամ այն կողմէն, այս կամ այն առիթներով, եղած են սայթաքումներ ու բացառուած չեն ատոնք, այնքան ատեն որ՝ շօշափելի չեն (հարիւր տոկոսով), որովհետեւ, նման ընտրապայքարներու, ընտրամրցակցութիւններու եւ ընտրակայացումներու պարագային, միշտ ալ արձանագրուած են (եւ կրնան ըլլալ) ապօրինութիւններ:

Խնդրին էութիւնն ու հրատապութիւնը այն են, որ՝ գէթ Հայաստանի պարագային, իշխանութիւններուն դիմաց «ձեռնոց նետած» են այնպիսիներ, որոնք իրենք իրենց անցեալով ու ներկայով, այնքան «պայթուցիկ» եւ «աղիտաբեր» եղած են եւ չեն կրցած



պետութիւն-պետականութիւն ու համակարգութիւն եզրերն ու կառոյցները իրարմէ զանազանել, այլ՝ փորձելով զանոնք ծառայեցնել, իրենց դիրքերուն ու քմայքներուն հզօրացման եւ ամրապնդման, այն ալ՝ ինչպիսի՝ զելի ու սին միջոցներով:



Այսօր, երբ Հայաստանի պետութիւնը (իշխանութիւն, կառավարութիւն թէ խորհրդականութիւն), ոչ միայն կը փորձէ, այլ՝ կը ճգնի, իր հեղինակութիւնը պահել ու բարձրացնել, համապատասխան բարեկարգումներով ու զարգացումներով, վերելքներով եւ յառաջդիմութիւններով, հոլովոյթներով ու տնօրինումներով, պետական, դիւանագիտական, տնտեսական ու բարգաւաճողական տիրոյթներով ու վարկանիշներով, կը նշանակէ թէ՛ ան կը գտնուի իր դերին մէջ, որքան ալ՝ իր շուրջէն լսուին կամ արձագանգուին անախորժ, անիմաստ եւ անհաճոյ... նզովքներ ու լայրծուն քննադատութիւններ:

Զմոռնա՛լ, Հայաստանի այժմու իշխանութիւնները կը վայելեն համաերոպական եւ ընդհանրապէս համաշխարհային պետութիւններու համակրանքն ու զօրակցութիւնը, ատոնք ըլլալով ուժի ու թիկունքի լծակներ, իսկ Ռուսիոյ հետ յարաբերութիւնները բարուքելու լուրջ ընտրանքներ կան, որոնք ժամանակի ընթացքին կը վերականգնուին, որքան ալ՝ ներհայաստանեան դաշտին վրայ դեզերին «խլուրդ»ներ, կողմնակից ըլլալով անոնց ձախողութեանց:

Այս բոլորով հանդերձ, հայաստանեան այժմու գոյավիճակը, համարեա հիւանդկախ շրջան մը կ'ապրի, երբ կը տեսնուին ու կը լսուին այն տխուր երեւոյթները, մտահոգիչ գործընթացները ու խանգարիչ ներքին թէ արտաքին ազդեցութիւններն ու միջամտութիւնները, որոնք կը մեխեն ամէն ինչ արգելակել, խոչընդոտել ու պառակտել ցնցելով եւ ելեկտրականացնելով երկրին կայունութեան ու խաղաղութեան մթնոլորտը: Ընդդիմադիր շարժումները, յատկապէս գլխաւորութեամբ «Հայաստան» դաշինքին, որուն առաջնորդութեան մէջ կը գտնուի երեկուան վատահամբաւ Ռուպերթ Քոչարեանը, ներկայիս յամառօրէն կը ճեմէ հայրենական քաղաքական կեանքին մէջ, ինքզինք հոչակելով միակ «փրկիչ»ը Հայաստանին, որով կրնայ զայն վերածել... «դրախտ»ի:

Այս ձախողած, հաշմանդացած մարդուկը, կը մոռնա՛լ, իր մօտալուտ անցեալի տխրահոչակ գործողութիւնները, որոնք հայաստանցիները երբեք չեն մոռցած (ու չեն մոռնար), այլ՝ զանոնք կը յիշեն նողկանքով եւ անէծքով, նոյնիսկ ոմանք զինք նկատելով աւելի քան բռնապետ... Ստալին մը:

Քա՛ւ լիցի: «Ռոպ»ը այդ «մետաքս»էն ու «հունտ»էն չէ, այլ՝ խորթութեան, անսրտութեան եւ անպատկառութեան... անմարդկային տիսեղծ մը, որ թանգարանի մը մէջ ալ տեղ պիտի չունենայ:

Երբ ան կը գրկէ ու կը զգուէ երեխաներ ու պատանիներ, արդեօ՞ք խղճի խայթով թէ ներողամտութեամբ, պատկերացնելով՝ անոնց հայրերը, սառնասրտօրէն, գնդակահարել տուած է ու փոշիացուցած:

Ի դէպ, ուղղակի դերասանավարի քստմնելիութիւն է, այն տարբերութեամբ, որ Ստալինը հակահայ վրացի մըն էր, իսկ ինքը՝ իբրեւ թէ հայ մը, բայց, անպայմանօրէն, «շուռ տուած» կերպարով մը:

Նիկոլ Փաշինեանը, ուշացած էր եւ խիստ ուշացած, այս հրէշը ատենին չղրկելով... կրողին ծոցը, անվերադարձօրէն գոնէ զայն արտաքսելով... Յունաստանի այն կղզին, որ հայութեան փողերով սեփականացուած է ու ինք, ցարդ... մնացած անպատիժ:

Ասիկա մեծ եւ աններելի մեղանշում մըն էր Հայաստանի ու հայ ժողովուրդի հասցեին (նաեւ՝ ինչո՞ւ ոչ, Արցախին ու Արցախահայութեան):

Իսկ հիմա, երբ փորձած է ճողոպրիլ եւ ապաստանիլ իր զայրած (կամ զայրելի) տարածքներէն մէկուն վրայ, ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆ կայ, որ ան ընդմիջտ հեռանայ, իսկ



աւելի խելամիտներ, որոնց հարազատները ու համաքաղաքացիները տուժած են այս անփառունակէն, ընդոստ կը պահանջեն անոր դէմ գերարժանագոյն ու գերհօգորագոյն ամբաստանութիւններ ու դատավճիռներ, որպէսզի անգամ մըն ալ չծայրիի երեւնալ որեւէ տեղ եւ որեւէ առիթով, իսկ իր փախուստի ձախորդ փորձը Հայաստանի լաւագոյն ապացոյցն է, որ ան՝ իր փրկութեան... փրկագինը կը տեսնէ՝ բաշխելով:

Իսկ հիմա, ան, քողարկեալ պարտականութիւն տուած է (զայն խաբելով), Սամուէլ Կարապետեանը գործի լծելով, որպէս համախումբ ընդդիմութեան մը միանձնեայ ղեկավար դառնայ (վարագոյրին ետեւէն իր շուքը ձգելով):

Խեղճ Սամուէլ, սխալ տեղ ինկած ես, սխալ ժամանակով, սխալ մասնակցութեամբ ու սխալ ընկերակցութեամբ, «գոհ»ը դառնալով զոհապարտադրութեամբ հանրայայտ... զոհաբերողի մը հետ:

Ափսո՛ս, հազա՛ր ափսոս:

Մեր կարծիքով, այս ձախաւերներու ձախաւերութեամբ, ձախողածներու ձախողութեամբ, ոչ միայն դժուար, այլեւ անկարելի պիտի ըլլայ խուսանաւել դէպի խաղաղ ափեր, վախճալով որ այս չընդդիմութեան թշուառականները, ոչ մօտէն, ոչ ալ հեռուէն, կրնան դառնալ փրկութեան լաստեր, այլ՝ խայտառակութեան փշրանքներ:



Որքան փորձ կը կատարուի լաւատեսութեամբ եւ յուսադրութեամբ համակուիլ ու համակերպուիլ, սակայն, քիչեր այդ տրամադրութիւններով կը խանդավառուին, երբ հայաստանեան իրականութիւնը, հանդէս կու գայ, իր մօռայլ եւ այրող թելերով, մէկ կողմէն՝ ընդդիմութիւն կոչուած հոսանքներով, որոնք ոչինչով կ'ոգեւորեն, միւս կողմէն՝ իշխանութիւններու դերակատարութեամբ, որ կը մղուի հակադրուիլ անոնց չափազանցեալ եւ արուեստական խառնաշփոթութեանց, իսկ ատոնք որեւէ ձեւով, եղանակով, կը յուշէ՞ն հանդարտութեան ու կայունութեան սփոփիչ ժամանակաշրջանի մը գալուստը, երբ ընդհակառակը, կան ցայտուն տուեալներ, նախանշաններ ու մագլցումներ, որոնք յղի կրնան ըլլալ Հայաստանին ու հայութեան խոտոր համակեցութեան հաշուոյն:


(Պէլրութ)

4/7/2026

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ՝ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԵՍԼԱԿԱՆ

Դոկտ. Հրայր Ճեպէճեան

Յունիս 25-27, 2026ի օրերուն, Կիպրոսի տեղական եւ հայկական գաղութը ապրեցան զգացական ջերմ օրեր՝ յիշատակելով Մելգոնեան կրթական հաստատութեան հարիւրամեակը: Աշխարհի տարբեր երկիրներէ ժամանեցին Մելգոնեանի նախկին աշակերտներ թէ շրջանաւարտներ՝ որոնք իրենց զգացումները միացուցին տեղական գաղութի հետ եւ ստեղծեցին շատ գեղեցիկ «ապրող» օրեր՝ արժեւորելով վարժարանին դերը ազգային-կրթական մեծ առաքելութեանը մէջէն՝ պատմութեան տարբեր հոլովոյթներու ընթացքին: Մեծ «պրաւօ» մը Կիպրահայ գաղութին՝ որ շատ գեղեցիկ եւ բծախնդիր կերպով կազմակերպած էր հանդիսութեան այս օրերը՝ ստեղծելով յիշատակելի մթնոլորտ բոլորին:



Ռազմավարութեան: Հարցը այլեւս միայն Մելգոնեանի պատմութիւնը չէ, այլ՝ Մելգոնեանի միջոցաւ եւ անոր հետ համասփիւրքեան ազգային ռազմավարութեան մը տեսլական- ապագան մտածելու առիթ:

Երկար տարիներ Մելգոնեան կրթական հաստատութիւնը եղաւ սփիւռքահայութեան յաջող համահայկական կրթական փորձառութիւններէն մէկը: Ան ոչ միայն դպրոց էր, այլ նաեւ ազգային դարբնոց, ուր տարբեր երկիրներէ եկած հայ երիտասարդներ կը սորվէին ապրիլ իրարու հետ, կը կազմաւորէին ազգային ինքնութիւն եւ կը պատրաստուէին ծառայելու իրենց գաղութներուն եւ համայնքներուն: Մելգոնեան կրթական հաստատութիւնը կը մարմնաւորէր այն գաղափարը, որ սփիւռքը մէկ ամբողջութիւն է եւ իր գաւակները պէտք է դաստիարակուին համազգային տեսլականով:

Այսօր՝ սփիւռքի իրականութիւնը նաեւ փոխուած է: Տասնամեակներ շարունակ կարծեցինք, թէ սփիւռքը ժամանակաւոր վիճակ մըն է, որ օր մը պիտի աւարտի զանգուածային վերադարձով: Ներկայիս՝ պատմութեան ընթացքը ուրիշ ուղղութեան մը մէջ է: Այսօր արդէն յստակ է, որ սփիւռք(ներ)ը կը դառնայ-դառնան հայ ժողովուրդի մնայուն ներկայութիւններէն մէկը: Անոր- անոնց դիմագրաւած մարտահրաւերները՝ ճուրում, լեզուի կորուստ, ինքնութեան նահանջ եւ ազգային արժէքներու տկարացում, պահանջ կը ներկայացնեն նոր մտածողութեան- ռազմավարութեան մը եւ զայն իրականացնելու համար ստեղծելու նոր հիմնարկ-միաւորներու:

Այս պայմաններուն մէջ Մելգոնեանի վերաբացումը պէտք է դիտուի ոչ թէ որպէս զգացական արդարացում կամ անցեալի սխալ(ը) որոշումի ետդարձ, այլ որպէս ազգային ռազմավարական անհրաժեշտութիւն: Համասփիւրքեան կրթական կեդրոնի մը գոյութիւնը կրնայ դառնալ այն առանցքը, որուն շուրջ պիտի վերակազմակերպուի ապագայի սփիւռքեան ղեկավարութեան պատրաստութիւնը: Այսպիսի հաստատութիւն մը կրնայ ընդունիլ աշակերտներ աշխարհի տարբեր գաղութներէն, զանոնք կրթել բարձր մակարդակով, ամրապնդել հայերէնը, ազգային գիտակցութիւնը եւ ծառայութեան ոգին, ապա վերադարձնել զանոնք իրենց համայնքներ՝ իբրեւ պատրաստուած առաջնորդներ: Մնայուն հայկական սփիւռք-սփիւռքներու համար պէտք է արտադրել ազգային նոր մշակոյթ ու դիմագիծ՝ որ կը համընկնի աշխարհի ստեղծած նոր իրավիճակներու մէջ:



Այս իմաստով՝ Մելգոնեանի վերաբացումը ինքնանպատակ չէ ու չի կրնար ըլլալ: Անկա պետք է հիմնուի ժամանակակից տեսականի վրայ: Նոր Մելգոնեանը պետք է ըլլայ ոչ միայն երկրորդական կրթական հաստատութիւն, այլ նաեւ ուսուցիչներու պատրաստութեան կեդրոն, սփիւռքագիտական հետազոտութիւններու օճախ, երիտասարդական առաջնորդութեան սկադեմիա, համահայկական համագործակցութեան հարթակ ու տակաւին: Այսօրուան աշխարհը կը պահանջէ նոր հմտութիւններ, նոր կրթական մօտեցումներ եւ նոր ցանցեր, որոնց ստեղծման մէջ Մելգոնեանը կրնայ դարձեալ առաջատար դեր ստանձնել:

Բնականաբար, այսպիսի ծրագիր մը կը պահանջէ քաղաքական կամք, ազգային համաձայնութիւն եւ նիւթական լայն միջոցներ: Բայց ամէնէն առաջ կը պահանջէ հաւատք, որ սփիւռքը արժանի է երկարաժամկետ ներդրումի: Եթէ կը հաւատանք, որ սփիւռքը պիտի շարունակէ մնալ հայկական իրականութեան հիմնական եւ մնայուն սիւններէն մէկը, ապա չենք կրնար զայն ձգել առանց համագային կրթական, մշակութային եւ ազգային կեդրոններու ու հիմնարկներու ծրագրումին:

Այս բոլորին վրայ արժէ աւելցնել Մելգոնեանի աշխարհագրական դիրքը եւ վայրը: Կիպրոսի հանրապետութիւնը՝ որ Եւրոպական Միութեան լիարժէք անդամ է՝ առանձնաշնորհուած է աշխարհաքաղաքան շատ կարեւոր եւ դիպուկ վայրով մը: Մէկ կողմէ Կիպրոս շատ մօտ է միջին արեւելքի ու տակաւին կամուրջ է եւրոպայի ու աշխարհի տարբեր երկիրներու հետ: Եւ ինչ խօսք որ՝ Կիպրոսի հանրապետութիւնը բարեկամ երկիր է Հայաստանի եւ հայ ժողովուրդի՝ ստեղծելով շատ ջերմ յարաբերութիւններ Հայաստանի հանրապետութեան եւ հայ ժողովուրդի տարբեր զանգուածներու հետ:

Ուստի՝ Մելգոնեանի հարիւրամեակի ոգևորութիւնը պետք չէ սահմանափակուի յուշերով, հանդիսութիւններով եւ զգացական խօսքերով: Այդ բոլորը շատ լաւ են եւ կարեւոր: Այս պահը պետք է վերածուի կազմակերպուած առաքելութեան՝ յստակ նպատակով, լայն համախմբումով եւ գործնական քայլերով: Հարիւրամեակը պետք է դառնայ մեկնակետ, ոչ թէ եզրակացութիւն:

Մելգոնեանը արժէ վերաբանալ ոչ միայն որովհետեւ անցեալին մեծ ծառայութիւն մատուցած է, այլ որովհետեւ ապագային կրնայ դարձեալ ծառայել: Ազգեր, որոնք կը մտածեն իրենց վաղուան օրուան մասին, կը կառուցեն միտք եւ տեսական: Եւ միտքը ու տեսականը իրականացնելու համար պետք է հաստատութիւններ: Այս իմաստով հայը՝ եթէ իսկապէս կը հաւատայ սփիւռքի շարունակական առաքելութեանը, պետք է մտածէ վերաբանալու Մելգոնեանը՝ որպէս համասփիւռքեան ազգային կեանքի համար մէկ նոր ռազմավարական դարբնոց:

Հայկական սփիւռքի մնայուն կարգավիճակը կամրապնդուի՝ եթէ ամեակները կրնանք վերածել յիշատակումներէ դէպի ազգային ռազմավարութեան նոր տեսականներու իրականացմանը: Մելգոնեան կրթական հաստատութիւնը մէկ կարեւոր միաւորն է այս իմաստով:

Եթէ կուզենք հայուն կեանքը դնել պատմութեանը շարունակականութեան գործընթացի մէջ՝ պիտի հաւատանք ծրագրուած աշխատանքի:

Եւ աշխատանքը կը ներառէ կամք:

Եւ ուր որ կամք կայ՝ հոն կեանք կայ:

Հայուն կեանքը...

Նիկոսիա, Յունիս 2026

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓԻԻՌ. ԶԳԱՑԱԿԱՆ ԿԱՊԵՆ ԴԵՊԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՀԱՐՈՆ ՇԻՐՏՏՄԵԱՆ



Հայաստան–Սփիւռք

փոխյարաբերությունները մեր ազգային կեանքի ամենէն կենսական, բայց նաեւ ամենէն նուրբ եւ բարդ հարցերէն մէկը կը կազմեն: Այս յարաբերությունները ծնունդ առած են պատմական յիշողութենէն, նոյն արմատին պատկանելու գիտակցութենէն, հայրենիքի հանդէպ սիրոյն եւ սերունդէ սերունդ փոխանցուած ազգային զգացումէն: Սակայն ժամանակները փոխուած են, աշխարհը՝ եւս, իսկ Հայաստանի ու Սփիւռքի առջեւ կանգնած մարտահրաւերները այսօր կը

պահանջեն, որ այդ կապը այլեւս չսահմանափակուի միայն յուզական հայրենասիրութեամբ, բարեսիրական նախաձեռնություններով կամ ճգնաժամերու պահուն արտայայտուող համախմբումով: Անհրաժեշտ է զայն վերածել հասուն, փոխադարձ պատասխանատուութեան վրայ հիմնուած եւ ապագային միտող ռազմավարական գործընկերութեան:

Հայաստանի մէջ ապրող հայն ու Սփիւռքի հայը նոյն ժողովուրդին զաւակներն են, սակայն անոնց կեանքի պայմանները, փորձառությունները եւ մտահոգությունները նոյնը չեն:

Հայաստանի քաղաքացին ամէն օր կ'ապրի պետութեան անվտանգութեան, տնտեսութեան, ներքին կառավարման եւ արտաքին քաղաքական որոշումներուն անմիջական հետեւանքները: Սփիւռքահայը, իր կարգին, ազգային հարցերուն կը մօտենայ իր բնական երկրի իրականութենէն, իր համայնքի պատմական փորձառութենէն, իր մշակութային դիմագիծը պահպանելու պայքարէն եւ երբեմն ալ կորսուելու մտավախութենէն ելլելով: Այս տարբերութիւնը պէտք չէ դիտել իբրեւ բաժանարար գիծ: Ընդհակառակը՝ ան կրնայ դառնալ փոխադարձ հարստացման աղբիւր, եթէ Հայաստան եւ Սփիւռք սորվին զիրար լսել՝ առանց նախապաշարումի եւ զիրար գնահատել՝ առանց գերակայութեան զգացումի:

Նախ անհրաժեշտ է ընդունիլ, որ Սփիւռքը միատարր մարմին մը չէ: Լիբանանի, Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Արժանթինի, Աւստրալիոյ եւ աշխարհի այլ երկիրներու հայ համայնքները տարբեր պատմութիւն, կազմակերպական կեանք, լեզուական վիճակ, քաղաքական մշակոյթ եւ առաջնահերթություններ ունին: Ուստի կարելի չէ Սփիւռքի բոլոր համայնքներուն հետ յարաբերիլ նոյն ձեւով կամ զանոնք դիտել իբրեւ մէկ ձայնով խօսող ամբողջութիւն: Համահայկական քաղաքականութիւնը պէտք է ըլլայ ճկուն, խորաթափանց եւ իւրաքանչիւր համայնքի առանձնայատկություններուն համապատասխան:

Սակայն Սփիւռքը միաժամանակ պարտաւոր է գիտակցիլ, որ Հայաստանը միայն պատմական հայրենիք, զգացական հանգրուան կամ ազգային երազանք չէ: Հայաստանը պետութիւն է՝ ինքնիշխան պետականութեամբ, սահմանադրութեամբ, պետական հաստատություններով, միջազգային պարտաւորություններով, անվտանգութեան խնդիրներով եւ իր գոյութեան համար մղուող ամենօրեայ պայքարով: Իսկ պետությունները



կունենան իրենց ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, որ միշտ չէ, թէ կրնայ համապատասխանել Սփիւռքի բոլոր շրջանակներուն ակնկալութիւններուն, գաղափարական մօտեցումներուն կամ ցանկութիւններուն: Այս իրողութիւնը ընդունիլը հայրենասիրութենէ հեռացում չէ, այլ պետական մտածողութեան հասուն արտայայտութիւն:

Այստեղ անհրաժեշտ է յստակ սահմանում կատարել հայկական քաղաքական կուսակցութիւններու, կազմակերպութիւններու կամ գաղափարական հոսանքներու ցանկութիւններուն եւ Հայաստանի Հանրապետութեան պետական քաղաքականութեան միջեւ: Որեւէ կուսակցութիւն, որքան ալ հարուստ պատմութիւն, ազգային ծառայութիւն կամ ազդեցութիւն ունեցած ըլլայ, չի կրնար իր ծրագիրն ու քաղաքական պատկերացումները նոյնացնել պետութեան ամբողջական շահերուն հետ: Պետութիւնը պարտաւոր է գործել ոչ թէ կուսակցական զգացումով, այլ պետական պատասխանատուութեամբ՝ նկատի ունենալով երկրի անվտանգութիւնը, ժողովուրդի բարօրութիւնը, միջազգային յարաբերութիւնները եւ երկարաժամկէտ ազգային շահը: Սակայն պետական իրատեսութիւնը երբեք պէտք չէ վերածուի ազգային ինքնութեան հիմնական սիւներուն նկատմամբ անտարբերութեան կամ հրաժարումի: Հայաստանի Հանրապետութիւնը, հայկական պետականութեան կրողը, պարտաւոր է կառչած մնալ մեր ազգային խորհրդանիշներուն, պատմական յիշողութեան, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, պահանջատիրական պայքարին, հայոց լեզուի, ազգային մշակոյթի եւ հոգեւոր արժէքներու պահպանութեան: Այս հիմնահարցերը չեն պատկանիր միայն Սփիւռքին կամ առանձին քաղաքական ուժերու: Անոնք ամբողջ հայ ժողովուրդի պատմական իրաւունքներուն, արժանապատուութեան եւ գոյութեան շարունակականութեան հետ կապուած համազգային հարցեր են:

Պահանջատիրութիւնը պէտք է վերածուի պետական մտածողութեամբ առաջնորդուող, միջազգային իրաւունքի, դիւանագիտութեան, պատմագիտական ճշմարտութեան եւ ազգային անվտանգութեան պահանջներուն համապատասխան երկարաժամկէտ քաղաքականութեան: Պետական իրատեսութիւնն ու ազգային հաւատարմութիւնը իրարու հակադիր հասկացութիւններ չեն: Ճիշդ հակառակը՝ իսկական պետականութիւնը կը պահանջէ իրապաշտ ըլլալ՝ առանց ազգային յիշողութիւնը ուրանալու, իսկ ազգային հաւատարմութիւնը կը պահանջէ նպատակաւաջ ըլլալ՝ առանց պետութեան գոյութիւնը վտանգելու:

Սփիւռքահայր, անշուշտ, իրաւունք ունի կարծիք յայտնելու, քննադատելու, մտահոգութիւն բարձրացնելու եւ ազգային հարցերու շուրջ դիրքորոշում ունենալու: Սակայն պէտք է նաեւ ընդունի, որ պետական որոշումներու վերջնական պատասխանատուութիւնը կը կրէ Հայաստանի Հանրապետութիւնը, որովհետեւ այդ որոշումներուն հետեւանքները առաջին հերթին կը կրեն Հայաստանի քաղաքացիները: Միւս կողմէ, Հայաստանի իշխանութիւնները եւս պէտք չէ Սփիւռքը դիտեն միայն դրամական օգնութեան աղբիւր, արտաքին քարոզչութեան միջոց կամ ճգնաժամերու պահուն դիմելի ուժ: Սփիւռքը հայկական աշխարհի անբաժանելի մասն է՝ իր հաստատութիւններով, մտաւորական ներուժով, տնտեսական կարողութիւններով եւ բազմամեայ փորձառութեամբ:

Հայաստան–Սփիւռք յարաբերութիւններուն մէջ այսօր առկայ է նաեւ փոխադարձ վստահութեան բացակայութիւն մը: Սփիւռքի մէջ յաճախ կը հնչէ այն մտահոգութիւնը, թէ իր ձայնը չի լսուիր, իր փորձառութիւնը չի գնահատուիր, իսկ իր մասնակցութիւնը կը սահմանափակուի նուիրատուութեամբ: Հայաստանի մէջ ալ երբեմն կը ձեւաւորուի այն համոզումը, թէ Սփիւռքը հեռուէն խորհուրդներ կու տայ այնպիսի հարցերու շուրջ, որոնց ծանր հետեւանքները ինք անմիջականօրէն չի կրեր: Այս կացութիւնը կարելի չէ յաղթահարել միայն կոչերով: Անհրաժեշտ են մնայուն եւ վստահելի հարթակներ, ուր



կողմերը կրնան բացօթյա խօսիլ, տարակարծիլ՝ առանց թշնամանալու, քննադատել՝ առանց պառակտելու, եւ համաձայնութեան հասնիլ՝ առանց սեփական արժանապատուութիւնը կորսնցնելու:

Ժամանակն է նաեւ, որ Հայաստան–Սփիւռք կապը բարեգործական յարաբերութենէն անցնի գործընկերային մտածողութեան: Բարեսիրութիւնը միշտ ալ պիտի ունենայ իր կարեւոր տեղը, յատկապէս աղէտներու, պատերազմներու եւ ընկերային դժուարութիւններու ժամանակ: Սակայն հայրենիքը երկարաժամկէտ կերպով չի զարգանար միայն հանգանակութիւններով: Զարգացումը կը պահանջէ ներդրում, տնտեսութիւն, արտադրութիւն, գիտելիք, նորարարութիւն, աշխատանքային մշակոյթ եւ վստահելի հաստատութիւններ: Սփիւռքի տնտեսական ներուժը պէտք է ուղղուի ոչ միայն օգնութեան, այլեւ աշխատատեղերու ստեղծման, ձեռնարկատիրութեան զարգացման, միջազգային շուկաներու հետ կապերու ամրապնդման եւ նոր արհեստագիտութիւններու ներմուծման: Իսկ Հայաստանի պարտականութիւնն է ստեղծել թափանցիկ, արդար եւ վստահութիւն ներշնչող միջավայր:

Սփիւռքի ամենամեծ հարստութիւններէն մէկը իր մասնագիտական ներուժն է: Աշխարհի տարբեր երկիրներու մէջ կը գործեն հայ գիտնականներ, բժիշկներ, ճարտարագէտներ, տնտեսագէտներ, իրաւաբաններ, կրթական մշակներ, արուեստագէտներ եւ գործարարներ: Անոնց փորձառութիւնը երբեմն շատ ակնհայտ արժէքաւոր կրնայ ըլլալ, քան դրամական նուիրատուութիւնը: Անհրաժեշտ է ստեղծել համահայկական մասնագիտական ցանցեր եւ գործուն համակարգեր, որոնց միջոցով Սփիւռքի կարող ուժերը կրնան մասնակցիլ Հայաստանի գիտական, կրթական, տնտեսական եւ պետական զարգացման: Հայրենիքին ծառայելը միշտ չէ, որ կը նշանակէ հայրենիք տեղափոխուիլ. երբեմն կը նշանակէ գիտելիք փոխանցել, դուռ բանալ, կապ ստեղծել կամ պատասխանատու նախագիծ մը ստանձնել: Առանձնապատուկ ուշադրութեան արժանի է երիտասարդ սերունդը: Սփիւռքի նոր սերունդներուն համար Հայաստանը պէտք չէ մնայ միայն ընտանեկան պատմութիւններու, անցեալի վերքերու կամ խորհրդանշական հայրենասիրութեան երկիր: Ան պէտք է դառնայ ապրող, շօշափելի եւ անձնական իրականութիւն: Երիտասարդը պէտք է Հայաստանին ծանօթանայ ոչ միայն գիրքերէն ու հանդիսութիւններէն, այլեւ այցելութեամբ, ուսումով, աշխատանքի փորձառութեամբ, կամաւորական ծառայութեամբ եւ մարդկային կենդանի կապերով: Միայն այդպէս կարելի է հայրենիքի գաղափարը ժառանգուած զգացումէ վերածել գիտակցուած պատկանելիութեան:

Հայոց լեզուի, յատկապէս արեւմտահայերէնի պահպանումը եւս համազգային հրամայական է: Արեւմտահայերէնը միայն Սփիւռքի լեզուն չէ, այլ հայ ժողովուրդի մշակութային ժառանգութեան մեծագոյն գանձերէն մէկը: Անոր աստիճանական անհետացումը ամբողջ հայութեան համար անփոխարինելի կորուստ մըն է: Հայաստանի պետութիւնը պէտք է գործնական պատասխանատուութիւն ստանձնէ արեւմտահայերէնի, սփիւռքահայ գրականութեան, մամուլի, դպրոցներու եւ մշակութային հաստատութիւններու պահպանման հարցին մէջ: Սփիւռքն ալ, իր կարգին, պէտք է նոր ուղիներ գտնէ լեզուն երիտասարդ սերունդներուն փոխանցելու՝ օգտագործելով ժամանակակից կրթական մեթոտները, թուային միջոցները եւ ստեղծագործ մշակութային նախաձեռնութիւնները:

Սփիւռքը նաեւ Հայաստանի միջազգային ձայնն է: Աշխարհի բազմաթիւ երկիրներու մէջ հայկական համայնքները կրնան մեծ դեր խաղալ Հայաստանի շահերու ներկայացման, Հայոց ցեղասպանութեան ճանաչման, հանրային կարծիքի ձեւաւորման, մշակութային դիւանագիտութեան եւ միջազգային կապերու զարգացման մէջ: Սակայն այս ներուժը կրնայ լիարժէք արդիւնք տալ միայն այն ատեն, երբ գոյութիւն ունի նպատակներու յստակութիւն, համակարգում եւ փոխադարձ վստահութիւն: Երբ Հայաստան եւ Սփիւռք տարբեր



լեզուներով կը խօսին նոյն հարցին շուրջ, համազգային ձայնը կը տկարանայ: Իսկ երբ անոնք կը գործեն համաձայնեցուած եւ կազմակերպուած ձեւով, նոյնիսկ փոքր ժողովուրդի ձայնը կրնայ լսելի դառնալ աշխարհի մէջ:

Հայաստան–Սփիւռք յարաբերութիւնները պէտք է դուրս գան միայն վտանգի պահուն իրար փնտռելու սովորութենէն: Անհրաժեշտ է երկարաժամկետ համահայկական տեսլական մը, որ յստակ պատասխաններ տայ, թէ ի՛նչ Հայաստան կուզենք կառուցել, ի՛նչ Սփիւռք կուզենք պահպանել, եւ ինչպիսի՛ կապ պէտք է հաստատուի երկուքին միջեւ: Պէտք է որոշել, թէ որոնք են այն ազգային նպատակները, որոնք վեր են իշխանութիւններէն, կուսակցութիւններէն եւ ժամանակաւոր քաղաքական տարակարծութիւններէն:

Հայաստանը պէտք է Սփիւռքը տեսնէ ո՛չ հեռաւոր օժանդակ ուժ, այլեւ համազգային կեանքի լիիրաւ մասնակից: Սփիւռքը Հայաստանը պիտի ընդունի ոչ միայն զգացական հայրենիք, այլեւ որպէս պետութիւն՝ իր իրաւունքներով, պարտականութիւններով եւ քաղաքական պատասխանատուութեամբ: Միայն այս փոխադարձ գիտակցութեան վրայ կարելի է կառուցել առողջ եւ կենսունակ յարաբերութիւն:

Հայաստան եւ Սփիւռք ճակատագիրով իրարու կապուած են: Մէկուն թուլացումը անխուսափելիօրէն կը տկարացնէ միւսը, իսկ մէկուն հզօրացումը ուժ կու տայ համայն հայութեան: Այդ պատճառով մեր ազգային ապագան կախեալ է ոչ միայն մեր զգացումներէն, այլեւ զիրար հասկնալու, զիրար յարգելու եւ միասնաբար պատասխանատուութիւն ստանձնելու պատրաստակամութենէն: Միայն այդպէս կարելի է պատմական կապը վերածել ապագայ կերտող ուժի:

11/7/2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՊԱՔՈՒԷՆ ԴԻՏՈՒԱԾ



SԱՐԲԵՐԱԿ21

7/7/2026

Ստորեւ կը ներկայացնենք ատրպէճանցի հեղինակ Վասիֆ Հիւսէյնովի տեսակէտը, ինչպէս հրապարակուած է The Liberrum առցանց վերլուծական հարթակին մէջ: Յօդուածը (բնագիրը՝ այստեղ) կը ներկայացնէ զուտ հեղինակին գնահատականներն ու մեկնաբանութիւնները: Զայն կը հրատարակենք թարգմանաբար, որպէսզի մեր ընթերցողները ծանօթանան այն մտածողութեան, որ ներկայիս կը շրջանառուի Պաքուի քաղաքական-վերլուծական որոշ շրջանակներուն մէջ: Կցուած լուսանկարը նոյնպէս քաղուած է The Liberrum-ի էջէն:



Հայաստանի 7 Յունիսի խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքին նշանակութիւնը կ'անցնի երկրին սահմաններէն անդին: Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը ստանալով ձայներուն 49,81 առ հարիւրը, Սամուէլ Կարապետեանի «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 23,29 առ հարիւրը, իսկ Ռոպերթ Քոչարեանի «Հայաստան» դաշինքը՝ 9,94 առ հարիւրը,

Փաշինեան կը պահէ խորհրդարանական իր մեծամասնութիւնը եւ երրորդ անընդմէջ շրջանի համար կը կազմէ միակուսակցական կառավարութիւն մը: Այս արդիւնքը կը հաստատէ, որ Ղարաբաղէն ետք Հայաստանի մէջ ձեւաւորուած քաղաքական կարգը կայուն է. խաղաղութեան օրակարգին դէմ պայքարող ուժերը յայտնապէս մերժուեցան:

Այսուհանդերձ, ընտրութեան արդիւնքը, ինքնին, չ'ամբողջացնէր խաղաղութեան կերտուածքը: Հայաստանի եւ Ատրպէճանի միջեւ պաշտօնական խաղաղութեան պայմանագիրը չի կրնար ստորագրուիլ, մինչեւ որ Հայաստանի սահմանադրութիւնը չբարեփոխուի՝ ջնջելով 1990-ի Անկախութեան Հռչակագիրէն ժառանգուած տարածքային պահանջատիրական ձեւակերպումները՝ պահանջ մը, որ Ատրպէճանը դրած է միանշանակ յստակութեամբ, եւ որ կը հանդիսանայ ամբողջ կարգաւորման գործընթացը կաշկանդող գլխաւոր պայմանը:

Պաքուէն դիտուած՝ 7 Յունիսի խորհրդարանական ընտրութիւններուն արդիւնքը աւելի խոր նշանակութիւն ունի, քան սովորաբար կ'ընդունին Հայաստանի ներքին քաղաքական զարգացումներուն վրայ կեդրոնացած վերլուծութիւնները: 7 Յունիսի արդիւնքը, ըստ



Էութեան, ատրպէյճանական քաղաքականութեան արդարացիութեան դրսեւորումն է: Եթէ Ատրպէյճան հետեւողականօրէն յառաջ չմղէր իր խաղաղութեան օրակարգը, դժուար է պատկերացնել, որ հայկական քաղաքական վերնախաւը, ուր մնաց՝ հայ ընտրագանգուածը, խաղաղութիւնն ու տարածքային ամբողջականութեան ճանաչումը ազգային օրակարգի հիմք պիտի ընդունէին:

Խաղաղութեան այս գործընթացին նուաճումներն էին, որ վերաձեւաւորեցին հայկական քաղաքականութիւնը: Ընտրութեան արդիւնքը կը վկայէ այնպիսի հանրութեան մը մասին, որ անհրաժեշտ հետեւութիւնները քաղած է զինեալ հակամարտութենէն եւ ընդունած, թէ կայուն պետականութիւնը կը պահանջէ համակեցութիւն հարեւաններուն հետ՝ անոնց միջազգայնօրէն ճանաչուած սահմաններուն մէջ:

Այս տեսակէտը կը հաստատուի ընտրութիւններէն ամիսներ առաջ խաղաղութեան գործընթացին զուգահեռ ձեռնարկուած գործողութիւններով: 2025-ի Օգոստոսին Սպիտակ տան մէջ տեղի ունեցած հանդիպումէն ետք, Ատրպէյճանի գործնական քայլերն էին, որ շօշափելի բովանդակութիւն տուին խաղաղութեան օրակարգի վրայ հիմնուած Փաշինեանի ընտրարշաւին: Հայաստանի հետ սահմանը կայունացաւ եւ անդորրը պահպանուեցաւ: Ատրպէյճանի տարածքով հայկական ապրանքներու տարանցման սահմանափակումները վերցուեցան՝ ճամբայ բանալով դէպի երրորդ երկիրներու շուկաներ: Երկկողմանի շփումները քաղաքացիական հասարակութեան եւ հաստատութենական ուղիներով վերսկսան, իսկ նախորդ շրջանին բնորոշ յարձակողական հռետորաբանութիւնը միտումնաւոր կերպով մէկ կողմ դրուեցաւ:

Անոնք զիջումներ չէին, այլ նախապէս հաշուարկուած վստահութեան ամրապնդման միջոցառումներ, որոնք նպատակ ունէին հայ հանրութեան ցոյց տալու, թէ խաղաղութիւնը ոչ միայն հնարաւոր, այլեւ օգտակար է: Անոնք ձեւաւորեցին այն քաղաքական միջավայրը, ուր տեղի ունեցան 7 Յունիսի ընտրութիւնները:

Ընտրութիւններէն բխող հիմնական չլուծուած հարցը սահմանադրական է, եւ հոս է, որ խաղաղութեան գործընթացը կը դիմագրաւէ իր ամենէն վճռորոշ փորձութիւնը: Փաշինեան չկրցաւ ապահովել խորհրդարանին մէջ սահմանադրական փոփոխութիւններ նախաձեռնելու անհրաժեշտ երկու երրորդ մեծամասնութիւնը:

Սահմանադրութեան նախաբանին մէջ 1990 թուականի Անկախութեան հռչակագիրին կատարուած որեւէ յղումի փոփոխութիւն, ներառեալ «Լեռնային Ղարաբաղի վերամիաւորումը Հայաստանի հետ» ձեւակերպումը, այժմ պէտք է ներկայացուի առանձին համաժողովրդական հանրաքուէի: Ատրպէյճանի կեցուածքը յստակ է. պաշտօնական խաղաղութեան պայմանագիրը պիտի չստորագրուի, քանի դէռ այդ ձեւակերպումը չէ ջնջուած: Ասիկա կը հանդիսանայ ամբողջ խաղաղութեան կառուցուածքը կաշկանդող հիմնական պայմանը:

Հանրաքուէն դիւրին պիտի չըլլայ: Քարոզարշաւի մթնոլորտը պիտի ձեւաւորուի նոր խորհրդարան մտած ընդդիմադիր երկու դաշինքներուն կողմէ: «Ուժեղ Հայաստան»ն ու «Հայաստան» դաշինքը միասին կը ներկայացնեն ընտրագանգուածին մօտ 33 առ հարիւրը եւ սահմանադրական փոփոխութիւնը պիտի ներկայացնեն որպէս ազգային ինքնութենէ հրաժարում:



Այս դաշինքները բացայայտորեն յայտարարած են, որ եթէ իշխանութեան գան, պիտի դադրեցնեն խաղաղութեան գործընթացը եւ պիտի հրաժարին անոր յանձնառութիւններէն: Անոնց ներկայութիւնը խորհրդարանին մէջ կ'երաշխաւորէ, որ հանրաքուէի քարոզարշաւը առաւելագոյն չափով վիճայարոյց պիտի ըլլայ:

Խաղաղութեան դէմ այս ներքին ընդդիմութիւնը նաեւ արտաքին խորք ունի, ինչ որ աւելի հրատապ կը դարձնէ խաղաղութեան գործընթացը առանց անհարկի ուշացումներու յառաջ մղելը: Կարգաւորման դէմ կանգնած խորհրդարանական երկու դաշինքները աշխարհաքաղաքական դատարկութեան մէջ չեն գործեր: Արտաքին դերակատարները, որոնք շահագրգռուած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ լարուածութեան պահպանմամբ, ունին թէ՛ շարժառիթը, թէ՛ միջոցները՝ այս ուժերուն աջակցելու եւ զանոնք աւելի ազդեցիկ դարձնելու համար:

Խաղաղութեան երկարաշունչ գործընթաց մը, յատկապէս եթէ ան կապուած ըլլայ տարիներ շարունակուող սահմանադրական քննարկումներու եւ հանրաքուէի նախապատրաստութիւններու, երկարատեւ անորոշութիւն պիտի ստեղծէ: Այդպիսի անորոշութիւնը արտաքին դերակատարներուն աւելի լայն հնարաւորութիւններ կու տայ ազդելու ներքին քաղաքականութեան եւ շահագործելու գոյութիւն ունեցող բաժանումները:

Որքան աւելի ուշանայ վերջնական խաղաղութեան համաձայնագիրը, այնքան աւելի կը մեծնայ այն վտանգը, որ Հայաստանի ընդդիմադիր խմբաւորումները պիտի քաջալերուին եւ աջակցութիւն ստանան արտաքին ուժերէ, որոնք կը ձգտին հակամարտութիւնը պահպանելու որպէս տարածաշրջանային ազդեցութեան գործիք:

Այս պատճառով, լուծումը խաղաղութեան գործընթացը արագացնելն է: Սահմանադրական փոփոխութիւններու աւարտումն ու խաղաղութեան պայմանագրին ստորագրումը, քանի որ ներկայ թափը պահպանուած է, պիտի նուազեցնեն արտաքին միջամտութեան հնարաւորութիւնները եւ աւելի դժուար պիտի դարձնեն գործընթացի շրջումը ներքին ընդդիմադիրներուն կողմէ: Ատենին կնքուած համաձայնագիրը խաղաղութիւնը քաղաքական մրցակցութեան թեմայէ կը վերածէ քաղաքական նոր իրականութեան:

Հետեւաբար, Ատրպէյճանի յետընտրական ակնկալութիւնները բազմաշերտ են եւ փուլային: Մօտ ապագային, Ղարաբաղի անջատողական նախագիծին առնչուած բոլոր հաստատութիւնները, կառոյցները եւ ներկայացուցչութիւնները՝ թէ՛ Հայաստանի մէջ, թէ՛ արտասահմանի հայկական դիւանագիտական եւ սփիւռքեան շրջանակներու մէջ, ներառեալ Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու, պէտք է պաշտօնապէս լուծարուին:

Այս կառոյցներուն շարունակական գոյութիւնը կը հակասէ կարգաւորման օրակարգի հիմնադրոյթին: Ան քաղաքական շունչ կու տայ Հայաստանի այն ուժերուն, որոնք կը մերժեն ընդունիլ տեղի ունեցածին վերջնականութիւնը: Ասկէ գատ, հանրաքուէն պէտք է հրաւիրուի, կազմակերպուի եւ յաղթանակով աւարտի այնպիսի ժամկէտի մը մէջ, որ կը պահպանէ խաղաղութեան գործընթացին թափը, փոխանակ թոյլ տալու, որ ան մարի: Միայն այդ պարագային իրագործելի պիտի դառնայ պաշտօնական խաղաղութեան պայմանագիրը, որ նախաստորագրուած է, բայց տակաւին չէ կնքուած, եւ որուն բնագիրը

վերջնականացած է, սակայն ուժի մէջ մտնելը կախեալ կը մնայ սահմանադրական հարցի լուծումէն:

Վերջ ի վերջոյ, Յունիս 7-ի քուէարկութիւնը կը հաստատէ, որ հայ ընտրագանգուածը ընտրած է խաղաղութեան օրակարգին յանձնառու կառավարութիւն մը, մերժած է այլընտրանքները եւ այդ որոշումը կայացուցած է այնպիսի մասնակցութեամբ, որ արդիւնքին իսկական ժողովրդավարական օրինականութիւն կու տայ: Մակայն այդ ընտրութիւնը ստորագրուած խաղաղութեան պայմանագրի վերածելու համար անհրաժեշտ սահմանադրական գործիքը տակաւին գոյութիւն չունի:

Թէ արդեօք Փաշինեան պիտի կարենա՞յ Հայաստանի մէջ կազմել քաղաքական այնպիսի համախմբում մը, որ հանրաքուէի միջոցով ճամբան պիտի հարթէ խաղաղութեան պայմանագրին, եւ այնպիսի ժամանակամիջոցի մը մէջ, որ անխաթար կը պահէ խաղաղութեան գործընթացը, այն հիմնական խնդիրն է, որմէ ի վերջոյ կախեալ է Հարաւային Կովկասի վերափոխումը:

Վասիֆ Հիւսէյնով

The Librum

Դոկտ. Վասիֆ Հիւսէյնով Պաքուի Ազգային Յարաբերութիւններու Վերլուծութեան Կենդրոնի (AIR Center) բաժնի վարիչն է եւ Պաքուի Խազար համալսարանի դասախօս

•

ԱԶԳԸ ԿԸ ԿՈՐԾԱՆԵՆ ՈՉ ԹԷ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ, ԱՅԼ ՄԵՓԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐԸ



• **ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ**

1/7/2026



շահերը՝ արդարութիւն: Իսկ ալ աւելի ճգնաժամային ու քառսային կ'ըլլայ կործանումը, երբ ներհասարակական տարբեր խումբեր տարբեր արժեքներ կը

• Ազգերը սովորաբար չեն կործանիր այն պահուն, երբ առաջին թշնամին կ'անցնի սահմանը: Այդ տառն կործանումը յաճախ արդէն շատոնց սկսած կ'ըլլայ: Անիկա կը սկսի շատ աւելի կանուխ՝ այն պահուն, երբ հասարակութիւնը կը կորսնցնէ ինքզինք քննադատելու ունակութիւնը եւ կը սկսի անձնական ցանկութիւնները կոչել ճշմարտութիւն, իսկ անձնական ճգնաժամային ու քառսային կ'ըլլայ

դաւանին եւ զանոնք միաւորող միակ երեւոյթը համակարգուած փոխադարձ ատելութիւնն է:

- Ինչպէս մարդկութեան պատմութեան, այնպէս ալ ամէն ազգի ու հասարակութեան մեծագոյն ողբերգութիւնները ծնունդ առած են ոչ թէ չարիքի բացայայտ պաշտամունքէն, այլ բարիի անունով գործուող չարիքներէն: Ոչ մէկ պատերազմ սկսած է «մենք կ'ուզենք թալանել» կամ «մենք կ'ուզենք կործանիլ» կարգախօսով: Ոչ մէկ բռնապետ երբեւէ յայտարարած է, թէ իշխանութեան եկած է մարդոց ազատութիւնը խլելու համար: Ոչ մի գաղափարախօսութիւն ինքզինք երբե՛ք չար չէ անունանած: Ընդհակառակը՝ բոլորը խօսած են ազատութեան, արդարութեան, անվտանգութեան, հաւատքի, հայրենիքի, ժողովուրդի փրկութեան կամ պատմական առաքելութեան անունով: Այնպէս ինչպէս հիմա եւ հոս:
- Նոյնիքն այստեղ կը սկսի բանականութեան մեծագոյն ողբերգութիւնը:
- Մարդը միակ կենդանին է, որ կրնայ բարոյական հիմնաւորում ստեղծել իր ազահութեան, վրէժի, վախի կամ իշխանասիրութեան համար: Կենդանին կը սպանէ, որովհետեւ անօթի է: Մարդը կը սպանէ եւ յետոյ հազար էջոնց աշխատութիւն կը գրէ, թէ ինչու այդ մէկը պատմական անհրաժեշտութիւն էր, կամ ինչու պէտք էր



հայրենիքէն կտոր մը եւս կորսնցնել:

- Երբիս Ֆրոմ կը կարծէր, թէ մարդկային ինքնակործանման հիմնական պատճառը ոչ այնքան բնագոյային կործանարար վարքագիծն է, որքան մարդու ներքին անգորութիւնը: Ըստ անոր, ամենէն վտանգաւոր մարդը ոչ թէ ուժեղն է, այլ ան, որ կորսնցուցած է ստեղծագործելու

կարողութիւնը եւ իր գոյութեան իմաստը կը փորձէ գտնել ուրիշներու ոչնչացման մէջ: Այդպիսի մարդը կը սկսի ատել ոչ միայն իր հակառակորդը, այլ նոյնիսկ իր համախոհը, եթէ վերջինս համարձակի հարցումներ տալու:

- Հոգեբանական այս մեքանիզմը միայն անհատներուն չի վերաբերիր: Ան կը գործէ նաեւ ամբողջ հասարակութիւններու եւ ազգերու մակարդակով: Ազգ մը կը սկսի հիւանդանալ, երբ քննադատութիւնը դաւաճանութեան հետ կը շփոթէ, երբ իր սխալները ընդունելու փոխարէն կը սկսի զանոնք արդարացնել, երբ իրականութիւնը տեղի կու տայ ինքնասիրահարած առասպելներուն, եւ երբ ճշմարտութեան որոնումը կը փոխարինուի սխալները շրջելու կամ աղաւաղելու հաւաքական փորձերով:
- Բայց հաւաքական ինքնահիացումը հայրենասիրութիւն չէ: Հայրենասիրութիւնը սեփական ժողովուրդը աւելի լաւը դարձնելու ձգտումն է: Հաւաքական ինքնահիացումը, ընդհակառակը, սեփական ժողովուրդը անսխալական հռչակելու մոլորութիւնն է: Իսկ այդ մոլորութիւնը անխուսափելիօրէն զայն կ'առաջնորդէ դէպի կործանում:
- Այն հասարակութիւնը, որ մշտապէս կը խօսի միայն իր փառքին մասին, ուշ կամ կանուխ կը կորսնցնէ իր ապագան, որովհետեւ կը դադրի սեփական թերութիւնները

տեսնելէ: Իսկ այն հասարակութիւնը, որ ունի կարողութիւնը ցաւոտ ճշմարտութիւններ ընդունելու, փոխուելու հնարաւորութիւն ձեռք կը բերէ: Հաննա Արենդտ ցոյց կու տայ, որ չարիքը միշտ չէ, որ սատանայական դէմք ունի: Երբեմն ան սովորական մարդն է, որ պարզապէս դադրած է մտածելէ: Երբ մարդը պատասխանատուութիւն կը փոխանցէ առաջնորդին, կուսակցութեան, կրօնական հեղինակութեան կամ ամբոխին, անոր խիղճը աստիճանաբար կը լռէ: Այդ պահէն կը սկսի ամենէն վտանգաւոր գործընթացը՝ մարդը կը դադրի որոշումներ կայացնելէ եւ կը սկսի միայն ենթարկուիլ: Բայց ենթարկուելու ոչ մէկ պարագայ պատասխանատուութիւն կը վերցնէ: Մարդը կրնայ փոխել միայն այն հասարակութիւնը, որուն համար ինքը պատրաստ է պատասխանատուութիւն կրելու: Ժամանակակից հասարակութիւններու գլխաւոր ճգնաժամը յաճախ ոչ թէ եւ միայն գաղափարներու բացակայութիւնն է, այլ պատասխանատուութեան բացակայութիւնը: Բոլորը կը պահանջեն, որ բան մը փոխուի՝ պետութիւնը, իշխանութիւնը, ընդդիմութիւնը, եկեղեցին, դպրոցը, երիտասարդութիւնը, չափահասները: Քիչերն են որ հարց կու տան, թէ իրենք ինչ պիտի փոխեն:

- Ասիկա ազատութենէն փախուստի ամենէն նուրբ ձեւերէն մէկն է. բոլորը սրիկայ հռչակել եւ մէկ կողմ քաշուիլ: Բայց ազատ մարդը միշտ պատասխանատու է, մինչ անազատ մարդը միշտ մեղաւորներ կը փնտռէ: Ֆրանսացի մտածող Ռընէ Ժիրար ցոյց կու տայ, որ հասարակութիւնները յաճախ կը փորձեն իրենց ներքին հակասութիւնները լուծել՝ «քաւութեան նոխազ» մը ստեղծելով: Երբ տագնապ մը կը ծագի, հասարակութիւնը կը սկսի փնտռել այն անհատը կամ խումբը, որուն վրայ կարելի ըլլայ բեռնել բոլոր դժբախտութիւններուն պատասխանատուութիւնը: Ահա այսպէս կը ծնին «ներքին թշնամիները», «դաւաճաններու» անվերջ ցուցակները, քաղաքական եւ գաղափարական վիժակորսութիւնները, նախկինները, ներկաները, ռուսի ու թուրքի ստրուկները եւ այլն:
- Բայց եւ այսպէս խնդիրները չեն անհետանար:
- Նոր «քաւութեան նոխազ» մը չի բուժեր ազգը: Ընդհակառակը, աւելի կը կարծրացնէ, աւելի կը վախցնէ, աւելի կոյր եւ մոլեգին կը դարձնէ զայն: Ազգը կը սկսի ապաքինիլ միայն այն ատեն, երբ կը համարձակի նայելու իր իսկ հայելիին: Իսկ այդ հայելին միայն գեղեցկութիւն կամ ինքնահաճոյք չի ցուցներ: Ան նախ եւ առաջ իրականութիւնը կը ցոլացնէ:
- Մարդկային բանականութիւնը ստեղծած է գիտութիւն, արուեստ, պետութիւն, իրաւունք եւ քաղաքակրթութիւն: Բայց նոյն բանականութիւնը ստեղծած է նաեւ այնպիսի երեւոյթներ, ինչպէս գաղափարախօսական մոլուցքը, զանգուածային ատելութիւնը, ցեղասպանութիւնները եւ ամբողջ ժողովուրդներու ինքնախաբէութիւնը: Հետեւաբար, հասարակութեան առջեւ կանգնած գլխաւոր խնդիրը նոր գաղափարախօսութիւն ստեղծելը չէ: Գլխաւոր խնդիրը սեփական գաղափարախօսութեան վրայ կասկածելու կարողութիւնն է: Ժողովուրդները սովորաբար չեն կործանիր, որովհետեւ խելացի չեն, այլ որովհետեւ իրենց բանականութիւնը կը դադրի ծառայելէ ճշմարտութեան եւ կը սկսի ծառայել ինքնարդարացման: Այդ պահէն սկսեալ մարդը այլեւս ճշմարտութիւն չի որոնէր: ԱՆ կ'որոնէ/կը յօրինէ միայն այնպիսի փաստեր, որոնք կը հաստատեն այն, որուն ինքը արդէն որոշած է հաւատալ: Մենք հիմա նոյնիքն այդ վիճակը կը պարզենք: Մենք հիմա կը փորձենք արդարացնել ամեն ինչ եւ մենք զմեզ:
- Եւ այդ պահուն է, որ հասարակութեան իսկական անկումը կը սկսի՝ ո՛չ սահմաններուն վրայ, ո՛չ Արցախի մէջ, այլ մեր սեփական գիտակցութեան մէջ: Ան կը սկսի այն ատեն, երբ կը դադրինք հաւատալէ մենք մեզի, մեր գաղափարներուն,

մեր արժէքներուն եւ մեր ուժին: Այդ պահէն սկսեալ՝ ամէն ինչ կարելի կ'ըլլայ արդարացնել:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՈՐՊԷՍ ԲԱՐԻ ԼՈՅՍ

Լոյսի շողեր հաւաքեցի

Կեանքիս հազար ճամբաներէն,

Որ շաղախեմ գորշին, մութին,

Երբ գիշեր էր խաւարահեւ...

Սիրոյ ճաճանչ ամբարեցի

Հոգւոյս թաքուն ծալքերուն մէջ,

Որ ճառագէր սիրոյ շիթեր

Առօրեայի անսէր սրտին...



Եւ խորանս սուրբ հաւատքի

Պահպանեցի ահեղ տիղմէն,

Որպէս աղօթք մարդ էակին,

Աստուածատուր հոգւոյն բիրեղ:

Ամէն անգամ որ չար հողմը

Սպառնաց խժռել ծառ ու ծաղիկ,

Ես շաղ տուի անձրեւումը

Բարուոյն լոյսին արեւածին:

Եւ այդ լոյսը շատցաւ, շատցաւ

Պարագրկեց էութիւնս,

Հոգիէ-հոգի կապեց ծիածան,

Ճառագայթեց տիեզերքը:

3/5/2025

.....

ԱՐԱՐԱՏԻՆ

Օտար ափին, դուն վեհապանձ տեսի՛լք դարձար իմ հոգւոյս մէջ,

Մեծցա՛ր, մեծցա՛ր աչքերուս դէմ, դարձար կանչող փարո՛ս լուսէ

Ճանապարհս լուսաւորող առօրեայ խութ-տատասկին մէջ,

Քե՛զ հասնելու վառ երագով ես ապրեցայ օրերուս մէջ:

Քուն թէ արթուն, ես հե՛ւք առ հե՛ւք մագլցեցայ բարձունքդ ի վեր,

Բայց մնացիր ինձի անհաս մեծ սիրոյ պէս միշտ կարեւլեր,

Որ ներշնչէ դժուար պահիդ, ուրախ պահիդ քեզ կը տանջէ,



Ու կը դառնայ ապրելու կամք, ոգի աննինջ եւ լուսեղէն:

Թէ չըլլայի՛ր իմ կեանքիս մէջ, ես քեզ պիտի յօրինէի,

Որ չմնամ ես գետնամա՛ծ, հողակալի՛կ ու նիւթեղէ՛ն,

Որ խոյանա՛մ աչքս յառած քու երկնամերձ լոյս գագաթին

Եւ Բարձրանամ ճիշդ քեզի պէս, համը առնեմ ջինջ երկնքիդ:

12/42026

.....

ԽԻՂՃՍ

Խիղճս մնաց ընկերակից

Ամէնօրեայ կեանքիս հեւքին,

Գիշեր ու զօր պահակ դարձաւ

Ըրածներուս, չըրածիս ալ:

Մերթ բողոքեց ու դառնացաւ,

Մերթ զգաստութեան կանչ մը եղաւ,

Մերթ յորդորեց ու խըրատեց

Ուսուցիչի, ծընողքի պէս:

Մերթ լուռ մընաց, կարծես չկար,

Մերթ խնդութեամբ վարարեցաւ,

Կարծես պիտի շատնա՛ր, շատնա՛ր

Եւ զիս տանէր երկինքն անհաս:

Մերթ ալ անչափ մոայլեցաւ,

Զիս կշտամբեց անխօս, անբառ,



Ու որքան ալ չքմեղացայ,

Խարազանեց անգթաբար:

Խի՛ դձ իմ, դուն ես ուղեցոյց,

Թմբիրէս զիս արթնցնողը,

Միսալներուս՝ սթափեցման կանչ,

Մայթաքումիս՝ փարոս անմար:

Օրհնեալ ըլլաս, ինձ իմ արթուն,

Չհեռանա՛ս, մտնես ի քուն,

Առանց քեզի կամքս ազատ

Կը սայթաքի կործանարար:

42/7/2021

.....

ՏԱՐԻՆԵՐՍ

Տարինե՛րս, տարինե՛րս, ի զուր չանցան տարիներս,

Ամէն ամպէն տրտմաթախիծ լոյսի շո՛ղ մը հաւաքեցի:

Աչքերուս մէզն ու մշուշը փարատեցան հետզհետէ

Ու տեսայ ա՛յն ինչ որ չէի կրցած տեսնել յստակօրէ՛ն:

Կեանքը նոյնն է, առաջուան պէս, հայեացքս է կարծես փոխուեր,

Ժանգն ու փոշին անհետացեր, մաքրուեր է դիրտ-մրուրէն:

Հիմա ոչի՛նչ կը սպասեմ ես բախտ կոչուած սին պատրանքներէն,

Ա՛լ սորվեցայ թէ դուն ինքդ կը կերտես զայն ուղիներէդ...



Ոչի՛նչ, ոչի՛նչ կը տրուի քեզ, թէ պատրաստ չես զայն ընդունիլ,

Զայն փայփայել քու սրտիդ մէջ որպէս արժէ՛ք ու գա՛նձ անգին:

Ունեցածէդ շատ աւելի ՄԱՐԴ ըլլալն է արժէքաւոր,

Հոգւոյդ հետ միշտ հաշտ ու խաղաղ ապրիլըն է յոյժ կարեւոր:

Երջանկութի՛ն, չես իջներ դուն բիւր աստղերէ՛ն, երկինքներէ՛ն,

Արեգակա՛ն ճաճանչներուն պէս հրավառիս հոգիի՛ն մէջ:

28/6/2026

.....

ԻՄ ՍԷՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Ծներ եմ օտար երկինքներու տակ,
Քալեր եմ օտար մայթերու վրայ,
Բայց սրտիս մէջ տաք՝ դուն եղեր ես յար,
Հայրենիք լուսէ՛ իմ սէր, իմ հաւատք:

Քե՛զ եմ երազեր փոքր տարիքէս,
Քեզմո՛վ եմ ապրեր, դուն ոգեղէն հաց,
Դո՛ւն ես եղեր միշտ բոլր արեանս մէջ,
Կարօտներուս մէջ, սէրերուս մէջ վառ:

Ոստաններուն մէջ շքեղ ու օտար,
Սրտիս աչքերը միշտ ալ տեսեր են
Երեւա՛նը մեր, սրտիս հարազատ,
Անի՛ն աւերակ, մեր հին քաղաքներ...

Լեռներ եմ տեսեր բարձրաբերձ ու վեհ,
Բայց հայեացքիս դէմ՝ վեր է խոյացեր
Արարա՛տը վեհ, ոգեղէն, լուսէ,
Որպէս անհաս սէր, տեսիլք լուսեղէն:

Ո՛ւր որ ալ գացեր, ուղիներս բիւր
Միշտ քե՛զ են բերեր, իմ սէր Հայաստա՛ն,
Հարազատ տունն ես կարեւոր հոգւոյս,
Երանի դառնաս իմ հուսկ հանգրուան:

28/6/2018



.....

ԲԱՌԵՐ, ԲԱՌԵՐ

Դուք կ'անձրեւէք առատայորդ
Մտքիս, հոգւոյս պարտեզին մէջ,
Կը ոռոգէք հերկերն անոնց,
Ձերթ ջուրը՝ դաշտն արեւակէզ...

Ձեր տեղումն տողեր ծնին,
Ինչպէս ծիւեր՝ չորցած ճիւղէն,
Յետոյ դառնաք գունեղ ծաղիկ,
Մեր հին լեզուն բարեգարդէք...

Եւ ես ուրախ կը թռչկոտիմ
Ծաղկէ-ծաղիկ թիթեռին պէս,
Միրոյ նեկտար կը հաւաքեմ
Բաժակներէն բացուած յոսին...

Բառե՛ր, բառե՛ր,
Տեղացէք յո՛յս, տեղացէք յո՛յս,
Բաշխէք նոր կեա՛նք եւ օրհնութի՛ւն,
Թախ՛ծի ամպը իմ երկնքին
Դառնայ այլոց բերք ու բարիք:
14/7/2021

Լ Ռ ՌԻ Թ ԻԻ Ն



Անձրեւն է թակում իմ հոգու դուռը,
Ու թաց մայրերին լոյսեր են ննջում,
Հին կարօտից մարող մրմուռից ասես,
Գետի խոնաւող ափին եմ ննջում:
Քարը լուռ գիտի ինչ է լռութիւնը,
Երբ ջուրը յղկում է կողերը նրա,



Այդպէս իմ ներսում հոսում է մրմունջը,
Չասուած բառերի ծանրութեան վրայ:

Ես ինձ չեմ փնտռում հայելուց այն կողմ,
Այնտեղ ես ուրիշ հեքիաթ եմ թում,
Կամ որպէս ցօղ, որպէս մի շաղող,
Որ պատրաստում է իր ներսը սուզուելու:
Ու երբ աշխարհը աղմուկ է հագնում,
Ես իմ լռութեան պատեանն եմ մտնում,
Այնտեղ, ուր լոյսն է կամացուկ հանգչում,
Ես իմ կորուստն եմ վերստին գտնում:

Մի անտես քամի անցաւ իմ ուսերով,
Տերեւի նման դողաց յիշողութիւնը,
Կեանքը չի չափւում միայն յոյսերով,
Այլ այն դադարով, որտեղ էութիւնը
Դառնում է ալիք ու զարկւում ափին,
Ինչպէս չկարդացուած, անանուն մի գիրք,
Որ դեռ սպասում է իր վերջին դափին,
Անյայտ աստղային հեռու հեքիաթով:
Լուսինէ՛ Ներսիսեան
29. 06. 2026թ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ՝ ԴԺՈՒԱՐԱԳՈՅՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ՄԻԼՎԱ ԻՍԿԻԿԵԱՆ ՄԱՀՐԵՃԵԱՆ



Աննային հանդիպեցայ Յունուար 2016- ին, Միտնիէն դէպի Տոհա ուղեւորութեանս ընթացքին: Երկու անձանօթներս՝ ես Պէյրութէն, ինք Փորթուկալէն, պատահմամբ մեր թոյիչքը ապահոված էինք «Վըրճին Աթլանթիք» օդանաւային ընկերութենէն, նոյնպէս ալ ընտրած էինք՝ մեր կողք- կողքի համընկնող աթոռները: Մօտ տասնհինգ ժամ տեւողութեամբ թոյիչք մըն էր, որուն ընթացքին մեր խօսակցութեան գլխաւոր նիւթը շատ նուրբ եւ զգայուն հարց մըն էր:

Քանի մը օր առաջ Աննային տարեդարձն էր: Ջերմ շնորհաւորանքով ու մաղթանքներով դիմեցի իրեն, ինք ալ իր կարգին շատ գնահատեց իրեն երբեք չմոռնալուս հանգամանքը: Ինչպէ՞ս մոռնայի սիրելի

Աննային: Ան Օգոստոս 2020- ին, երբ հեռատեսիլէն հազիւ տեղեկացած էր Պէյրութի



նաւահանգիստին ահաւոր պայթումին գոյժը, հեռաձայնած էր իմանալու իմ ու ընտանիքիս վիճակը: Երբ իրեն ըսի, թէ պայթումը մեր տան շատ մօտ էր, բայց հակառակ լայնածաւալ քանդումին եւ մեր տան վնասուելուն, ես ու աղջիկս ողջ ու առողջ ենք, իսկոյն ան խորունկ շունչ մը առաւ եւ զգալիօրէն վրդովմունք եւ տագնապ արտայայտող ձայնով ըսաւ. «Թէնք եռւ Լօրտ»: Պահ մը լռութենէ ետք Աննան շարունակեց իր ջերմ զգացումները արտայայտել:

-Սիլվա՛, երբ Պէյրութ բառը լսեմ քեզ կը յիշեմ: Քեզմով ճանչցայ, որ Պէյրութ անունով քաղաք մը գոյութիւն ունի: Շատ կը ցաւիմ, որ այս տարողութեամբ սարսափելի պայթում մը տեղի ունեցած է: Կուգեմ քեզի նիւթապէս օժանդակել, որպէսզի տունդ նորոգես:

Աննային շնորհակալութիւն յայտնեցի, որ իր միտքէն ու հոգատար սիրտէն վրիպած չէի, սակայն նիւթական օժանդակութեան առաջարկը խստօրէն մերժեցի:

Չորս տարի անցած էր այն օրէն, երբ Տոհայի օդակայանին մէջ հրաժեշտ տուած էի Աննային ըսելով. «Աննա՛, ամուսնութիւն կնքելու համար պէտք է հարիւր տոկոս վստահ ըլլաս, ամէնէն դոյզն տատամսումը, կամ երկմտանքը՝ մե՛ծ ոչ մըն է»: Աննան իր կարգին պատասխանած էր. «Սիլվա՛, խօսքդ բնաւ պիտի չմոռնամ եւ ըստ այնմ կայացնեմ որոշումս: Կը հաւատամ, որ մեր այս հանդիպումը պատահական չէր, այլ՝ Աստուծոյ կարգադրութիւնը, որպէսզի կարելոր պատուէր մը փոխանցես ինծի: Սիլվա, ընկերակցութիւնդ խիստ հաճելի էր եւ շատ պիտի կարօտնամ քեզի»:

Աննան՝ երկար թռիչքին ընթացքին կողքս նստող տիկինը, կը յատկանշուէր իր գեղեցիկ կանաչ աչքերով, նուրբ դէմքով, դեղնորակ մազերով եւ նրբակազմ մարմինով: Թէեւ ան ինծի իր երկու չափահաս զաւակներուն նկարը ցոյց տուաւ, բայց ամուսինին մասին նշում մը չըրաւ: Իր խօսքերէն հետեւցուցի, որ ան այժմ միայնակ տիկին մըն է: Աննան ուզեց իմանալ Սիւնի գտնուելու պատճառը: Իրեն պատմեցի՝ տասնմէկ տարիէ քրոջմէս հեռու ըլլալս, գաղթին պատճառած անհուն կարօտը եւ վերջապէս անցնող քառասուն օրերու ընթացքին, քրոջս եւ իր ընտանիքին հետ վերստին միանալու երջանկութիւնը...: Աննան հետաքրքրութեամբ լսեց զիս եւ ուզեց բացայայտել իր Սիւնի գտնուելուն դրդապատճառը, նաեւ բաժնեկցիլ իր ունեցած փորձառութիւնը:

-Սիլվա՛, ես յիսունմէկ տարեկան եմ եւ քսան տարիէ կ'աշխատիմ Փորթուկալի շատ յայտնի դեղագործական ընկերութեան մը մէջ: Բաւական բարձր պաշտօն մը կը վարեմ եւ յաճախ դասախօսական շարքեր կը կազմակերպեմ: Հետեւաբար արտերկրէն բժիշկներ ու հետախոյզեր կը հիւրընկալեմ, որպէսզի անոնք իրենց գիտելիքներն ու գիտերը փոխանակեն մեր երկրի բժիշկներուն հետ: Վաթսունչորս տարեկան Աւստրալիացի Տօքթ. Ռիչըրտը, անցեալ տարուան ընթացքին մեր ընկերութեան հիւր դասախօսն էր: Շատ ազնուական կենցաղով ու համակրելի նկարագիրով անձ մըն էր: Ան մօտ ամիս մը Փորթուկալ մնաց, որպէսզի ամբողջացնէ իրմէ սպասուած դասախօսական ծրագիրը: Այդ մէկ ամսուան ընթացքին ես ստիպուած էի տեղէն- տեղ ընկերակցիլ իրեն:

Մեկնումի պահուն Տօքթ. Ռիչըրտ յայտնեց իր, ինծի հանդէպ ունեցած համակրանքը եւ ընկերակցութեանս դրական ազդեցութիւնը իր բաւական տխուր ներաշխարհին վրայ: Ան պատմեց, թէ երեք տարի առաջ քաղցկեղի հիւանդութեան պատճառով կորսնցուցած էր իր



կողակիցը: Ես ապշած ու քարացած էի. նման խոստովանութիւն մը անսպասելի էր ինծի համար, մանաւանդ, որ Ռիչըրտ բաւական հասուն տարիքի անձ մըն էր: Ան տեսնելով իմ այլալիւծ վիճակս, ներողութիւն խնդրեց: Ռիչըրտ իր մեկնումէն ետք յաճախ կապ պահեց հետս, հետաքրքրուեցաւ իմ առօրեայ նուաճումներովս ու դիմագրաւած դժուարութիւններովս: Ան միշտ ջերմ ու հարազատ վերաբերմունք ցուցաբերեց, իսկ վերջերս ան առաջարկեց, որ իր հիւրը ըլլամ Աւստրալիոյ մէջ: Ան յստակօրէն պարզեց իր ցանկութիւնը, որ զինք մօտէն ճանչնամ, սերտեմ, գուցէ որոշում մը կայացնեմ եւ համաձայնիմ իր հետ ամուսնանալ, իսկ չհամոզուելու պարագային, ոչ մէկ մեղադրական խօսք, կեցուածք, կամ բարեկամութեան խզում պիտի ըլլար մեր երկուքին միջեւ:

-Միլվա՛, Ռիչըրտին առաջարկը քիչ մը տատամսումով ընդունեցի: Չես պատկերացներ, թէ այս անցնող մէկ ամսուան ընթացքին ան որքա՛ն հոգատար, սիրալիր ու բարի էր: Ան ոչինչ խնայեց, որ զիս գոհ պահէ եւ երջանկացնէ, բայց ես չկրցայ զինք տեսնել, որպէս ամուսին: Ա՛խ, երանի՛ ան աւագ եղբայրս ըլլար, կամ հայրս: Անոր տարիքը ինծի համար մնայուն ու խանգարող հանգամանք մնաց: Միտքովս ան շատ շնորհալի ու բարի անձնաւորութիւն էր, բայց սիրտիս ու մարմինիս համար մնաց՝ խորթ...: Ահա կը մեկնիմ ու չկրցայ իրեն դրական պատասխան մը տալ: Հաւատա՛, շատ ճնշուած կը զգամ եւ վստահ գիտեմ, որ մերժումս պիտի ցուցնէ զինք, իսկ յօժարիլս՝ զիս:

-Միքելի Աննա, շատ լաւ կը պատկերացնեմ ներսդ կատարուող պատերազմը: Միտքդ բան մը կընէ, իսկ սիրտդ այլ բան կը թելադրէ: Ամուսնութիւնը այնպիսի բան է, որուն պէտք է պատրաստ ըլլաս, միտքով, հոգիով, սիրտով եւ մարմինով: Դուն Ռիչըրտին տարիքը, որպէս խորթ եւ խանգարող հանգամանք կը գտնես եւ իր մնացած բոլոր բարեմասնութիւնները բաւարար չես տեսներ զինք ընդունելու որպէս ամուսին: Հետեւաբար քաջ եղիր ու Ռիչըրտին անկեղծօրէն բացատրէ իր առաջարկը դրժելուդ միակ պատճառը: Ես վստահ եմ, որ ան թէեւ պիտի վշտանայ քեզ որպէս իր կինը չունենալու իրականութենէն, բայց ըստ նկարագրածիդ ան պիտի հասկնայ քեզի, ընդունի որոշումդ եւ չհրաժարի հետդ յարգալից հաղորդակցութիւն ունենալէ:

Գիտե՞ս Աննա, ես ու ամուսինս տարիքի մեծ տարբերութիւն ունինք: Քու եւ Ռիչըրտին տասներեք տարի տարբերութենէն աւելին է մերը, բայց ես ոչ մէկ օր տարիքի տարբերութիւնը, որպէս խոչընդոտ, կամ արգելք նկատած եմ, ընդհակառակը՝ հաւասարե-հաւասար, ամուր ու խորունկ զգացական աշխարհ մը բաժնեկցած ենք: Մենք 35 տարուան ամուսնացած զոյգ ենք եւ ամէն օր աւելի ուրախալի ու համոզիչ կը գտնենք մեր որոշումը՝ զիրար ընտրելու եւ ամուսնական ուխտը կիսելու: Կը հաւատամ, որ իսկական սերը, անսակարկ նուիրումը, իրար առաջնահերթ նկատելը, անբաժան ու անփոխարինելի ընկերակցութիւնը, իրարմով լիացած ու հմայուած մնալը, կը սահմանեն ամուսնութեան մը յաջողութիւնը: Թէեւ մենք կ'ապրինք պատերազմական երկրի մը մէջ, ուր շատ մը կենցաղային դժուարութիւններ կան, մշտական անապահովութիւն, վտանգաւոր պայմաններ, անորոշութիւն, բայց այդ բոլորով հանդերձ մենք իրարմով ու մեր զաւակներով երջանիկ ենք: Հոս ես իմ փորձառութիւնս չեմ ուզեր ընդհանրացնել եւ փորձել քեզի համոզել, որ տարիքի տարբերութիւնը նշանակութիւն մը չունի յաջող ամուսնական կեանք

մը ունենալու համար, կամ պիտի չըսեմ՝ սէրը տարիք չճանչնար, տարիքը լոկ թիւ մըն է, անհատի մը առողջութիւնը իր տարիքն է...: Հոս խնդրոյ անհատը դուն ես եւ պայման է, թէ դո՛ւն ինչպե՞ս կը տեսնես այդ տարբերութիւնը՝ ընդունելի՞, թէ՞ խորշելի: Մի ակնկալեր, որ եթէ ամուսնանաս Ռիչըրտին հետ կրնաս օր մը ընդունիլ եւ չնկատել այդ տարբերութիւնը: Ընդհակառակը այսօրուան յստակօրէն տեսածդ, վաղը պիտի տեսնես խոշորացոյցով... եւ ապրիս զոջումով, կամ ծածկուիս դիմակով:

2024-ին, երբ Հրեան չարաչար կը հրթիռակոծէր Լիբանանի ու Պէրութի հարաւը, Աննան կրկին կապուեցաւ հետս ստուգելու համար իր «Պէրութցի Սիլվային» որպիսութիւնը:


-Աննա՛, սիրելիս, ես այլեւս Պէրութ չեմ բնակիր, այժմ աղջկաս մօտ՝ Լօս Անճելըս կ'ապրիմ:

-Սիլվա՛, չես պատկերացներ, որ որքան ուրախացայ, երբ ըսիր, թէ Պէրութ չես գտնուիր: Քու ապահով ըլլալդ բարիք կը սեպեմ, միաժամանակ շատ կը ցաւիմ, որ գեղեցիկ Պէրութը կրկին ու կրկին կը հարուածեն ու կը քանդեն:

Աննային ու իմ կապս տարուէ- տարի աւելի կը սերտանայ: Մինչ ես հաստատ գիտեմ, որ մեր բարեկամութեան ամուր հիմը կայացաւ, երբ ես «Վըրճին Աթլանթիք» օդանաւին մէջ ամենայն անկեղծութեամբ անոր ըսի. « Աննա՛, ամուսնութիւն կնքելու համար պէտք է հարիւր տոկոս վստահ ըլլաս, ամէնէն դոյզն տատամսումը, կամ երկմտանքը՝ ՄԵԾ ՈՉ մըն է»:

ԽԱԲԿԱՆՔՆ ՈՒ ԿԵՂԾԻՔԸ

ԱՐԱՄ ԱՃԵՄԵԱՆ



Կա՞յ արդեօք ոեւէ անձ, որ կեանքին մէջ բնաւ խաբուած չըլլայ: Այդ պարագային բացառիկ մէկը ըլլալու է ան: Անձամբ ես բազմիցս խաբուեր եմ եւ դեռ կը շարունակեմ խաբուիլ՝ այնքան որ թիրահաւատ եմ: Բայց հակառակ խաբուելուս, մարդկութեան հանդէպ հաւատքս չեմ կորսնցուցած: Դասս սերտելէս ետք, մէկ-երկու անգամ ես ալ ուրիշին խաբեր եմ: Յետո՞յ ինչ. նեղը ինկողը ամեն քայլի կը դիմէ, քաջ գիտակցելով թէ ատկէ երկրագունդը փուլ չի գար: Պատահած է, որ մօտիկ ընկեր մը ոտնահարէ իրեն տաճած անկեղծ



մտերմութիւնդ, ինչ որ չափազանց տհաճ երեւոյթ մըն է: Որո՞ւն պէտք է կեղծաւոր ընկեր ունենալը: Հաւատարիմ ու անկեղծ ընկեր մը ամէն բան կ'արժէ: Ազնիւ ընկերոջմէ կրնաս նորաւոր բաներ սորվիլ եւ ընդլայնել մտահորիզոնդ:

Առաջին անգամ խաբուած եմ ՄԿՀ-ի յարկին տակ, երբ Յունաստանէն նոր ժամանած աշակերտի մը ստանձնած էի այբուբենը սորվեցնել, ինչպէս նաեւ հայերէն գրել ու կարդալ: Որպէս վարձատրութիւն, հաստատութեան տնօրէնը՝ Պր.Խաչեր Գալուստեան, խոստացաւ վճարել հինգ կիպրական ոսկի (5 Կ.Ո.): Երկու ամիս գիշեր ու զօր յատկացուցի, նորէկ աշակերտին դասաւանդելով Մայրենի լեզուի հիմքերը, որուն համար ան վճարեց ընդամենը 1,5 ոսկի: Մնացած պարտքին փոխարէն՝ ան նուիրեց իր հին, փչացած թրանզիստորը, որուն աւրուած ըլլալը նախապէս չէր յայտնած: Անոր սուղնոց, ինը վոլթնոց մարտկոցը միայն երեք օր դիմացաւ: Երբոր ամառուան արձակուրդը վրայ հասաւ, նոր մարտկոց մը անցուցի, որմէ ետք ռատիոն ի սպառ լռեց: Վերամուտին չցանկացայ աշակերտին մատնանշել, որ իր արարքով զիս խաբած էր՝ կուլ տալով արժանապատուութիւնս:

Երբ Հայաստան կերթայի ուսանելու, Պէյրութի նաւահանգիստէն նաւ բարձրացաւ նախկին ուսանող մը, որ «սպէկուլացիա»-ով կը զբաղէր՝ ինչպէս կ'ըսէին հայաստանցիները ապօրինի առեւտուրին: Մեծաքանակ մետաքսէ գունաւոր շալեր բերած էր ճամպրուկին մէջ, որ տասնական-տասնական փաթեթելով բաժնելով տուած էր Հայաստան մեկնող նոր ուսանողներուն՝ ապսպրելով որ սովետական սահմանը հատելէ ետք, իրեն վերադարձնեն մաքսազերծուած ապրանքը: Օտեսա հասնելէս ետք, այդ հին ուսանողին երեսը չտեսայ: Երկու ամիս ուշացումով, օր մը տնկուեցաւ Զեյթունի հանրակացարանս՝ իր ապրանքը ետ պահանջելու համար: Այդ միջոցին հասցուցեր էի այդ գունաւոր շալերէն մէկը նուիրել ազգականի մը, քանզի արտասահմանէն հետս նուէր չէի բերած: Աւելի ուշ երկրորդ շալ մը ծախեցի տեղացի աղջկայ մը՝ գրպանելով անոր վճարած 10 ռուբլին: Երբոր բանսարկուն հաշուեց ստացած շալերը, տեսաւ որ երկու հատը կը պակսէին: Խիստ զայրացած՝ ան կասկածանքով նայեցաւ աչքերուս խորը: Ստիպուած եղայ ստելու, ըսելով որ ինծի միայն 8 հատ տուած էր նաւուն վրայ: Ի վերջոյ ան համաձայնեցաւ, որ իրեն հատուցեմ պատճառած վնասս՝ վճարելով երկու շալերու ինքնարժեքը, որն էր երկու լիբանանեան լիրա (2 Լ.Ո.): (Այն ատեն մէկ լիրա արժող ծամոնի տուփը 40 ռուբլի կ'արժէր):

Մեր երկրագունդը այնքան ալ իտեալական տեղ մը չէ, քանի որ մարդկանց փոխադարձ յարաբերութիւնները կանոնաւորողը հրեաներու Մամոնա չաստուածն էր: Մարդիկ կը սնանին զիրար խաբելով ու չարաշահելով: Ճարպիկները օրըստօրէ ոսկիներ կը դիզեն, մինչդէռ միամիտները հազիւ գոյութիւն կը պահպանեն: Անշուշտ ես ասոնցմէ ո՛չ մէկն եմ, ո՛չ ալ միւսը, այլ հասարակ մահկանացու մը, որ կը հետեւի ոսկէ միջինին: Հետեւաբար տակաւին կը շարունակեմ «խաբուիլ»: Գիտցած ազգերուս մէջ, Լեհերէն աւելի խաբեբայ մարդու չեմ հանդիպած: Անոնք յաջողած են երեք անգամ ինծմէ դրամ շորթել՝ երկու անգամ իրենց երկրին մէջ, մէկ անգամ ալ նախորդ բնակելի շէնքիս բակին մէջ: Եթէ փակագիծները բանամ՝ գրութիւնս չափազանց կ'երկարի: Ուրիշ առթիւ այդ դէպքերուն ալ կ'անդրադառնամ:

Մենք փոքրուց դաստիարակուած ենք ինքնախաբէութեամբ՝ կարծելով թէ այդ ձեւով ապրիլը կեանքը աւելի տանելի կը դարձնէ: Յուսալքումը կը սկսի ծեծել մեր տան դուռը, երբ



գլխի իյնանք թէ հիմնովին խաբուած ենք: Պատրանքի շղարշէն դուրս գալու համար, ստիպուած ենք ընդունիլ մեր սխալները եւ դասեր քաղել մեր անցեալէն՝ սեպհական ջանքերով հասնելու ճշմարտութեան, փոխանակ ընդունելու մեզի հրամցուած պատրանքը: Սակայն շատ չանցած դարձեալ կ'ընդհարինք նախկին ընկերներու և ծանօթներու հետ, ովքեր չեն շեղած իրենց գիտցածէն:

Օր մը Սթոքհոլմի մէջ պատահմամբ ներկայ գտնուեցայ դաշնակահար՝ Տիգրան Համասեանի ճագային համերգին: Ընկերս հրաւիրած էր զիս: Համերգէն անմիջապէս ետք, տեղւոյն վրայ ՀՀ-ի դեսպանատունը սարքած էր ճոխ ընդունելութիւն մը, որուն հրաւիրուած էին սահմանափակ թուով պետական դէմքեր և կարգ մը Շուէտի մէջ բնակող հայեր: Այնտեղ, տասնեակ տարիներու բացակայութենէ ետք հանդիպեցայ ՀՄՄ-ի նախկին ատենապետին, որ այժմ դարձած էր մեծահարուստ ձեռնարկատէր մը: Յիշելով հայկական համայնքի անցեալի օրերը, ան սկսաւ գովաբանել արժանիքներս որպէս միութեան գործունեայ անդամ եւ աշխոյժ մանկավարժ, որուն վստահած էր իր երկու զաւակներուն հայեցի ուսումը. «Բոլորը քեզի շատ կը սիրեն, հաստատեց ան: Միակ թերութիւնդ այն է, որ նուազ հայրենասէր ես», եզրակացուց անիկա: Ինչպէ՞ս յանգեցաւ այդ եզրակացութեան՝ պատճառը շատ պարզ է: Դարձեալ բազմիցս ծամծմուած հին յանկերգը՝ «Ով որ դաշնակցական չէ, ուրեմն հայ չէ»:

Ընդունելութեան ժամանակ առիթը ունեցայ ծանօթանալու տարբեր անձնաւորութիւններու հետ, թէ՛ դեսպանատան աշխատողներէն, թէ՛ ալ օտարազգի հիւրերէն, որոնց մէջ կար Աւստրիոյ գուարթերէս դեսպանը: Ընդունելութենէն ետք միասին շարժեցանք դէպի ինքնաշարժներու կայանատեղին: Բարձր էր բոլորիս տրամադրութիւնը, մանաւանդ որ Աւստրիոյ դեսպանին եւ իր տիկնոջ հետ կը գրուցէի իրենց երկրի շատ սիրուած երգիչ՝ Udo Jürgens-ի մասին, որ վերջերս հեռացեր էր կեանքէն: Մեր ձեռնարկատէր ատենապետն ու իր տիկինը խոստացան ճամբուն վրայ զիս հասցնել բնակավայրս, իրենց շքեղ Jaguar-ով: Ճամբան իր տիկինը ջանաց զիս համոզել, թէ գալիք ընտրութիւններուն նախապատուութիւնը պէտք է տրուի աջ պահպանողականներուն, որոնց քաղաքականութիւնը աւելի իրագործելի էր, քան ընկերվարականներունը.

—Մեզի՛ մտիկ ըրէ, ըսաւ ան, մենք շուկային մէջն ենք. գիտենք ինչի մասին կը խօսինք:

—Ինծի համար հաւասարութիւնն ու արդարութիւնը բացարձակ արժէքներ են, հակաճարեցի ես: Իւրաքանչիւր մարդ ունի իր նախապատուութիւնն ու ներքին համոզումը: Բարեբախտաբար, մեր գաղափարական վեճը շուտ վերջ գտաւ, որովհետեւ արդէն տուն հասած էի: Հրաժեշտի պահուն շնորհակալութիւնս յայտնեցի, հագստաւէտ պայմաններու տակ զիս տուն հասցնելու համար եւ մենք իրարմէ բաժնուեցանք ջերմ համբոյրներով: Այդ զիշեր երկար ժամանակ քունս չտարաւ: Անընդհատ կը մտմտայի «նուազ հայրենասէր» պիտակուելու վրայ:

Շուէտի մէջ ապրողներս լաւ ճաշակած ենք մեր ազատութիւնը եւ լաւ տեղեակ ենք մեր քաղաքացիական իրաւունքներուն: Հակառակ ատոր՝ մէջս կայ յստակ երկփեղկուածութիւն մը անցեալիս եւ ներկայիս միջեւ: Ես թէ՛ հայ եմ և թէ՛ ալ շուէտացի: Յաճախ պատահած է որ

կէս գիշերին սարսափահար արթննամ զահրումարային մղձաւանջէ մը: Զգաստանալէս պահ մը ետք միայն կը վերյիշեմ, թէ Շուէտի մէջ է որ կ'ապրիմ և որ տեսածս պարզապէս գէշ երագ մըն էր, որ անցեալէս զիս կը հետապնդէր: Անշուշտ սարսափելու որեւէ դրդապատճառ չունիմ, թէեւ ենթագիտացութեանս մէջ ամուր դրոշմուած է այդ հին վախը: Կ'աշխատիմ աւելի շրջահայեաց ըլլալ եւ հանգիստ դատել՝ որսալով ներկայ բոլոր ակնթարթները: Ապահով հեռաւորութեամբ կ'աշխատիմ հետեւիլ հայրենական եւ միջազգային դժնդակ լուրերուն: Եթէ մինչեւ այսօր չեմ կրցած հասկնալ հայ դեկավարներու որդեգրած քաղաքականութիւնը՝ զոնէ ներքուստ զիտեմ, թէ ուր պէտք չէ առաջնորդէ այդ քաղաքականութիւնը: Բա՛ւ է մեծ-մեծ ճորտաբանել և զոռ տալ փուճ երեւակայական զեղումներու՝ իյնալով քաղցր անուրջներու տաքուկ գիրկը: Անհրաժեշտ է վստահիլ սեփական ոյժին և չտրուիլ ինքնախաբէութեան: Միայն բացարձակ ճշմարտութիւնը պիտի կարենայ ազատագրել մեզ:

ԵԿՈՒՐ, ԳԱԻԱԹ ՄԸ ՍՈՒՐՃ ԽՄԵՆՔ...



Այս առաւօտ, սուրճի տաքուկ գաւաթը ձեռքիս, պատուհանին մօտ նստած էի: Գոլորշին դանդաղ կը բարձրանար, իսկ անոր բոյրը կարծես զիս տարիներ ետք կը տանէր դէպի հանդիպումներ, գրոյցներ, յիշատակներ ու դէպքեր, որոնք ժամանակը չէր կրցած մաշեցնել: Այդ պահուն մտածեցի, թէ որքան մեծ խորհուրդ կրնայ ունենալ այս փոքրիկ գաւաթը: Ան պարզ ըմպելիք մը չէ. ան կեանքի լուռ ուղեկիցն է, որ կը մասնակցի մեր ուրախութիւններուն, մեր տխրութիւններուն, մեր որոշումներուն եւ մեր յուշերուն:

Ու այդ խոհերէն ծնաւ այս հարցումը. ի՞նչ խորհուրդ կը պահէ իր մէջ գաւաթ մը սուրճը...

Գաւաթ մը սուրճի շուրջ շատ աւելի բաներ կը պատրաստուին, քան սուրճը ինքը: Հոն կը ծնին առաջին ծանօթացումները, որոնք տարիներու ընթացքին անքակտելի բարեկամութիւններու կը վերածուին: Հոն կը հնչեն սիրոյ առաջին խօսքերը, որոնք երբեմն ամբողջ ընտանիքներու հիմքը կը դառնան: Սուրճի բոյրին հետ կը խառնուին յոյսերը, երագները եւ ապագայի

ծրագիրները:

Գաւաթ մը սուրճի շուրջ գործնական համաձայնութիւններ կը կնքուին, դժուար հարցերու լուծումներ կը փնտռուին, կարելոր որոշումներ կը տրուին: Շատ անգամ սեղանին վրայ դրուած այդ փոքրիկ գաւաթը լուռ վկայ եղած է պատմութիւններու, որոնց արձագանքը տարիներ շարունակ մնացած է մարդոց կեանքին մէջ:



Մակայն սուրճի սեղանը միայն ուրախութեան վայր չէ: Ան նաեւ ապաւէն եղած է տխուր պահերու: Հոն արցունքներ թափուած են, վիշտեր բաժնուած, մխիթարութեան խօսքեր փոխանակուած: Երբեմն մարդ իր սրտին ամբողջ ծանրութիւնը թեթեւցուցած է հաւատարիմ բարեկամի մը հետ բաժնած գաւաթ մը սուրճի ընթացքին:

Սուրճը կարծես կամուրջ մըն է մարդոց միջեւ: Ան լռութիւնը կը խօսեցնէ, հեռաւորները կը մօտեցնէ, սրտերը կը բանայ եւ յիշատակներ կը ստեղծէ: Անոր շուրջ անցած պահերը շատ անգամ աւելի երկար կ'ապրին, քան սուրճին համը:

Ահա թէ ինչու գաւաթ մը սուրճը պարզ ըմպելիք մը չէ. ան հանդիպումներու, որոշումներու, յիշողութիւններու, կարօտի, սիրոյ եւ մարդկային ջերմութեան փոքրիկ, բայց խորախորհուրդ խորհրդանիշ մըն է: Շատ պատմութիւններ սկսած են անով, եւ շատ յիշատակներ անոր բոյրով կը շարունակեն ապրիլ մարդկային հոգիներուն մէջ:

Եւ երբեմն, տարիներ անց, մարդը այլեւս չի յիշեր, թէ սուրճը որքան քաղցր էր կամ որքան դառն, բայց կը յիշէ այն դէմքերը, որոնք իր դիմաց նստած էին, այն խօսքերը, որոնք լսած էր, եւ այն զգացումները, որոնք ապրած էր:

Գաւաթ մը սուրճի շուրջ սերունդներ իրարու հանդիպած են: Մեծ մայրերը իրենց յուշերը պատմած են, պապերը կեանքի դասեր փոխանցած, իսկ երիտասարդները՝ ապագայի իրենց երազները բացած: Այսպէս, սուրճը միայն պահ մը չէ միացուցած մարդիկը, այլ նաեւ անցեալը՝ ներկային, եւ ներկան՝ ապագային:

Հայ կեանքին մէջ սուրճը երբեմն աւելի քան սովորութիւն եղած է: Ան դարձած է առիթ՝ դուռ մը բանալու, ձեռք մը սեղմելու, բարեկամ մը ընդունելու կամ կարօտ մը մեղմելու: Անոր շուրջ սկսած զրոյցները շատ անգամ ժամեր տեւած են, որովհետեւ սուրճը մարդոց միայն նստեցնելու չէ կոչուած, այլ գիրենք իրարու մօտեցնելու:

Այս խոհերուն հետ կը յիշեմ նաեւ սկեսուրս, որ հիւրին ներկայութեան իր փայլուն պղնձեայ ձեռքի սրճադացով կ'աղար աղնձուած սուրճը, որպէսզի թարմ բուրմունքով մատուցէ զայն: Այդ սրճադացին մեղմ ձայնը հիւրընկալութեան մասն էր:

Շատեր այսօր ալ կը յիշեն ոչ միայն իրենց խմած սուրճին համը, այլ նաեւ ձեռքի սրճադացի այդ ծանօթ ձայնը, որ կը յուշէր, թէ սիրելի հիւր մը եկած էր տուն:

Գուցէ այդ պատճառով ալ սուրճը աւելի համով կը թուէր: Անոր մէջ կը խառնուէր ոչ միայն ընտիր հատիկին բոյրը, այլ նաեւ տանտիկինին սէրն ու նուիրումը, որոնք ամէն գաւաթի հետ կը մատուցուէին հիւրին:

Այսօր այդ սրճադացը ուր սկեսուրիս մատներուն հետքը դրոշմուած է կը զարդարէ պահարանս որպէս թանկ յիշատակ, իսկ անոր հետ անցեալի ջերմ օրերուն յիշողութիւնը:

Ամենահամեղ կախարդական տաք սուրճի գաւաթը երբ սեղանին վրայ կը դնեն կարծես անոր հետ կը մատուցուին նաեւ ուշադրութիւն, յարգանք եւ սրտաբացութիւն: Գաւաթը փոքր է, բայց անոր պարունակած խորհուրդը՝ մեծ:

Ահա թէ ինչու գաւաթ մը սուրճի ողիսականը չաւարտիր անոր վերջին կումը խմելէ ետք: Ան կը շարունակուի յիշողութիւններուն մէջ, պատմող պատմութիւններուն մէջ եւ այն ջերմ զգացումին մէջ, որ տարիներ անց անգամ կրնայ վերադառնալ՝ սուրճի բոյրի մը հետ:



Մակայն գաւաթ մը սուրճը նաեւ առանձնութեան հաւատարիմ ընկերն է: Լուռ առաւօտներու, մտախոհ երեկոներու կամ յուշերով լեցուն գիշերներու ընթացքին, մարդը իր գաւաթին հետ կը մնայ առանձին՝ իր խոհերուն, յիշատակներուն եւ ներաշխարհին դիմաց:

Այդ պահերուն սուրճը կարծես գրուցակից մը կ'ըլլայ: Ան կը լսէ չարտասանուած խօսքերը, կ'ընկերանայ մտածումներուն եւ երբեմն կը մեղմացնէ լռութեան ծանրութիւնը: Գաւաթէն բարձրացող գոլորշին կը նմանի յուշերու, որոնք դանդաղօրէն կը վերադառնան անցեալէն ու կը պարուրեն հոգին:

Շատ ստեղծագործութիւններ ծնած են գաւաթ մը սուրճի եւ առանձնութեան ընկերակցութեամբ: Շատ գրողներ, բանաստեղծներ եւ մտածողներ իրենց ներշնչումը գտած են այդ լուռ պահերուն մէջ, երբ սեղանին վրայ միայն թուղթ մը, գրիչ մը եւ գաւաթ մը սուրճ կար:

Այսպէս, սուրճը կը դառնայ ոչ միայն մարդոց միացնող կամուրջ, այլ նաեւ մարդու եւ իր ներաշխարհին միջեւ կապ մը՝ օգնելով անոր լսելու սեփական հոգիին ձայնը:

Վերջապէս, այս բոլոր խոհերէն ետք, կը մնայ մէկ պարզ, բայց խոր իմաստ ունեցող հրաւեր մը.

Եկէ՛ք, գաւաթ մը սուրճի շուրջ նստինք բոլորս միասին:

Թող այդ գաւաթը ըլլայ հանդիպումի, գրոյցի, ժպիտի եւ լռութեան հաշտութեան վայր մը:

Թող այնտեղ չկորսուի մարդը մարդուն մէջ, եւ սիրտը՝ սրտին մէջ:

Որովհետեւ երբեմն ամբողջ պատմութիւն մը կրնայ սկսիլ պարզ մէկ նախադասութեամբ.

Եկո՛ւր, գաւաթ մը սուրճ խմենք...

ՇԱՔԷ Հ. ԳԱՐԱՅԵԱՆ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Արեւմտահայերէն ամէն բառ ու տող
յադթանակ մըն է նենգ ոսոխին դէմ...
Արեւմտահայերէն ամէն գիր ու խօսք մեր
սուրբ վրէժն է թշնամիին դէմ...
Արեւմտահայերէն լեզուն թանկագին ոգին
ու շունչն է պանդուխտ մեր հողին...
Արեւմտահայերէն լեզուի կարկաչը արդար
պահանջն է մեր գրաւեալ հողին...եւ
խոստում, երդում՝ նոր վերադարձի:
Պիտի երդնունք զայն պահել-պահպանել,
զայն խօսիլ, գրել կենսունակ, զայն
փոխանցել որդւոց-որդի եւ սերունդէ-
սերունդ...

.....

Այնքան դիրին է ճառել

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵՆԷՆ, սակայն դժուար՝ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԸԼԼԱԼԸ, այնքան դիրին է խօսիլ
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ մասին, բայց դժուար՝ ԱՐԴԱՐ ԵՒ ՃՇՄԱՐՏԱԽՕՍ
ԸԼԼԱԼԸ... Այնքան դիրին է բարբաջել ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ մասին, սակայն դժուար՝
ԱՌԱՔԻՆԻ ԸԼԼԱԼԸ...: Ձեռով ու ձեռակնութեամբ փայլող մեր ներկայ աշխարհին մէջ,
ԸԼԼԱԼԸ է դժուար... Մինչ այնքան շատ է թուացեալը, երեւոյթը... Յաճախ ալ, ՌԻՆԵՆԱԼԸ կը
ծածկէ ԸԼԼԱԼՈՒ ԷԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

.....

Արժանապատուութեամբ յարատեւելու համար, ազգովին քաջարի պիտի ըլլալ...
Քաջարի՝ ճիշդը խօսելու, արդարը պաշտպանելու, կեղծիքէն խուսափելու, շիտակ ապրելու
մեր վարքագիծին մէջ...

Քաջարի՝ նոյնիսկ մենք մեզ քննադատելու մէջ, քանզի առանց ազատ ու արդար
ինքնաքննադատութեան, մենք կը թոփենք նոյն տեղին վրայ, կը լճանանք, կը ճահճանանք,
տեւաբար նոյն սխալները գործելով...

Անհատներ եւ ազգեր մեծ կ'ընծայուին, երբ բարոյական քաջութեամբ կրնան դիմագրաւել եւ
ընդունիլ սեփական սխալը եւ ուղղել զայն...

.....

Ամենէն շատ կը խորշիմ ԾԱԽՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐԷ, որոնք յանուն իրենց անձնական,
խմբակային թէ հատուածական շահին, փառքին, պատրաստ կ'ըլլան ծախելու իրենց
լորձաշուրթն գովերգած սկզբունքները, պատիւ եւ արժանապատուութիւն, հայութիւն եւ
հայրենիք... եւ յետոյ դարձեալ կը բարբառին այդ ԲԱՐՁՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ մասին, եւ
ՄՐՈՏՈՒԱԾ ըլլալով, կը փորձեն այդ ՄՈՒՐԸ քսել մաքուր ու ջինջ հոգիներուն...: Բայց
շուտով կը տեսնեն, որ այդ մաքուր հոգիները կարելի չէ մրոտել, աղտոտել... ընդհակառակն,
իրենց ցեխարձակումը կը վերադառնայ իրենց հազարապատիկ...



.....

«ԱՄԻԿԱ ՄԵԶՄԷ՞ Է»...Այս հարցումը շատ անգամ լսած եմ Սփիւռքահայ կեանքի տարբեր շրջանակներու մէջ, եւ ինքս իմ մէջ՝ զարմացած...Հարցումը կ'ենթադրէ յստակօրէն, որ եթէ տուեալ անձը «իրենցմէ» է, իրենց կուսակցութեան կամ հատուածին մարդն է, ուրեմն ըստ այնմ պէտք է վարուիլ անոր հետ՝ հարազատի, բարեկամի զգացումներով...: Իսկ եթէ տուեալ անձը «իրենցմէ» չէ, կը պատկանի այլ շրջանակի, ուրեմն կարելի է անոր հետ վարուիլ այլ կերպով եւ նոյնիսկ ոչ-բարեկամական...: Իսկ յաճախ տխուր ԱԿԱՆԱՏԵՄՆ եմ եղած այն պարագաներուն, երբ տուեալ անձը «իրենցմէ» ըլլալուն համար միայն, արժանացած է բարձր պաշտօնի, կամ պատիւներու եւ շատ աւելի արժանաւորը ԱՆՏԵՍՈՒԱԾ է ամբողջութեամբ, «իրենցմէ» չըլլալուն համար...«ԿՈՅՐ ԸԼԼԱՅ, ԿԱ՛Ղ ԸԼԼԱՅ, ՄԵԶՄԷ՛ ԸԼԼԱՅ» ԱՍԱՑՈՒԱԾՔԸ ՇԱՏ ԽՕՍՈՒՆ Է այս ուղղութեամբ: Խօսքը կը վերաբերի բոլոր շրջանակներուն ԱՆԽՏԻՐ եւ ամբողջովին ԱՆՅԱՐԻՐ Է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏ:

.....

ԽՕՍՔԸ բխումն է հոգիին, մտքին, ցուցանիշը մարդ էակի հոգեմտաւոր որակին, բարոյական մակարդակին, անհատականութեան ինքնատպութեան թէ անոր պակասին, սրտին մեծութեան թէ փոքրութեան: Խօսքը ցոլանքն իսկ է ներքին մարդուն...Հետեւաբար, լսելով մարդուն խօսքը, կարդալով անոր գիրը, կրնաս ճիշդ պատկերացումը կազմել անոր ներքին էութեան: Կարելի է նոյնպէս ըսել. «ԼՍԵՄ ԽՕՍՔԴ, ԸՍԵՄ Ո՛Վ ԵՍ»:

.....

Մարդ էակին թերեւս մեծագոյն առաքինութիւնը ուրիշը զգալն է ...Ներկայ դարուն, այնքան տարանջատ են սրտերը, կարծեք մարդիկ կ'ապրին ներփակուած իրենց նեղ ԵՄ-երուն մէջ եւ տակաւ կը կորսնցնեն ուրիշը զգալու, հասկնալու, սիրելու, անոր կարեկցելու էական, կենսական յատկութիւնը...Սիրտէ-սիրտ, հոգիէ-հոգի այդ հաղորդակցութիւնն է, որ, ըստ էութեան, մարդ էակը կ'ընծայէ մարդ, այս բառին ամբողջական իմաստով...Այլապէս, շատեր կան, որ հրապարակ կու գան որպէս մասնագէտներ, ճշմարտախօսներ, սակայն՝ չունենալով դիմացինին սրտի զարկերակը զգալու առաքինութիւնը, զայն կը կոխկոտեն յաճախ, յանուն իրենց քարոզած ճշմարտութեան...

.....

Ոեւէ անհատի անցած ՅԵՏԱԳԻԾԸ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ կը բացայայտէ անձը, անոր նկարագիրը, վարքագիծը, վստահելիութեան չափը...Մեծագոյն հարստութիւն է ՄԱՔՈՒՐ, ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ, ԱԶԳԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՄ ԱՐԱՐՔՆԵՐՈՎ լեցուն կենսագրութիւնը: Նման կենսագրութիւնը գերագոյն ԵՐԱՇԽԻՔ կամ ԳՐԱԻԱԿԱՆ կրնայ դառնալ խնդրոյ առարկայ անձի յետագայ ճանապարհին....ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԷ կամ ՂԵԿԱՎԱՐԷ, թէ ԻՇԽԱՆԱԻՈՐԷ պէտք է պահանջուի բարոյապէս ԱՆԱՂԱՐՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ...Այլապէս, ամէնէն հմուտ, ձեռներեց ու բանիմաց ԳՈՐԾԻՉԸ անգամ կրնայ դիւրաւ սայթաքիլ ԱԹՈՒԻՆ կամ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ընձեռած հնարաւորութիւններէն եւ տակաւ յայտնուիլ բարոյական տիղմի մէջ, իրեն հետ տանելով հաւաքականութիւնն ու ազգը...

.....

Քաղաքականութիւնը թատրոն մըն է, որուն դերակատարները կրնան մարմնաւորել այլազան դերեր, մէկը միւսին անյարիր դերեր, մէկը միւսին հակադիր դերեր, նայած թէ



բեմադրողը ինչ դեր կը վստահի իւրաքանչիւրին: Բեմադրողը, այս պարագային, ՄԵՓԱԿԱՆ ՇԱՀՆ Է, որուն աներեւոյթ ծալքերը դժուար է տեսնել: Քաղաքականութեան մէջ, չկան բարոյական սկզբունքներ, Մաքիավելլական ՇԱՀԱԿԵՂՈՆ գործելակերպը կը կլանէ ամէն ինչ...Այս մտածումները կ'ունենամ երբ կը դիտեմ այն բոլոր քաղաքական թատրոնները որոնց մէջ կ'ապրինք բոլորս ալ անխտիր:

.....

Հայը հայուն մէջ հակառակորդ կ'որոնէ...

Հայը հայուն մէջ թշնամի կը փնտռէ...

Եւ խօսքով, վէճերով զիրար կ'անարգեն, զիրար կը խծբծեն, վերջին բառերով զիրար կը վիրաւորեն...

Միշտ մոռնալով մեր բուն թշնամին, որուն դէմ միայն պիտի պարպենք մեր դառնութեան բաժակը...

Եւ որքան կարեւոր է ՄԻԱԽՈՐՈՒԻԼԸ, որպէսզի կարենանք ՅԱՂԹԱՆԱԿՈՎ դուրս գալ մեր ՄԻԱՄՆԱԿԱՆ պայքարին մէջ:

Յաղթանակը կրնանք տանիլ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՄԲ, իրարու հանդէպ ԱԶՆԻԻ ու ՇԻՏԱԿ ըլլալով: Եւ անշուշտ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ՃԻՇԴ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ մշակելով: ՍԱ ՉԷ՝ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐԸ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



**Մանկութեանս առաւօտէն արեւալոյս շող մը մնաց,
Որ միշտ ցաթեց իմ ճամբէքին, մանկան զուարթ ծիծաղին պէս,
Զթողուց որ մուրձ ամպերը գորշացնէին սիրտս պայծառ,
Որ բաբախեց սիրալոյսով, ցրեց ամպերն իր երկինքէն...**



.....

Լայն աշխարհի լայն հողին մէջ, ինծի համար մի սրտաչափ
Տեղ է միայն լոկ յատկացուած, մէկ կողմն՝ անդունդ է, խորխորատ,
Միւս կողմը լեռ սրագագաթ, ուր արծիւներ կը խոյանան,
Զիս կը կանչեն վեր ճախրելու երկինքն ի վեր, ազատաբաղձ:

.....

Ու երբ սրտիս կրակը մարի ժամանակի մոխիրին մէջ,
Ես անթոքոցով պիտի խառնեմ մոխիրը դեռ տաք ու հրկէզ
Եւ վստահ եմ պիտի գտնեմ անթեղուած կրակ դեռ բոցակէզ
Ու պիտ' տաքնամ անով գոնէ՝ ձմեռնաշունչ օրերուս մէջ:

.....

Հայրենիքը ոգեղենն է,
Որ դարէ դար քեզ շաղկապէ
Քու պապերուդ, արմատներուդ,
Հայ հոգիին խորհրդալոյս...

.....

Թէ հայրենին պիտ' զօրացնես,
Միրոյ շաղախ պիտի դնես՝
Անոր ամէն մէկ թիզ հողին,
Տքնանքին հետ քու ոգիիդ...

.....

Ներքին ձայնիդ միշտ ունկն դի՛ր,
Հոն կը գտնես ձայնը ճիշդին,
Հազար աղմուկ հնչեն ունկիդ,
Մի՛ կորսնցներ ձայնդ ներքին...

.....

Ճամբադ քալէ՛ շիտակ, ուղիդ,
Ազատ խօսքիդ տէրը եղի՛ր,
Մի վրդովուիլ թէ շատ-շատեր
Ազատ միտքդ չներեն քեզ...

.....

Ո՛ր ալ երթաս, հայրենիքն է
Քու հարազատ սուրբ օճախդ,
Հոն է միայն որ կը գտնես
Իրաւ հոգիդ, ինքնութիւնդ:

.....

Մաքուր մնաց իմ գրիչս,
Մաքուր մնաց խօսքս, խիղճս,
Գուցէ սխալ դարուն ծնած՝
Որբ իտեալին մնացի կառչած...

.....

Սիրոյ պակասէն մի բռն ենք դարձեր,
Կոտորակուեր ենք միշտ բաժա՛ն-բաժա՛ն,
Ու դաս չենք քաղեր այս քանի դարեր,



Ե՞րբ պիտի դառնանք ազգ միասնական:

.....

Պիտի փնտռես ճիշդ հայելին
Ծուռերուն մէջ ակնախտիդ,
Ան է ցոլքը ճշմարիտին՝
Կեղծերուն մէջ խաբեպատիր...

.....

Սպասումով մենք կ'ապրինք, կանք,
Ո՛ր տարիքի մէջ ալ ըլլանք:
Սիրտը սպասում թէ չունենայ,
Կրնա՞յ տրոփել դեռ կենսավառ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ